

ՄԻՔ. ԿԱՐԱՎԱՐ

ԿՐԻՏԻԿԱ

891.99.092.Պալշան

Ղ-19

ԱՐՄԵՆԻ

1840

ՅԵՐԵՎԱՆ

6



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ Ք.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

МИКАЭЛ НАЛБАНДЯН

КРИТИКА
СОС И ВАРДИТЕР
НАЦИОНАЛЬНЫЙ РОМАН
Г. ПЕРЧА ПРОШЯНЦА, 1860. ТИФЛИС

Под редакцией ОВИКА МЕЛИКЯНА
Комментарий АР. МКРТЧЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН
1940

ԽՈՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՂԵՄԻՒ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ

891.99-0927 հոսյան

7-19

ՄԻԱՅՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԿՐԻՏԻԿԱ

ՍՊՍ ՅԵՎ ՎԱՐԴԻԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Թ. ՊԵՐՃԻ ՊՈՌԵԱՆՑ, 1860. ԹԻՖԼԻՍ

ԽՄԲԱԳՐԱԿՐՅԱԿ ՀԱՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻ
ԿՈՂԵՄԻՒԹՅԱՆ ՀԱՅ. ՄԿՐՏՉՅԱՆԻ

ԱՐՄԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1940

10 JUL 2013

70.860

Տպագրվում և ԽՍՀՄ Գիտությունների Ակա-
դեմիայի Հայկական Ֆիլիալի նախագահության
վորոշմամբ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Ծննդյան 110-ԱՎԱԿԿԻՆ
К 110-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
МИКАЭЛА НАЛБАНДЯНА



(Սիրական յեղբոր, Խ. Պ. Ռտ...ին նվեր)

Մի թէ, որ ննջիցեն այլ ոչ ևս
յաւելուցուն յառնել...

Սաղմոս Դավթէ
Խ. համար 9

Ազգային սեփական դպրությունը եյապես հիմնվում
է ազգային բանաստեղծության վրա և այնպիսի աշ-
խատությանց, վոր հայկական հոգու բղխվածք լինելով
հայ ազգին եյին վերաբերվում դարձյալ Ընդհանուր
մարդկային գիտության վերաբերյալ գրքերը, թեև այն,
մեծ պատիվ են բերում մի ազգի, յեթե սա հարուստ
եր այդպիսիներով, այնուամենայնիվ այդ գիտություն-
քը մի վորեկցե ազգի սեփականությունք չեն, այլ բո-
վանդակ մարդկության, թեև նոցա մշակողքը միայն
մի քանի առաջադեմ ազգեր յեղած լինելուն: Ազգերի
սեփական դպրության մեջ, այսինքն նոցա բանաս-
տեղծական գործերի մեջ յերեսում ե նոցա հոգին, նոցա
վարք ու բարքը և այլ այնպիսի բարակ և քնքույշ
բաներ, վորի համար պատմությունը տկար ե և կարուտ
բանաստեղծության ոգնության:

Թե ինչպես ե յեղել մեր ազգի շատ հին ժամանակ-
ների բանաստեղծությունը մենք թեև վոչինչ գիտենք
դրական, բայց և այնպես ընդհանուր պատմության և
ընդհանուր դպրության պատմության տված լուսով,—
վորովհետև որինավոր բանաստեղծությունը հետեանք
ե մի որինավոր կապակից և պատմական կյանքի, իսկ

մեր հայերիս կյանքը, վոչ թե առասպելների ժամանակ, այլ նաև շատ հետո, յերբեք չեւ ունեցել մի կանոնավոր և լոգիկական աճելություն և կերպարանադործություն,—դժվար չեւ հասկանալ, յեթե միայն չկամենայինք անձնախաբեյությամբ և կամավոր կուրությամբ յերևակայել յերբեք չունեցած պարծանքներ, վոր թե պատմության հայտնի ժամանակներում, յերբ քիչ շատ ձեւք ու վոտք ուներ Հայաստանը, մենք չենք ունեցել մի որինավոր, յեկրտպական հասկացողությամբ, բանաստեղծություն, այն առասպելական ժամանակների յեղածները պիտի լինեին շատ հասարակ և խեղճ բաներ: Թողնելով այն պարոններին, վորոնց սիրելի յեւ այդպիսի բաների պարապունքը, մեր հին, վորպիսի և իցեւ, կամ թե բնավ չեղած բանաստեղծությանց ուսումնասիրությունը,—մենք պարտականություն ունինք հրատարակել, թե պ. Աբովյանցի «Վերք Հայաստանին» և Սոս և Վարդիթերը հիմք դրին արդյան ազգային վիպասանության*: Այս, արդարությունը նույնպես պարտք ե գնում մեր վրա բարձրաբարբառ հոչակել պ. Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցի «Տեր Սարդիս» մակագրով վիպասանությունը, վոր տպվում եր 1861 թվականի Հյուսիսափայլի մեջ, և վոր ափսոս և

* Զենք մոռացած «Նահապետ» սառագրությամբ է. Դւռնդ Ալիշանյանց արժանավոր գարդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը. — «Պատուն Ավարայրին, «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար վոտանավորքը, բայց այստեղ չհիշեցինք, վորովհետև արձակ բանաստեղծության վրա յեր մեր խոսք. ապա թե վոչ չափաբերական քերթվածոց մեջ, արժանավոր վարդապետը ախոյան չունի. յեթե մենք լրենք, Ավարայրի ըլքությունը կխոսի: ...«կանչեւ պլառվիկ, կանչեւ հոգեծայն. արդյոք գուխտ մահուն սուրբ հիշե՞ Վարդան»...

հազար ափսոս, հեղինակից կամ՝ Հյուսիսափայլից կախում չունեցող պատճառներով ընդհատվեցավ: Մեր կարծիքով այդ գործին ավելի պատշաճ եր «Քաղցկեղ Հայաստանի» անուն ունենալ, քան թե կապվիլ մի պարեկոտավորի անունի հետ, վոր շատ կարելի յեւ թե անաջողության ել պատճառ դարձավ: Յեթե յերբ և լինի այդ կիսատ մնացած գործը ավարտվի, միւնույն հոգով և հմտությամբ շարունակվելով, այն ժամանակ մեր նոր գպրության մեջ այդ գործը այն տեղը կունենա, ինչ տեղ ուուս դպրության մեջ ստացել և «Մեռած անձինքը»: Թող կանչիկ ընդունի մեր սրտանց շնորհակալությունը հայկական Գողըլը, վորին մաղթում ենք մի փայլուն գալցք:

Մենք մի ուրիշ աշխատություն ել գիտենք, հայ հեղինակի, հայոց կյանքից բղխած, մի շատ կենդանի և շատ որտաշարժ գործ, բայց, ձախողակի, հայ գրով թեև այլև այնպես տաճկերեն գրած: Մենք խսում ենք «Ագապի» մակագրով ազգային վիպասանության մասին: Խըթին տաճկաբանությամբ և գրած և մեր փոքր և շատեւ տաճկիտությունը տկալը և այդ գիրքը թարգմանելու համար. (այնտեղ շատ արաբական կամ պարսիկ բառեր կան, վոր մենք չենք հասկանում), բայց և այնպիս, գործի սկզբից մինչև վերջը մեր զմայանքը աճելով աճում եր, յերբ կարդում եցինք այն հոգեշարժ, սրտաշարժ և տխուր անցքի պատմությունը. ուր ազնիվ որիորդը — Ագապին — զոհ է գնում գիշերագեմ մարդոց դժոխային կրօնամոլության և զավաճանության, վորին կարող եր նախանձել և ինքը կոյլան, ուր ազնիվ սիրահարը — Հակոբ աղան — նույնպես զոհվում է մի ջլային տենդի, վոր առաջացել եր Ագապի որիորդի սդալի վախճանի պատճառած հարվածից: Բնա-

կանությունը և արվեստը իրար հետ լծորդված են այդ
գործի մեջ։ Վերք Հայաստանին չունի այնքան արվեստ։
Սոս և Վարդիթերը Վերք Հայաստանուցն ել քիչ ունիր
թեև ունին բնականություն։ Աղապին, արվեստի կողմից
կարող և դիմանալ խիստ քննության։ Բնականու-
թյան կողմից և հոգեբանական հարազատության մա-
սին շատ բարձր և յելլոպական ամենավուր վիապատ-
նություններից։ Մենք ցավում ենք և ցավելով չենք
կարող չմեղադրել մեր պոլսեցի յեղբայրակիցքը, վոր
մինչև այժմ հայերեն չբարգմանեցին այդ գործը։ Թե
ի՞նչ պատճառով տաճկերեն ե գրել դորա հեղինակը,
կամ թե ով և այդ ազնիվ հեղինակը, մեզ հայոնի չե-
գիրքը տպած և անանուն։ Յերանի թե մեկ որ հայե-
րեն կարդայինք այդ հոյակապ և ազնիվ գործը։ Ավե-
լորդ և ասել, վոր միայն Տաճկաստանի առաջնա-
կարգ հայ գրագետի բան և նորան թարգմանե-
լը. մինի թե ուսւիացի հայերը փորձ փորձեն։

Բայց մենք հեռացանք մեր ուղիղ ճանապարհից.
մեր գրության խորհուրդը և Սոս և Վարդիթերի քըն-
նությունը։ Մենք քանի ու քանի անգամ կարդացինք
այս գործը և ուշադրությամբ. գալիս ենք այժմ անա-
շառապես հրատարակելու մեր կարծիքը այդ ուշատու-
թյան մասին։ Յեվ իրավ վոր, հարկ չկա կողմանապահու-
թյան. այնքան զուտ և անհակառակելի արժանավո-
րություն կա Սոս և Վարդիթերի մեջ, վորի այս ու
այն տեղ, այս ու այն կողմից յերկցած թերություն-
քը, հեղինակի անուշադրությունքը՝ մի փոքր ել հեղի-

* Ալեքսանդր Դյումայի «Գոթական մատուռն» են թարգմա-
նում. արդարեւ «Մարգարեն իր գալարի մեջ պատիվ չունի»։ Ի՞նչ
առես։

նակին շրջապատող աշխարհի ազդացքը, յեթե նաև
ամենայն խստությամբ դրվին անդամահատական գա-
նակի տակ, այնուամենայնիվ, գործի ընդհանրական
ամբողջությունը և եյական արժանավորությունը կմնա
և կմնա։ Յեվ վորովհետեւ այս կողմից յերկյուղ չկա,
վորովհետեւ մեր անաշառ քննությունը բնավլ յերբեք
չպիտի նսեմացնե նորա արժեքի և քանքարի փայլը,
այս պատճառով մենք հաստատ վորոշում ենք ամեն
նորա արժանավորությունը խստավանելով, տեղ-տեղ
յերկցած անհարթությունքը չմոռնալ։ Հաստատ հավա-
տացած ենք և հույս ունինք, վոր մեր անկեղծ ու ար-
դարադաս, թեև խիստ և անկաշառ քննությունը, յե-
թե համրուրելի հեղինակին ոգուտ չբերե, մաս գոչ
յերբեք։

Համարձակ կարող ենք ասել, վոր արգո հեղինակը
իր նկարագրած կյանքի վերաբերությամբ, վոչ ավելի
և վոչ պակաս, մի անխարդախ հայելի յե, ուր ցոլա-
նում են բնության ճառագայթքը։ Մենք նայեցանք այդ
հայելու մեջ և տեսանք ինչ վոր ցույց եր տալիս նա.
և ծանոթ լինելով մեզ նորա ցույց տված բնությունը,
վկայում ենք հայելու արժանավորությունը։ Պ. Պառ-
շյանցը պրծավ իր պարտքից, այժմ մերն և կարգը նո-
րա համար հայելի դառնալ և ցոլացնել հեղինակին նո-
րա սեփական գործը. այս իր տեսակի «Ճառագայթների
կրկին բեկրեկումն» եւ Հույս ունինք, վոր մեր ապակու
յերեսը նույնպես հարթ լինի և նորա թանձրությունը
զուգահեռաբար հավասար. հույս ունինք, վոր վոչինչ
չկարողանա դավաճանել ճշմարտության։ Մեր հատ-
վածը նույնպես շպար չունի, ինչպես մեր քննության
առարկան—Սոս և Վարդիթերը։

Եատ կարդալ հարկավոր չե Սոս և Վարդիթերը,

իմանալու համար, թե ինչ տեսակ հեղինակի հետ և կարգողի գործը. նորա հոգու վոսկեդարյան անմեղությունը փայլում է ամեն տողի մեջ: Այդ մի շատ բնական գործ և և իր պարզությամբ ավելի նմանում է այն փարելի բնական աղբյուրներին, վորոնց ջուրը առանց մարդկային ճարտարության, առ ունց ջրմուղների, առանց մարդարոնյան շատրվանների և հոռվմեյական ազուգաների վազում և սարի լանջով և իր գնացքի մեջ, իր դիպած ամեն մի խոտի, ամեն մի թփի տերենները պատառում է աղամանդյա կաթիներով. և առանց մի նեղ սահմանի մեջ փակվելու ազատորեն վազում և գեպի ուր վոր քաշում և նորան բնության որենքը, հովություն, զովություն և պտղաբերություն տարածելու համար:

Սոս և Վարդիթերը դրած ե մեր առջեր նախ և առջ վորպես բանաստեղծություն, վորպես վիստասանություն. բայց վոչ ձեմ մտածությունը և վոչ դեպքերի դասակարգությունը կարող են, գոնե մասնալորապես, համեմատվիլ նորա պարզ, անզարդ և բոլորովին անխարդախ և բնական նկարագրությանցը: Խոսք չկա, վոր այդ գործը բանաստեղծություն ե. բայց բանաստեղծը վորտեղ ուղղակի խոսում է բնության լեզվով, ուր միայն լոկ թարգման ե լինում բնության և ստորագրում է այն, ինչ վոր այժմ ամեն մարդ կարող եր տեսնել և ստուգել, հոյակապ արժանավորություն ունի. իսկ ուր մեկ վայրկյան անգամ, արգո հեղինակը բնությունը թողնելով, ոգնություն ե խնդրում յերեակայությունից և հնարաստեղծում է անբնական բաներ, այնտեղ գործի արժեքը թուլանում է և անհամեմատ թուլանում է:

Ընդհանրապես, նկարագրված բնավորությունքը

ապշեցի հարազատություն ունին. բայց յերբեմն ավելի զորություն կամենալով դնել գլխավոր (համարված) ներգործողների մեջ և անդադար նոցա մոտ ուզելով պտուտ գալ հեղինակը վոչ միայն շատ տեղ հարեանցի և յերկու խոսքով և անցնում յերկրորդական ներգործողների մոտից, ինչպես են Անուշը, Արշամը, վոր Գեղամ ել և ասվում, Գարեգնի մայրը և այլն և այլն, այլ շատ զգալի կերպով կեղծ վիճակի մեջ և դնում իր գըլխավոր ներգործողներին, ինչպես են, Սոսի թագավորությանը (Շահ-մար) բռնելը, Սոսի քարափի գլխին աղոթեց և այն: Հայտնի յե, թե գլխավոր ներգործողների վերաբերությամբ, մի առնված միջոցում, բնականի նկարագրությանց պաշարը գործ դրվելուց հետո, յեթե հեղինակը չպարապի յերկրորդական բնավորությանց կերպարանագործությամբ և նոցանից նոր ուժ և նոր զորություն չառնուիր գլխավոր ներոսի համար, նախ վոր այդ հերոսը տկարանում ե, վրա յերկու, վոր յերկրորդական ներգործողքը շատ շիկանում են. թեև հեղինակի նպատակը և ընդհանուրի վարքն ու բարքը ցույց տալ բայց յեր այդ վարք ու բարքի այս կամ այն մոմենտի համար թանձրացնում է այս կամ այն գլխավոր բնավորությունը, հայտնի յե թե պարտք կա նորա վրա բնության սահմանից զուրս չբերել նորան:

Նկարագրությունը կյանքի այնպիսի յերեսոյթների և անցքերի, վորին մասնակից և բազմությունը, վորպիսի յեն Մողնու կամ Վարդավառի ուխտերը, վիճակը կամ «Հավկը շուռ տալը», հարսանիքը, (թեև այս վերջինի մեջ, Սոսի և թուրքի մենամարտության նկարագրությունում, Սոսը գարձյալ դուրս ե գալիս իր բնական շրջապատից և բնությունը դառնում է առասպել) շատ ընտիր են և վսեմ. իսկ այնտեղ, ուր բնա-

վորությունքը ներգործում են առանձին առանձին և
ուր, նոցա ներգործություններից ավելի, ընթերցողը
պիտի իր հայացքը ուղղե դեպի հեղինակի խոսքերը,
վոր առանց ուրիշի բերան տալու, ինքը հեղինակն և
խոսում, այդ տեղերում բնությունը տկարանում ե և
հեղինակի յերեակայությունը և հնարագիտությունը
ոգնություն չեն տալիս նորան:

Պ. Գ. Տեր-Հովհաննիսյանցի «Տեր Սարգիս» գոր-
ծում, մի հոյակապ արժանավորությունն ել այն ե, վոր
նա բացի մի քանի անհրաժեշտ պատմական ծանոթու-
թյուններից և արտաքին նկարագրություններից իր
ներգործողների հոգեբանական կամ բարոյական վոր-
պիտությանց մասին բնավ իր բերնից խոսելով հանդես
չե գալիս, ներգործողքը իրենց խոսքերով կամ գործե-
րով ցույց են տալիս մեզ իրենց ով և ինչ լինելու: Մեծ
տարրերություն կա տեսնելու և լսելու մեջ: Այն հեղի-
նակը, վոր ինքը բան չե ասում մեզ, այլ մարդիկ ե
հանում մեր առջե, ներգործել տալով նոցա,—նա ցույց
ե տալիս. ել տեսնելուց հետո լսելու կարոտություն
չկա: Իսկ այն հեղինակը, վոր վոչ ամեն բան ցույց ե
տալիս ներգործողների ձեռքով, այլ յերբեմն իր բեր-
նից ե պատմում նոցա մասին, նա լսեցնում ե, վորի
տպակորությունը ավելի թույլ ե, քան թե տեսնելու և
շոշափելու տպակորությունը:

Սոս և Վարդիթերը, յեթե ուղիղն ասենք, պիտի
նայի վորպես ամբողջ մի ընկերության, վորպես ամ-
բողջ մի գեղի նկարագիր իրեն իսկ արգո հեղինակի
խորհուրդն ել այս ե, ինչպես ծանոթաբանում ե հառա-
ջարանի մեջ: Յեկ յեթե լավ ո շաղբությամբ նայենք
այս գործին, կտեսնենք, վոր նորա մեջ դյուցագուն
գյուցազնուհի ասվածները իսկի մյուս ներգործողներից

ավելի պաշտոն չունին, բացի նորանից, վոր փոթորի-
կը նոցա գլխին և գալիս: Սոս և Վարդիթերի մեջ կյան-
քը հասարակաց ե. ավելի խմբերը հանդես ունին, քան
թե նորանց կազմող անհատքը: Պաշտոն ունին սովո-
րությունքը և ծեսերը, վորպես բազմության հասկա-
ցողության արդյունք ավելի, քան թե այդ սովորու-
թյանց և ծեսերը կատարելում ներգործող այս կամ այն
անձը: Սոս և Վարդիթերը կարդալու ժամանակ, կար-
դացողի միտքը չի կապվիլ լոկ Սոսի կամ Վարդիթերի
հետ, այլ և շատ տեսակ բնավորությանց և անցքերի
հետ, ուր, յերբեմն, հազիվ հազ մի աննշան պաշտոն են
ստանում Սոսը կամ Վարդիթերը: Այս գործի մեջ բա-
նի ընթացքը առաջ ե գնում առանց Սոսից և Վարդի-
թերից կախում: ունենալու: այնուղի հավասարապես
հասարակաց և ներգործության պաշտոնը: Յեթե պ.
Պոռշյանցի գործը համեմատենք նկարչության հետ,
պիտի պեյզաժ ասենք նորան: Հեղինակի գլխավոր գա-
ղափարը Սոսը և Վարդիթերը չե, այլ ընդհանուրի
կյանքը, ծեսերը, սովորությունքը, ավանդությունքը և
հասկացողությունը. իսկ Սոս և Վարդիթեր անձնավո-
րությունքը առնված են վորպես ոգնական: Սոս և
Վարդիթերը մենք չենք կարող ընդունել վորպես մի
սիրապատում վիպասանություն:

Այս խոսքերը չեն տկարացնում Սոս և Վարդիթերի
արժանավորությունը, այլ միայն ցույց են տալիս, և
վոր մենք նկատում ենք մեծ ուրախությամբ, թե պ.
Պոռշյանցի քանքարը ավելի զրություն և ավելի ուժ
ունի ընդհանուրի կյանքի և բնականի ստորագրելում:
մինչդեռ շատ ուրիշ բանաստեղծք բնականի պակասու-
թյունը աշխատում են յերեակայության ոգնությամբ, և

վոչ միշտ աջողությամբ, ծածկել: Պ. Պոոշյանցը յերբեք կարոտ չե այդ ոգնության, յեթե հավատարիմ նաև իր քանքարի բնավորության, նորա ստորագրությունքը այն աստիճանի ուղիղ, կենդանի և հարազատ են, վորթե մանր մունք յերեակայության անաջող արդյունքները անհետանալու լինին, Սու և Վարդիթերը կարելի յե ընդունել վորպես լոկ և պարզ նկարագիր բնության, ուր բնականաբար և անբռնադատ փայլում են նկարագըրված ընկերության կյանքը, հոգեբանական ունակությունքը, բարոյական և ընկերական հասկացողությունքը:

Անցուշտ, հեղինակի անփորձությունը և նորաբողբոջ յերիտասարդությունը պիտի թողվին իրենց հետքը այդ գործի վրա, առանց դորան չեր մինիլ բայց աջողակի, ինչպես արդեն ասացինք, այդ թերությունքը և խորդուբորդքը հարթվում են, յերբ արժանավորության բլուրները բարձրացնում են իրենց գլուխը: Այսպիսի թերությանց և հակասությանց կարգ ենք դնում մենք, որինակի համար, հետեւյալ մի քանիքը:

Այն միջոցին, յերբ Վարդիթերը վարում ե մի երաված սիրունու պաշտոն, և վորի սերը արդեն յերկու տարի յե, վոր մաշում ե նորա սիրտը և հոգին, դեռ նոր և փոխել ատամները, դեռ նոր և մտել տասնուամբ տարեկանության մեջ: Սորանից, յեթե յերկու տարին հանենք, այն ժամանակ կտեսնենք, վոր Վարդիթերը ութը լման իննի մեջ զգացել և սիրու կըակը: Վարդիթերին վերագրված բոլոր ներգործությունքը, հոգեբանական ախտերը, ցանկականի և սիրու, գիտակցաբար մինչև անձնապորության աստիճան բարձրանալը, շատ խելացի գատողությունք, տեղ-տեղ ել կանացի սեռին սեփական անձնապահ խորագիտություն, այս ամենը,—

տառամ ենք,—զարմանալի ներհակություն ունին այն հասակին, վոր նա ունի: Գիտենք, վոր կան աշխարհներ, ուր տասը տարեկան աղջիկը արդեն մայր ե, բայց այդ աշխարհների սահմանքը փակված են Խեցգետնի և Այծեղջուրի մեջ. արարատյան գավառը, վորի ցուրտը առակ և յեղած հին աշխարհում, չունի հիշված աշխարհների ազգեցությունը. այնտեղ տասնումի տարեկան աղջիկը զեռ տղա յե, ուր մնա ութը կամ իննը տարեկանը: Յեվ այդ հասակում վոչ կազմվածքի բնական աճելությունը, վոչ իմացականի և զգայականի ախտերը կարող են պուրապատշաճ լինել այն պաշտոններին, վոր Վարդիթերը ունի այդ գործում: Բացի սորանից, ուրիշ կողմից նայելով, դարձյալ հարկավոր եր, վոր այն միջոցին ավելի հասակալոր յեղած լիներ Վարդիթերը, նորա հայրը—Հեթումը անատամ ծերունի յե, իսկ նորս մայրը պառափ: Յեվ վորպես թե հերիք չեր, վոր այս ծերունիքը տասնուամի տարեկան աղջիկ ունեցին, դեռ նորանից հետո ել ծնել են Փափակը, վոր Գարեգնի մոտ և սորվում: Յեվ զարմանալի յե, վոր ինչպես մեզ ե թվում, ոլ. Պոոշյանցը առանց հարկի և ստիպողության ընկել ե այս հակասությանց մեջ: Յեթե մտածենք, թե նորա գիտավորությունը յեղել ե պահարակել այդ կողմերի վաղ ամուսնությունը իդական սեռի, այդ բանում ել անաջող ե. պատճառ, յեթե ութը, իննը տարեկան աղջիկը սիրահարվում ե և տասը կամ տասնումի տարեկանը պատրաստ և սիրու համար իր անձը զոհել ուրեմն, վաղ ամուսնությունը բնականաբար զգալի կարություն ե, յերբ հիմնվում ե նա իմացական և զգայական պահանջողությանց վրա: Բայց մենք չենք տեսնում մի պախարակության նշմարք և



համարում ենք այս մի ակամա սխալանք, յեթե միայն
մենք չենք սխալում: Գիտենք, ճեղինակը կամ շատ
ուրիշներ են, իրբե իրողություն կարող են իմ առջեր
դնել այն բանը, թե արարատյան աշխարհում շատ ան-
գամ պատկել են 11—12 տարեկան աղջիկ, ուստի, վոր-
պիս թե անրնական չե Վարդիթերի հասակը: Պատկել.
ինչի չե, կարելի յե, մենք լուծ ենք մեր պատամերից,
վոր սորանից 60—70 տարի առաջ, Նոր Նախիջևանի
մեջ ել յեղել են այդպիսի անհոգնի պատկեր, ընու-
թյան տարաժամ բռնաբարությունք. բայց, այն ժա-
մանակ, թող ներեն մեզ, Վարդիթերը չե կարող ունե-
նալ այն բնական և հոգեբանական հատկությունքը,
վոր վերապրում են նորան և վոր անշուշտ հարկավոր
եր տալ նորան, ամոլիների մեջ սիրո գործի գորգակէ իուը
պահելու համար: Հաստկի այն անաջող առքը* խիստ
անախորժ տպավորություն և անում կարգացողի վրա:
Ասես թե Հայուստանի աղջիկները հին կամ նոր Բարե-
լոնների** աղջիկներն են, ասես թե Բորբոքուն Շա-
միրամի թոռներն են:

Մարդու զեղջն ե գալիս, յերբ տեսնում ե, թե տաս-
նումի տարեկան աղջիկը ընկնելով իր սիրականի գիր-
կը և համրութելով նորանից զգում ե, թե «ոխար թիզ
յեղ ե կանգնում նորա սրտին» (յեր. 26): Պիտք չե
նույնական մոռնակ, վոր յելրոպական մայրաքաղաք-

* Առնում բայց արմատը առ, հոգն առք, վորպես առումն.
մենք այս ումն ման հոգովումից փախչելու համար այս զիտ-
վածում, առքը պիտի գործ գնանք վորպես առումն. ազգը շատ
տեղ նոր յն նշանակությամբ գործ և ածում առքը:

** Նոր Բարելոններ ասելով իմանում ենք յելրոպական մեծ
քաղաքները:

Ների մեջ անչափահաս աղջիկների ավերանքը* բնավ
յերեք ցանկականի կամ սիրու բնական հետեանք չեն**,
այլ մեծ մասով արտասվելի աղքատության արդյունք:
Շատ, աղքատ կամ որական հացի կարոտ ծնողք վա-

* Այս ավերանքի սարսափելի որինակները կարելի յե տեսնել
կոն ֆոշե Փրանսիացու «Աւրվագիծք Անգլիո» անունով գործի
մեջ, ուր քամինելի բաներ հանդես են հանած: Այստեղ կան քա-
ղաքներ, ուր ամեն 100 աֆրոդիտյան ցավով վարակված անառակ
կանանց, և հատը մի չե տասը տարեկան անչափահաս աղջիկներ
են: Նույն զրքի մեջ տեսնում ենք հետեւյալ վկայությունը. «Եթե
հիվանդանոցներից մրնի եղ յստ տեսա հինգ անչափահաս և մա-
նուկ աղջիկներ, վորոնք հիվանդ ելին ամօթալի ցավով: Առաջինը
13 տարեկան եր, յերկրորդը 12, յերրորդը 11, չորրորդը 9 և հին-
գերորդը 8 տարեկան: Յերեքը այս աղջիկներից կորուցել ելին
իրենց անմեղությունը իրենց մոր տանը և կորուց ել ելին
չափահաս մարդուց ներգործությամբ: An Exposure
of female prostitution, by W. Lagan, City missionary. Ահավասիկ
արդարե, համբակք անլուայ և անաղելի խակակութ պարայն խա-
կութեան, յեթե յերանելի նարեկացին յեկրոպացի վորպաները
տեսներ, Յեղեկիելի առակավոր յերկու քոյլյերը կրմունար Յեղեկա-
տոսի մեջ պատմառ, սոքա առակ չեն, այլ լույս յերեկով զործված
իրողություն: Թուհ:

** Մենք խօսում ենք ընդհանրապես, ազա թե վոչ կան բա-
ցառությունք, մանավանդ այն տեղերում, ուր անչափահաս տղայք
յերկու սեփակն ել միասին, սկսած 5—6 և յերբեմն ավելի մասաղ
հասակից աշխատում են ջերմ գործարաններում: Մի կողմից քանի
տարեներով անդաղար և միասին ներգործող ջերմությունը, մյուս
կողմից պժգալի որինակներ: Վոր նորա տեսնում են գործարան-
ներում, զբանեցուցիչ և անարժան խոսքեր, վոր լսում են այն-
տեղ, ավերված չափահաններից, շատ անգամ, այն, ստուգապես
զարթեցնում են նոցա զգայական ցանկությունը, թե և տարաժամ
և կազմվածքին մահաբեր հարված զարտասաւելու համար: Անգլիո
մեջ, այս վիճակին պատկանած յերկու սեփի յերեխայքն ել ար-
դեն 11—12 տարեկան հասակում կորուցած են վազուց իրենց ան-
գամությունը:

ճառել են իրենց աղջիկները, յեթե թողունք վոմանց մոտ շուայլության կամ ունայն պճնասիրության համար արծաթ ճարելու բարբարոս խորհուրդը*, յեթե թողունք գժոխային պառավների գավաճանության զոհվածները: Ո՞հ, այդ պառավները ամեն որ յեկեղեցի յեն դնում, և ի՞նչպես ջերմեռանդ աղոթում:

Այս, սարսափելի հանցանք և ծնողքի կողմից, յերբ նոքա անառակության են ծախում իրենց զավակը. բայց ավելի թեթև և այն գաղանական գործը, յերբ ծնողքը յեփում են և ուտում են իրենց զավակները: Հայտնի յեթե այս ել պատճեռում ե սովի կամ պաշարման ժամանակ: Յեկ մեր ազգի պատմական հիշտակարանների մեջ տեսնում ենք այսպիսի զարհուրելի որինակներ, «ձեռք կանանց ողորմածաց եփեցին զման-կունս իւրեանց և եղե նոցա ի կերակուր», ասում և պատմիչը. (Հովհ. կաթ. Պատմ. Հայ. Մոսկվա. յեր. 143): Անձար աղքատությունը սովից ու պաշարումից պակաս չե: Արտասկել պիտի քան թե սրանեղել այն դժբախտ ծնողների և ավելի գժբախտ աղջիկների վրա:

Մենք հերիք համարում ենք վորքան խոսեցանք հա-սակի մասին, վորովինետե ձանձրակի կարող եր լինել

* Ֆրանսիա մեջ մի մայր վաճառեց իր տաններկու տարեկան աղջիկը անառակության, և յերբ յերեխայն, բնական աղդեցու-թյամբ աղքալով այս անորենությունից ընդգիրմանում եր, անորեն մայրը այնպես զարկեց նորա քթին բերնին, վոր խեղճ յերեխայի յերկու ատամը միասին զուրս թափեցան: Ալատիսի որինակներ խիստ շատ են Անգլիա մեջ՝ ուր յերեխայր, կերակի որերը փողուցում խաղալու համար, բանտարկվում են, ուր քաղաքներ կան, վո-րոնց մեջ կիրակի որերը չե կարելի անպատճ սուլէլ! (Լեոն Ֆուշ): Հեանակի պարզ և անժխտելի որինակներ են սոքա, թե կըո՞նը յեր-բեք չե կարող, միայնակ, բարոյականություն արմատացնել մի առգի մեջ:

ընթերցողին, յեթե մենք անդամագննաբար, Փիզիոլո-գիկաբար և հոգեբանաբար քննելինք այստեղ իդա-կան սեռի անհատների անելությունը և սորա որենքը, քայլ առ քայլ յերթալով նորա յուրաքանչյուր գլխա-վոր մոմենտների քամակից մինչև այն կետը, ուր ան-հատի կազմվածքը ստանում եր իր տեսակի հարատեռ-թյունը պահպանելու բնական ունակությունը:

Իբրև թերություն կարելի յե տեսնել և Արշավրի բնակորությունը, կամ մանավանդ նորա պաշտոնը: Գործի կատաստրոֆը, յեթե ուղիղն ասենք, գլխավո-րաբար հիմնված է Արշավրի զրժողության վրա: (Արշա-վրը յեթե չդրժեր, կարող եր Տիրանի մեքենայքը խայտառակել): Յեկ այդ մարդը, վոր առաջ այնպես սիրով ընդունում եր Սոսի առաջարկությունը, սրտանց յերգնում եր, վոր նորան տա իր քույրը, հանկարծ փոփովում և դառնում է Սոսին մահաբեր թշնամի: Թե ստուգապես Արշավրի միտքը իր քույրը Սոսին տալ եր և վոչ խաբել, այդ պարզ յերեռում և չեթումի և իր կնոջ խոսակցությունից (յեր. 203), ուր Համասիյուռը մեղադրանքով խոսում է Արշավրի մասին, թե առաջ շատ հորդորել ե, վոր վարդիթերը Սոսին տան, իսկ այժմ հետ և կանգնել իր խոսքից և ել չե ուզում: Ար-շավրի խոսքը փոխելը և նորա զրժողությունը մեծ պաշտօն են վարում գործի մեջ և յեղելի վերջի թեկե-րը մի մասնով լարվում են և կառավարվում են նորա ձեռքով, կամ, նորա աղդեցությամբ: բայց, չնայելով այս բոլոր բաների վրա, մենք բան չգիտենք Ար-շավրի նենգության կամ զրժողության պատճառի մա-սին: Գործի բովանդակության մեջ չկա տեղ, ուր հան-գես ունենար այս դավաճանությունը և կապված միներ վիպասանության ընթացքի հետ վնասի կապով: Փա-

փակի հայտարարությունն ե բոլորը, ինչ վոր կա (յեր. 125): «Գիտես, ինչ կա, — առում ե նա Գարեգնին, — բանը փոխվեց, ճար ունիս տես, Արշավրի միտքը ընկանք հմիմի թե ծուռն ա ելել թե զուզ ա ելել ձեր հետ, չեմ իմանում, համա հիմի իմացվեց. երեկվանից գեսը հարիր հետ կոխիլ ա քցել, թե կամ թուրք վեր կուռիմ ինձ կապանեմ, կամ թե չե Սոսին աղջիկ չեմ տալ. յես պտի տամ Զայրմայրի եջմիածնեցի քավորին»: Համաձայն ենք, վոր կոսկիտ, կամ, նախնական և անքաղաքակիրթ կյանքի մեջ բոպեյական չնչին տհաճությունքն անգամ կարող են շատ ավերությանց պատճառ դառնալ և Արշավրը ընդունակ ե, վոր չնչին պատճառով կամենա վնասել Սոսին, կամ վրեժ առնուլ նորանից. բայց, բանը այս ե, վոր ընթերցողը նաև այն չնչին պատճառը, նաև տհաճության մի լոկ նշմարք անգամ չե տեսնում բանի ընթացքում: Հանկարծ լուռմ ե Փափակի հայտարարությունը, վոր ավելի հիշեցնում ե մեզ գրանսիտական «le roi le veut»* խոսքը, քան թե մի բնական յերեսութի պատճառ կյանքի կամ նորա նկարագրության մեջ:

Մենք չենք ուզում իբրև թերության նայել Վարդիթերի մոր անխելք հողիողդությանց վրա: Փարպի գնալու ժամանակ, Համասփյուռք հրապարակով հայտնում ե իր տհաճությունը Սոսի հետամտության վրա. «Արտիս տախտակն են դադել», ասում ե նա (յեր. 92) իր հետի ուխտավոր կին մարդոցը և սպառնքը ե, վոր ել Սոսին չտա աղջիկը: Վարդավառին, ինքնամատուցյ կերպով, հրավիրում ե Սոսին և ուխտի հրապարակում (Հանա-վանքում) համբուրել տալով Վարդիթերին,

նշան ե դնում: Աշնան Մողնու ուխտին, իր մոտ հյուր յեկած կին մարդուն պատմում ե ինչ վոր Սոսի զիտով անց եր կացել, ավելցնելով, թե «Ել չենք տալի իմ աղջիկը»: Թեև այս փոփոխամտությանց պատճառները զբած են անցքի բռվանդակության մեջ, բայց դոքա թույլ են այս տեսակ կտրուկ և վորոշ հատեանքներ ունենալու համար. կամ պատճառքը պիտի ավելի սաստիկ և ազգու լինելին, կամ հետեանքը մի փոքր մեղմ: Բայց մենք ասացինք, վոր չենք ուզում այս բաներին իբրև թերությանց վրա նաև, վորովհետեւ այս բոլորը կարելի յե վերագրել Համասփյուռի անկրթության, վորից սովոր է ամեն բան տառջանալ, ուստի և այնքան անբնական չեն հակասությունքը, վորքան այն, վոր Համասփյուռը վերեռմ հիշած Փարպու ճանապարհին հրապարակով նախատում ե իր գումարը. խայտառակելով և ամենի առաջ հայտնելով, թե յերիտասարդ տղող ձի խաղացնելը, տաղ ասելը և Վարդիթերենց խմբից չհեռանալը բոլոր Վարդիթերի արածն ե: «...Չեք իմանում, ասում ե նա իր ուխտակից կին մարդոցը, — ես մեր փչացածի (Վարդիթերի) արա ն ա քոմմա... խաչն իմն ա, քյարամաթը (զորությունը) յես գիտեմ»: Սուրանից մի վայրկյան առաջ ել, գարձյալ նոյն տեղում Վարդիթերի վրա յե թափում իր ժանգը: «Ա՞խ, ծակծակոտված, սի սըտի աղջիկ. ինչ անեմ, խավարել են որը, վոր զու լիս ընկար. են գշերը հերդ ջաղացն եր գնացել ի՞նչ կիներ (?!): մեզ աշխարհքի միջին թուք ու բերդամ արիր» (յեր. 92): Նայելով Աշտարակի կյանքի ընդհանուր վորդիթյան վորպես նաև բովանդակ հայոց ազգի կյանքի վորպիտության և հայ կանանց ընտանեկան և վորդիտական պատվապահության), մենք չենք կարող թույլ տալ վոր մի մայր այդպես հրապա-

* Թագավորն ե այլպես ուզում (ՓԲ.):

ըակով խայտառակե իր դուստրը, ուր ավելի չնշին քանի համարվում են խայտառակություն և թուք ու բեգնամ են լինում: Մի մայր, հրապարակով այլպիսի խոսքեր իր աղջկա մասին ասելուց հետո, այնուհետև ինչ աղջիկների կարդ ե դնում նորան. սորա վրա հարկավոր եր մի փոքր մտածել: Այն ել՝ Համասփյուռը, վոր սովորաբար նկարագրվում է վորպես մի խորագետ կին. «Սատանի հետի վուն եր պառավը», ասում է հետինակը (յեր. 116):

Հայի պատիվը, վորեւ կերպով, յեթե վոչ բոլորովին փրկելու, գեթ մի մասնով պաշտպանելու համար սոխավում ենք կատարելություն չգտնել Սոսի փեսայի կամ քրոջ դավաճանությանց նկարագրության մեջ: Ասենք, թե Տիրանը վորպես մի անարդ մարդ կարող եր ընդունակ լինել այդպիսի դաժանության. բայց Սոսի քույրը, վոր վոչինչ թշնամություն չունի իր յեղբոր հետ, բնչպես, միայն իր երկա սագրելով, այն խազը կիսադար յեղբոր գլխին: Ավելի հավանական ե, վոր քույրը իմանալով երկա դավաճան խորհուրդը իր յեղբոր ընդդեմ, յեթե չկարողանար հայտնի դեմ դնել նորան, գեթ ծածուկ տեղեկություն կտար իր յեղբորը, առանց ամենենին հոգով սրտով իր երկա դավագրության հաղորդ լինելու: Ազգակցական և քույր-յեղբայրական ընական կապերը այնքան ամուր, իսկ ստանալու կաշառքը մի թշվառ 15 մանեթ. մինչդեռ աղտը և դավաճանության ամոթը գրեթե յեղիպտական բուրգերին հավասար: Զգիտենք թե ինչ մտածենք. միթե հավատանք: Բացի սորանից, ինչ խորհուրդ ունի զուռը կպղել և բանալիքն ել հանել: Սոսին իրենց տանը փակերով ինչ ոգուտ կարող եյին քաղել. մանավանդ, յերբ նա բարկացած զուռը ե թե «դուռը բաց արեք», Տի-

բանը, ահից, ծակերն ե մոնում: Մնում է տակավին Սոսի մոր, այդ բանում, պիտակաբար հանդես գալը: Յեվ զարմանալի յե, վոր Վարդիթերի մայրը Արշավը ձեռքում Գարեգնի մատանու շատ թույլ և անխելք խաղի մեջ, հաշվե թե նույն պաշտոնն է վարում, ինչ վոր Սոսի մայրը Տիրանի ձեռքում. յերկուքն ել ակամա դավաճանակից են լինում, մեկը իր փորդուն, մյուսը իր փեսային: Ասենք, կյանքի պարզությունը կարող է ոգնել, վոր հեղինակը մեկ մասնով արգարանա. բայց այս բաները ավելի յեն, քան թե պարզություն:

Այն մատանու խաղը, վոր հիշեցինք, շատ անաջող գյուտերից մինն ե, շատ անտեղի անցք և բոլորովին խելքի հակառակ, յեթե աչքի տակ ենք աւնում բոլոր հանգամանքը: Ի՞նչ յերեխայություն ե. «Դու այսպես ասա կամ այնպիս ասա» և այն խրատողից թելաղրված մորը կամ իրեն խակ խրատողին, վորպես թե աղջիկը տալը կամ չտալը կախվում է լոկ Գարեգնի խոսքից:

Առաջ ել ասացինք, վոր հեղինակը անդադար պարապելով իր առաջնակարգ ներգործողների հետ, մեզ զրկում ե շատ հարցամիրության արժանի տեղեկություններից: Նատ բան անց ե կենում Գարեգնենց տանը, բայց Գարեգնի տան մասին գրեթե մենք վոչինչ գիտենք: Յերկու-յերեք տեղ, իբրև մի անհագագ բան յերկում ե նորա մայրը. յեղբոր անունն ենք միայն լսում, հարսի անունն անգամ չգիտենք: Հազիվ յերկու-յերեք անգամ տեսնում ենք Անուշին և լսում ենք նորա խոսքերը ծաղկազարդի որը յեկեղեցում և տերեւ տարած ժամանակը—Վարդիթերի հետ, վորպես նաև Սոսի հետ ծաղկազարդի մանուշակների կամ գաթայի պատճառով: Ցավում ենք, վոր ավելի ծանոթություն չունինք: Նույնպես Սոսի մեծ յեղբայրը—Գարետը հազիվ

մի յերկու անգամ հանդես ե գալիս. նորա կինը բնավ չե յերեռւմ. իսկ փոքր յեղբայրը—Արշամը կամ եղամը մի յերկու անգամ պիտակաբար յերեկուց հետո, իր պաշտոնը ավարտում ե այսում, արագ քաշած յերեկոյին: Մենք մանավանդ ցավում ենք սորա մասին, վոր այսպես փոքր հանդես ունի սա, պատճառ, հեղինակը նորանով ցույց ե տալիս մեզ նոր սերունդի սկեպաթեկյան ուղղությունը: Մեզ շատ ցանկալի յիր իմանալը թե այդ յերկնային և փրկարար ուղղության շրջանը արդյոք վմբան տարածություն ունի այն տեղերի հայ ընկերության մեջ: Մենք, ինչպես տուաշ ել ասոցինք, թերությանց կարգ չենք դնում այն չնչին անուշագրությունը, վոր Սոսի յեղբայրը յերբեմն անվանվում է Գեղամ (յեր. 48), իսկ յերբեմն Արշամ (յեր. 35, 166): Նույնպես, չեթումը խոսելով Սոսենց վրա, մի անգամ տում ե թե սոքա յերեք յեղբայր են (յեր. 98), իսկ ուրիշ անգամ թե չորս (յեր. 172): Թերությունք չենք համարում այս հակասությունքը (թեև չինչին լավ եր), վորովհետեւ բանի ընթացքը վնաս չե կրում. Գեղամ ե յեղել Սոսի յեղբայրը թե Արշամ, յերեք յեղբայր են թե չորս, գորանով այլ ընթացք չե ստանում կյանքը. բայց մենք տիրում ենք նայելով հեղինակի ժլատության վրա, յերբ բանը գալիս ե մեզ յերկրագական ներգործողների հետ ծանոթացնելու: Վարդիթերի յեղբարքը, բացի Արշամից և Փափակից, մնում են բոլորովին մութի մեջ. իսկ նոցա կնանիքը հայտնի յե, թե «չխոսեան» են:

Կուգեյինք, վոր մի քանի թերությունք յեղած չինչին, վորոնց կարգն ենք դնում ա) Պարեղնի ձու նկարելը: Մենք ասելիք ունենալու չիյինք, յեթե, վլուխը քարը, լոկ մի խոսք կամ մի նշան դրեր նա ձվե-

վրա. կամ շատ-շատ վորեկցե անցքի միայն մի մոմենտը նկարեր. բայց, կու կը ակը տես, վոր պատկերների բովանդակությունը այնպիսի բազմապարունակություն և այնպիսի փոփոխական և շարժուն տեսաբաններ և ստանում, վոր տասը պատկերի նյութ կլինի, վորոնց խոսքերով միայն ստորագրությունը ամբողջ յերեսից ավելի յե: Թողունք գեռ այն, վոր նկարի միջնորդությամբ և այդ ստորագրության համեմատ խոսել բնավ իսկ մի վորպիսի և խեղճուկ տիրացվի գործ չե: բ) Այս անտեր յերազները մենք առնում ենք վոչ միայն վորպես ավելորդ ներժուծությունք, այլ վորպես շատ անաջող փոխանակությունք բնական գեղքերի: Ասես թե հեղինակի ուժը կարգում ե և գործ ե զնում այդ հասքը մնացած պարապությունը լցնելու համար, վոր խոպա զանց առնելի յեր, վորպես նաև Սոսի, իր յեղբոր Պարետին, իր սիրահարվիլը պատմելը. ուր ասում ե Սոսը, թե յերազում ե սիրահարվել Վարդիթերի վրա և այնտեղ մեջ ե բերում նա ծերունու անտեղի և գաղտնախորհուրդ միջնորդությունը և այն և այլն: Այս ել գարձավ անդյուն Արովյանի Վերք Հայաստանի գործի մեջ Մուսայի մի Հոփիսիմեյի վրա յերազում սիրահարվիլը, վորին վոչ տեսել ե, վոչ ճանաչում ե և վոչ գիտե: Մենք չդիտենք, թե ինչ մտածենք այս յերեռյան ների վրա, բայց և այնպիս գրական թերությունք և նարների աղքատությունք ենք համարում: Բացի սորանից, դժբար թե կարելի յե թույլ տալ այն աստիճանի պարզմատություն լողի կողմից (գուցե մենք սխալվում ենք այսպես կա, ծերով), վոր հալած յեղի տեղ ընդունի այս յերազում սկսված, բայց լրջության մեջ իրագործված սերը ինչիցեն, «աստիճան թողութիւն չնորհեսցէ»:

Գարեգինը շատ ե գովկած. նորա գործերը գովեստի չափով չեն: Հեղինակը իր կողմից խոսելով հակամետ ե զարդարել նորա գլուխը. բայց ինքը Գարեգինը իր ներգործությամբ դավաճանում է հեղինակին և շատ տեղ յերևում ե վոչ ավելի քան թե մի իւղա տիրացու:

Մենք, վերեր, յերկու խոսքով մեղադրեցինք Սոսի քարափի գլխին աղոթելը և այն հերիք ենք համարում, վոր վերստին չհիշենք ապառաժի անմատչելի լինելը, աղոթերի Նարեկը, Եփրեմ Խորինը, Սաղմոսը, Սոսի ծնրադրությունից քարերի փոս ընկնիլը, Գարեգինի սրտի զեղմունքը, Յուղարերի մոմերը և այլն և այլն. բայց այսքան ստիպված ենք ասել, վոր Սոսը, վորքան մենք այժմ նորան ճանաչում ենք, շատ հեռու յե այդ տեսակ բաներից: Յեկ զարմանում ենք. ինչ հարկ կա Սոսի սիրող, յերգող, ուրախ և աշխատավոր բնավորությունը, վոր ամեն տեղ յերևում ե, այդ մի դիմվածում բռնաբարելով կեղծ հատկությունք դնել նորա վրա:

Սոս և Վարդիթերի մեջ կան աեղեր, ուր ֆատալիսմը (Ճակատագրականություն) աղատ հանդես ե ոտանում: Սոսին և Վարդիթերին, վոր չպիտի հասնելին իրենց ցանկության, միենույն վիճակախոսքն են դուրս գալիս, վոր գուշակամ և նոցա գլխի գալիքը: Ի հարկե, կարելի յե ասել, վոր պատահմունք ե այս. կհամաձայնեյինք, յեթե հեղինակը այդ վիճակները հանելով առաջուց չտեսներ Սոսի և Վարդիթերի գլխին պատրաստվող փոթորիկը: Յեկ այս դեռ բոլորը չե. «...համա, իւղա տղա, զուր ես քեզ զըստում: ինչ կարծես կարծի եղ մի կարծի, աստված դրան քեզ համար չի ստեղծել... ինչ գրվել ա են պտի ըլնիւ ճակատի գրվածը ջնջվիլ չի. հարցուը տարեն մեռած մարդի զըստին ել հողի տակիցը դուքս ո դալի, ամեն բանը խարար ելած ո ըլնում, համա,

ին գիրը մնում ա. արա ինչ կուզես. լավ, հետո կտեսնենք» (յեր. 25): Հետո—«...համա, դարդակ ամբարդարդակ ջվալ. ենքան գնա արի, վոտներիդ տակին ել կաշի չմնա, ենքան ճամփեքը չափի հոգիդ դուրս գա» (յեր. 66): «...ըսենց խորհուրդ արին իրենց միջին, համա, աստված իր բանը գիտի...» (յեր. 204):

Այս խոսքերը վիպասանության մեջ ներգործող մարդոց բերանը չե գրված, վոր ներելի յեր, վորովհետեւ ժողովրդի մեջ յեթե կա այս վարդապետությունը, հեղինակը մեղագոր կամ պատասխանատու չե. նա իր վիզը առել և ժողովրդի մեջ յեղածը նկարագըել բայց ցախս այս ե, վոր հեղինակը ինքը իր կողմից ասում ե: Հեղինակը, իբրև բանաստեղծ իրագունք չունի տարաժամ և այն իր բերնից խոսելով մերկացնել ապագայի վարագույը: Իբրև զրագետ, իբրև հեղինակ առավել ևր իրավունք չունի այսպիսի խոսքերի հանդես տալով դարավոր և խավար ժամանակներից սերմանված և տղիտության հողի վրա բուսած փուշերին ջուր ցողել: Մենք հավատում ենք, վոր վոչ միայն աշտարակցիք, այլ և ուրիշ շատ հազարավորք կարդալով պ. Փողշանցի խոսքերը, վոչ միայն չեն յերկբայիլ այդ վարդապետության վրա, այլ սովորական, արարատյան վոճով կասեն, թե այդ «ավետարանի կողքին ե զրած»:

Ի՞նչպես հասկանանք Տիրանի տված թըլիսմը, նորա բովանդակությունը և զործի վերջը հար ու նման այդ բովանդակության: Սակա թե մի իշխան պատվիր և տիկել իր ծառային և ծառան, առանց տիրոջ մի խոսքը ևս մոռնալու, կատարում և պատվերը: Մենք գիտենք, վոր մեր ազգը, ինչպես նաև ամեն ազգ, յեթե հանենք նոցա միջից լուսավորյալ բաժինը, հավատում

Ե կախարդության. խնդիրը այդ չե, և մենք գորա վրա
վեճ չունինք. այլ այն մանավանդ, թե հարկավոր ե
պահպանել ժողովրդի փառակար և մոլորական նախա-
պաշտամունքները և նանբանավատությունքը. թե՞ գո-
րա հակառակ, բնության որենքներով հարաշվին մեկ-
նելով, ցրվել միջնադարյան մասախուզը, բանալ ազգի
աչքը և ավելի հավատ դնել նորա մեջ իր վրա, իր
մարդկային արժանավորության և իր գործունելության
վրա. Եյապես, Տիրանի վհչ թըլիսմը, այլ գալաճանու-
թյունքը քանդում են բանը. Արշավրի նենդությունը
ձեռընտու յե լինում նորան. բայց հասարակ ժողովուր-
դը, վոր առանց նորան ել տրամադրված և կախարդու-
թյան և չար վոգիների հավատալու, ի՞նչո՞ւ ը բանի
վերջը և կատաստրոֆը—չվերափրկ թըլիսմի զորության,
յերբ Վարդիթերի մահից հետո, դուրս և գալիս նորա
ծոցից այն ձակ մարդարեց. թյունը, և յերբ նորա բո-
վանդակությունը ուրիշ բան չե, յեթե վոչ ներկա անցքի
ներկա տեսարանի առաջուց արած ճիշտ ստորագրու-
թյունը, վոր առանց և մել մազի չափ վրիպելու կա-
տարվել ե: Ինչպես առաջ ել ասացինք, մենք բան չե-
յինք ունենալ արգո հեղինակին ասելու, յեթե նա այս
կամ այն անձը նկարագրեր կախարդության հավատա-
ցող, այդ բնական և, վոչ միայն մեզ հայերիս, այլև
յեվրոպացոց և մինչեւ այն աստիճան բնական, վոր վոչ
միայն ինկլիպիցիոնը, այլև յեվրոպական կառավարու-
թյունքը, վորպես նաև բոլորական տերությանց մեջ,
ստուգապես հավատացած լինելով կախարդության և
կախարդների գործակցության չար վոգիների հետ,
այնքան վախենում եյին այդ կախարդ անվանված խո-
բերաներից, կամ շատ անգամ կախարդ անունով ամ-
բաստանված և զրադարձած խեղճերից, վոր անողորմա-

բար դատապարտում եյին նորանց դեպի մահ*: Բայց
պ. Պոոշյանցը իր բերնից ե խոսում այս բաների վրա
և նորա նկարագրությունը, վոր վերաբերվում եր մեր

* Ճախարդ կնօջ վերջին անգամ գատաստանով մահապարտ-
վելը Գերմանիո մեջ, 1783-ին յեղավ. բայց, 1793 ին Լեհաստանի,
հարավային-պրուսիական, սահմանավայրում երվեցան դարձյալ
յերկու կախարդ: Իսկ թե վորքան կախարդներ երվել ու տապակվել
են առաջին ժամանակներում, այդ մասին կարող են վկայել հե-
տեւալ մի քանի իրողությունքը: Բրատինշվեյզի մեջ 1590 և 1600
թվականներում այնքան կախարդ եյին երում (յերբեմն՝ որը 10—
12 հատ), վոր զլիապարտության հրապարակը նմանում եր կրակ
ընկած անտառի: Ույոյշն զքսության միջ 1640 ից մինչեւ 1652
(12 տարում) հազար կախարդ կին գատապարտված են զեսի մահ.
Նոցա մեջ կային նաև յերեխայք մեկից միջ և
վեց տարեկան!!! Ոսնաբրյուկում, 1640-ին, մինչեւ 80 կախարդ
կին խարույկի վրա մոխրացան վերպեսիլյան կոմսության մեջ,
միայն մի շաբթում կրակին զրվեցան հարյուր յերեսուն յերեք
կախարդ կիւ: 1832 ին Դանցիցի միջ, խածամում ամբովը ծովը
նետեց մի գողորմելի կին, վորի անոնը կախարդ եր հոչակիված և
անողորմար խեղդեց նորան ծովում: 1854 ին Շենգենիցիան գե-
ղերից մեկի միջ ամենքը հրաժարվեցան զեսի գերեզման հուղար-
կագործուց մի պառավի մարդին, վորովնետի նորան կախարդ եյին
համարում: (Ուսուցչապես և վարդապետ բժկության Բոք. տես
նորա գործի ուսւ թարգմանության՝ Ենցիւ Յարություն! լո 8 1862.

13 և 14 յերեսները. Պիտի յափել միայն, վոր ուսումնական
գերմանացին չե ցուցյ ատլիս աղբյուրները, վոր տեղից հանել եք
այս հարցամատիրության արժանի տեղեկությունքը: Թե առաջին
ժամանակներում մանավանդ, ստուգապես հավատում եյին կախար-
դության նաև հոյակատ մարդիկ, կամ գննե հարկադրված եյին
հովատացող ձեանալ զորան վկայում և այն իրողությունը, վոր
Մեծ Կեպի անմահ աստեղաբաշխը, յերբ 1584 ին շատաց զեսի
Տյուրինգեն իր մայրը խարույկից ազատելու համար, նաև կարողա-
ցալ համել իր ցանկության միայն նորանով, վոր ապացուցեց,
թե իր մայրը բնավ կախարդության արվեստը չգիտե և թե կա-
խարդական վոգին յերբեք նորան հլացած չե: Կեպի բնավ շա-

հիշած անցքին, այնպիսի կերպարանք ունի, վոր կարծես թե բոլոր վիպասանության խորհուրդը ուրիշ բան չէ, յեթե վոչ կախարդության եյտությունը և ներգործաւ-

խատեցավ մերժել կախարդության գոյությունը և պաշտպանելով իր մայրը լոկ փորպես տգետ կախարդական արքեստին, լույսայն խոստովանհցավ այդ սքանչելի արվեստի գոյությունը Ծանր և մեզ ընդունել թե Կեպլերի պես մարդը կարող եր հավատալ այդպիսի բանի. բայց այսքանը ճշմարիտ ե, վոր թե նա սկսեր բուռ կախարդության գոյությունը մերժել մայրը կերպերի մոր մորաքուրը արգեն քանի տարով դորանից առաջ գորպես կախարդ մոխքացել եր խարույկի վրա (Այս տեղեկությունը առնում ենք լիբերալ և Արագոնից):

Անգլիո մեջ կախարդի վերջին անգամ դատաստանով մահապարտվելլ 1712 ին յեղավ, ուր Նորդհեմպլըն քաղաքում հինգ կին կախվեցան վորպես կախարդ: Տես Parr's Works, vol. IV. p. 182.

Սպանիո մեջ վերջին անգամ, 1751-ին, դատաստանով երկեցավի մեկ կախարդ Տես Ticknor's Hist. of. sp. lit. vol. III. p. 238. (Այս յեղու վկայությունը փոխ ենք առնում հոչակավոր Բողըլի անման գործից Bucles, Hist. of civilisation in England):

Այս վկայությամբ մենք ցուց տվինք կախարդի Սպանիո մեջ վերջին անգամ դատաստանով մահապարտ վելը. բայց չափանից թե 1781 ից հետո իսպան աղասի համար մասնաւության կախարդները Սպանիան այն աշխարհը չեր, վոր շուտապ տեղի տաք մարդասեր լուսավորության. ինկվիզիցիոնը շատ նոր մասել եր բաների կարգի մեջ և յերկար ժամանակ կտրվեց վոչ նորա վկասակար ազդեցությունը: Եկեղեւ հավատանք մի քանի պատմարանների, ասլա պիտի ասենք, վոր սպանիացին, նույնիսկ ինկվիզիցիոնի կատաղության ժամանակ, շատ անգամ տաղտկանում եր, յեթե ու բազան ատենի քրիստոնեական առուստափեացաւ մի փոքր ուշանում եյին նորա թոքերը սովորել եյին ներս շնչել մարդկացին մարմնի ծուլսը և շոգին. նորա աշքերը չեյին կուծում այն թանձը ծուխերից, վոր տարածվում եյին անբախտ նահատակների բորբոքված խարույկներից. և այս եր պատճառը, վոր կրօնական բարբարոսության տեղատվությունը շատ ծանրաքայլ եր: Յեկ արդարե, 1781 ից հետո ել կախարդները չաղատիւ-

կանությունը ապացուցանել: Մեզ թվում ե թե այս ուղղությունը գատապարտելու մեծ իրավունք ունինք, մանավանդ յեթե հիշենք, թե պարզ և հասարակ ժողո-

շան կատարելապես, նոքա դարձյալ գատապարտվում եյին, թեև վոչ դեպի խարույկ, թեև լոկ դեպի մի հրապարակական խայտառակությունն Հոյակապ Թրանսուա Արագոն, Փարիզի գիտությանց ճեմարանի անմոռանալի և հոչակավոր անդամ և անփոխանակելի տաենապիլը իր սեփական վարքագրության մեջ (զ. XV) իր սովորական և զարմանալի ճարտար լեզվով պատմում ե մեզ հետեւյալը: «1807 ին, Վալենցիո մեջ, դեռ կար ինկվիզիցիոնական զատարանը և ժամանակ-ժամանակ ներգործում եր Ստույգ ե, պատվելի հայրերը մարդ չեմին երում, բայց հանում եյին ծաղրակի և պժապիլ վճիռները: Խմ այդ քաղաքի մեջ յեղած ժամանակը սրբ առ զատարանը պարագաները մեջ կախարդ կնոջ գործով: Նոքա ամս ածեցին նորան բուռը թաղերում եշի վրա և յերեսը դեպի պոչը նստեցուցած, կնոջ մարմնի վերին բաժինը—մինչեւ գոտին—մերկացուցած եր, պատշաճից ստիպիլերով մի մածուցիկ նյութ եյին քսել մերկ մարմնի վրա, ասում են թե մեղք եր քսածները և ծածկել եյին թեթի և մանը փետուներով, այնպես վոր խեղճ կինը, մարդու գլխով հավի յեր նմանում: Հանդիսավոր թափորը, վորի քամակից գնում եր մի բազմաթիվ ամբոխ, մի քանի ժամանակ կանգնեցալ մայր յեկեղեցու հրապարակի վրա, ուր իմ իշեցվանն եր ինձ ասացին, թե կնոջը ծեծեցին, թիով զարկելով մեջքին. բայց յն չեմ կարող հաստատել այս պատմությունը, պատճառ, յն տանը չեյի, յերբ պժգալի թափորը անցնում եր իմ պատուհանների առաջը: Ահա, այսպիսի տեսարաններով XIX դարու սկզբում զիարեացնում եյին բնակիչներին Սպանիո գլխավոր քաղաքներից մինի մեջ, ուր հոչակավոր համարարան կամ և այն:

Գերմանացի, հոչակավոր քիմիկոս, Հուստոս Լիբերը, եր քիմիական նամակների մեջ (Զորրորդ տպագրություն, 1858, Մյունիսին) այսպիս է խոսում: «...Դժար չե հասկանալ թե այդ կերպով (տանջանքով) շատերը բնակալատվեցան խոստովանիլ թե կախարդ եյին Այժմ կախարդների համար խարույկներ չկան, վոչ այն պատճառով, վոր այժմ չեն հավատում կախարդների գոյության, այլ այն պատճառով, վոր մենք, բնությունը ավելի լավ ճանաչե-

վուրդի համար վժրքան վնասակար են այլպիսի բաւները: Լուսավորության, գլուխության, բանաստեղծի և հեղինակի պարտականությունն է ժողովրդի հասկացու-

լով, գոտենք, թե այն բոլորը, ինչ բանում հանցավոր եյին համարվում այն անընթաները, ոլիսի վերագրել սատանայի, վո՞չ այլ միայն բնական պատճառների: Հազարավոր այսպիսի անընթաներ եղափոխների վրա զիմապարտվեցան այն տեսակ մարդոց ձեռքով, վոր պաշտպանում եյին կախարդության գոյության վարդապետությունը. իսկ ժամանակներից հետո, յերբ սկսվեցին պատճառները և իրողությունքը քններ վորոնց վրա հիմնվում է յին դատավորքը, յերբ ճշտությամբ ստուգեցին, այն ժամանակ դառն, վոր այն բոլոր, զրուեանց, կախարդության գոյությունը հաստատող կարծիքները հիմնված եյին սուտ նկատողությանց, սուտ մեկնությանց և սուտ գկայությանց վրա: (Տե՛ս, նամակ 24): Պ. Զամուռնյանի աշքը լույս:

Այն բոլոր աշխարհներում, ուր քրիստոնեայությունը նատած էր թագավորական աթոռի վրա, կախարդ ասված խարեւաները, կամ կախարդ անունով զլպարտված խենձները, մինչի տասն և ութերորդ դարու վերջը, անողորմաբար և առանց բացառության, հալածվեցան, դնդանների մեջ վտեցան, կախվեցան, զիմապիցան և խարույկների վրա գոսացան: Արգարե, մարդ սարսափում է, յերբ հիշում է, թե գնաքան անմեղ զոհեր և տվել մարդկությունը տղիտության և խափարի կուռքերին, յերբ մյուս կողմից հիշում է, թե շատերն ել ազիտությամբ վճար այլ փարիսական կրօնամոլությամբ քրիստոնեայության անունով արին այս բոլորը. այն վարդապետության, փորի եյական տարրը սեր և փոխադարձ ներողություն, վորի հեղինակը և հիմնայիշը ինքը մեռավ, փոր մարդիկ ապրին: Արդյոք այն աստվածային վարդապետը գուշակել էր, թե պիտի գա որ, յերբ նորա վարդապետության ապականիչքը պիտի պղծեն նուա նորա խաչի պատվանդանը, միլիոնավոր մարդցց արյունով: Արդյոք այն աղաչանքը, վոր նա անում էր. ռհայր, թնդ դոցա, զի ոչ գիտեն վինչ գործենու, մի մասնով վերաբերվմամ եր այս դաշնաներին Մենք սարսափում ենք: Բայց այս սարսափանիքը փոխվում է դեպի մի այլ, նոր, և ոտարուի զացողություն, յերբ մտածում է մարդ, թե ձիշտ այն որից, յերբ թեթևաբար կինը ժ

դությունը մաքրել, նախապաշտմանց և նանբահավատառության մառավաները ցրվել: Յեվ ասես թե լուսավորության բռնարարված իրավունքը, իր վրեժը հեղին

պշելով և տանվերակու ծանակությամբ նոտրը-Դամի սեղանի վրա կանգնած, ընդունեց ամբովի յերկրպագությունը, յերբ մի այլ սեղանում տիկին կալուազիկն վասեց մի ամբողջ համակարգություն ֆլագիստոնի, մինչ յերգեհոնը յեկեղեցու կամարների տակ հնչեցնում եր մի հանգստայան յեղանակ, այն, ձիշտ այդ որից խարույկները մարեցան, խեղճ կախարդները ազատվեցան և ինքը կախարդությունը, իր եյության իրավունքը մարդկային բանականության առջև հավիտայան կորցնելով, կարու մեաց այնուետեսէ խեղճ իմաստակների պաշտպանության

Քըքրեցէք, պ. Զամուռնյան, աղտոս և մրոտ ֆանստիկոսության ժանդուարնն: Եեվ զո՞ւք, պ. Զամուռնյանի աշակերտք, ողնեցք նորան... ծերունի յեւ հասկանում ենք ձեր սրտի ցալը. և ինչպիս չցալիք, ինչպիս չմորմորվիք, «վարագույրը բացվեցավ», ձեր գարը անցնելու վրա, ձեր սկզբունքները և մեր ազգի միջ իր հոգին փշելու վրա: Գիտենք, ձեր արածը հոգեարքի ցնցյուններ են, «նաև արջը որհասականք լոնդ վախճանել շնչոյն հզրագույնք կռուբին», ասում ե մեր սուրբ վարդապետ Յեղիշեն: Բայց այս չափ առաջուց իմացեք, զոր թե անհավատ, անկրոն, ներեւտիկոս, բողոքական, մողոքական և այլն և այլն ածականերով պիտի լցնեք ձեր թերթերի եները, մեր աշքում վոչինչ բան ասած չեղաք: Յեթի բան ունիք, վոր վայել եր մարդու, ասացեք. ապա թե վոչ այդ ածականները քյար չեն ընել ք. առնող ծախող և չկա, կ ը մնիք հասկ կ ցնել ք

Թնացեք, գնացք ծննդկ չոքեցեք «Միջնադանյան հերեւտիկոսարանի» առջել. մի վախճառք համբուրել նորա շեմքը, սուրբ ե, մարդկային արյունով պղծված չե, ինչպիս ձեր քարոզած ի նկանից առ ի գիշեր ներկուու: Ներս մաիսի, այնանդ մարդ երեսու խարույկ չկա, ուստի և վոչ ձեզ յերկուու: Թեկիս Մեշութեշան քաղաքավարություն անելով խան վե մըն ալ տա... ինքզինքնիկ զանաք, Բայց... Մեղա աստուծու... բուն նորա արյունով պղծված չեղածն և պատճառը, բուն այնաեղ մարդ չերելին և պատճառը բուն մարդկային, քրիստոնեյական և վո՞չ զաղանական սկզբունք

նակից հաճելու համար, ձգել և նորան մի տրամաբանական հակառակթյան մեջ: Սուրբ Խաչի պասին եր, վոր Սոսը հայտնի տեսավ իր վեսայի և մինչև անգամ իր քըոջ գավաճանությունը: Ի՞նչպես կարելի յե թույլ տալ վոր Սոսը, այդքան բանից հետո հավատար Տիրանին և մինչև այն աստիճան, վոր կապոց առնուր նորանից վորպես թըլիամ և Գարեգնից ծածուկ ուղարկեք Վարդիթերին:

Արդեն ասած ենք, վոր Սոս և Վարդիթերի տկար կողմերը այն տեղերումն են, ուր հեղինակը, գուրս զալով բնականի սահմանից, ոգնություն և խնդրում յերեխայությունից: Սորա մի քանի որինակը ցույց տվինք, բայց, համեմատաբար ավելի թեթև հանգամանաց մեջ: Անցքի կատաստրոֆը, վոր ամեն իրավունքով պահանջում է հեղինակից ավելի հմտություն ու ձարտարություն. ուր պիտի վոր գործի ամբողջ ընթացքի մեջ լարված թելերը ավելի ճարտարությամբ, ավելի հնարավիտությամբ և վոր գլխավորն և ավելի բնականությամբ միանան, հավաքվին և կենդրունանան, ինչպես արեի ճառագայթքը անցնելով մի վոստնաձև ապակուց, վոր իսկույն կրակեն,—այդ կատաստրոֆը, յեթև համեմատում ենք գործի ընդհանուր արժանավո-

ներ կամ կրքեր պաշվիլն և պատճառը, վոր պ. Զամուռջյանը Միջնադրան հերետիկոսարան ասելով «առեր անցեր ե»:

NB Սուրբ Յեղիշե վարդապետի վերաբերությամբ «մեր խոսքը նոտր գրով տպեցինք, վորոշելու համար պ. Զամուռջյանի պարեպոտավորներից, վորք են, Վանցի Պողոսը, Տիրացու Հոփիումեյի Տեր Պապան և նոցա նմանները, վորոնց անունները քաղցր չե մեզ հիշել և վորոնց հետ մասն ու բաժին չունինք Միջնադրան հերետիկոսարանը նորանց չե հանաչում. նշանակում ե, նորա ուղղափառ են, յեթև հերետիկոս չեն, ապա ուրեմն, և պ. Զամուռջյանի ուղածը.—«քոյդ զքեղ»:

ըության հետ, շատ թույլ և կերպարանագործված. և վոչ միայն այսչափ, այլ և անբնական: Այս, հեղինակի բուն խորհուրդը Սոսի կամ Վարդիթերի պատմությունը չե, ինչպես առաջ ել ասած ենք, այլ, Աշտարակի կյանքը. բայց և այնպես, յերբ, թեև վորպես ոգնական, առել և Սոսը, Վարդիթերը և սիրու կրակը, ցանկալի յեր մեզ, վոր ավելի բնական շրջանակի մեջ տեսնելինք ցավալի կատաստրոֆի պատկերը:

Անբնական ե, յերբ Վարդիթերը վորպես տասն և մեկ տարեկան աղջիկ մի ջլերը սասանեցնող տխուր անցքից կաթվածահար և լինում: Անբնական ե, յերբ կաթվածից հոգեարք մարդը ցույց և տալիս ուղեղի և ջլերի անխոտոր և առողջ պաշտոնակատարություն: Յեթև նորա ուղեղը և ջլերը այն վիճակումն են, վոր նա հանգիստ խոսում ե, ուղիղ մտածում ե, հիշողությունը չե կորցնում, աչքը տեսնում ե, և ականջը լուսն, ել ինչ պատճառից ե մեռնում: Վոտքերն են կաթվածահարվել թե ձեռքերը. այդպիսի գիպվածում նա կարող և շատ տարիներ ապրիլ: Թոքերը կամ սիրտն և կաթվածահար յեղել, այն ժամանակ պիտի վոր իսկույն մեռներ, առանց շաբաթներով ապրելու: Իսկ մյուս ներքին գործարանների կաթվածահարությունը, յեթե վոչ պիտի սպանելին իսկույն, պիտի անջռշտ պատճառ դառնային ուղեղի և ջլերի ուղիղ պաշտոնատարության խանգարվելու:

Թե Սոսն ասես, շատ կեղծ վիճակում ե: Ցըտում, գլխաբաց, վոտքը բորիկ ման և զալիս յերեք կազ ձնի միջում և այն ցուրտ ձմեռ ու Արագածի զառիվայրում: Չորը մտնում ե, ջրում լողանում, աղվեսների և գայլերի հետ կրիվ տալիս. և այս որերով: Յեկ չնայելով, վոր նա մահ և փնտուում քան թե կյանք, այնուամե-

նայնիվ չե մոռանում իր կյանքի պահպանության հոգուը՝ «խոտի քոքերը ձնի տակից հանելիս ու ծամելիս», տեսնում են նորան ազարանցիք։ Մի շաբաթ ե, վոր նորա քամակից ման են գալիս աշտարակցի տղաքը. տեսնում են, բայց սիրո չեն անում մոտենալ: Գերջապես, յերկու շաբաթ անցնելուց հետո Գարեգինն ե նորան տեսնում և Սոսը գալիս ե նորա մոտ: Գարեգինը խրատում ե, համոզում ե տուն դառնալ և Սոսը գառնում ե: Բայց այս յերկու շաբաթում, այն ցրտի և ձնի մեջ սառը ջրում լողանարով, սառուցի վրա թեք ընկնելով, սոված և ծարավ, բայց և այնպես նորա յերեսի դույնը բնավ չե թռչում, նորա առողջությունը չե սասանում. իսկ յերբ տանը նստած լուսմ ե Վարդիթերի մահը, խոր հոգոց ե քաշում, մեջքի վրա հետ գնում, գլուխը Գարեգինի ձեռքի վրա գնելով ինորում ե, վորաշխատի յերկուսին (իրեն և Վարդիթերին) իրար կշտի թաղել տա, իր մորը միսիթարե, յեղբարցը մնաս բարով տսե, ինքն ել ուրախ կենա (!), հետո, աչքերը վերե բարձրացնում աղոթք անում ու հոգին ավանդում: Իրար մոտ թաղելու ինսդիբը անում ե նաև Վարդիթերը, յերբ գեռ Սոսը մեռած չե: Արդո հեղինակը այստեղ մի վայրէլյան ընծայում է Վարդիթերին Փանվելի աղջկա շնորհը:

Մենք չենք ուզում այս բոլոր անբնական և շատ թույլ նկարագրված անցքերը քննության գանակի տակ ձգել, այդ շատ յերկար կլինի. առանց նորան ել յերկարում և մեր հատվածը: Գուցե ավելորդ ել լիներ այս աչքի հայտնի թուլության վրա շատ խոսել. մասնավճար վոր ինքը արգո հեղինակը կամ մեր ընթերցողքը, յեթե ուշադրությամբ կարդան այս անցքերի նկարագրությունը, վոր մենք հարազատությամբ, վոր-

սես քաղված, հանեցինք բնագրից (յեր. 218—222), իրենք ել կտեսնեն մեր տեսած անբնականությունը և հակասությունը: Այսչափ միայն ասում ենք, վոր վեպասանության շինվածքին մեծ հարված ե տվել կատարութիւ այս անբնականությունը:

Յեվ վորպես թե հերիք չեր ինչ յեղել եր, այն պատվական տապահագրից հետո,—

«Ահա սիրո պատուղներ,
Մի ազան մարզի զոհեր,
Ով ըստեղից անց կեսա՝
Հիշվ Սոսն ու Վարդիթեր»,

վոր շատ բնակիր և կարճ և ազգու, դնում ե այն Գարեգնի անտեր վողը: Ամբողջ գործի մեջ, վոր բոլոր վոտանավորքը տակ ու վերե ես անում, մեկ հատ չկա այսպիսի անխորհուրդ, անաշող և ցուրտ վոտանավոր: Պատճառը շատ բնական ե: Գործը հեղինակի մտքում և սրբում արգեն վերջացած ե. նորա վոգին ել բան չունի այս գործի հետ. բայց յերբ բռնադատում ես Կրիչը ինչ վոր լինի մի բան գրել, հայտնի բան ե, վոր Գարեգնի վողը պես կլինի, վոր վոչ բարով պիտի տսեր:

Աղգային ավանդությունքը վորքան կարելի յե, անշուշտ, արժան և քրքրել և գուրս բերել գարավոր փոշիների տակից. բայց ավանդությունք ենք ասում, վոր իրեր մի պատմական սերմ, միշտ կարող են ազգի կյանքի մեջ ծլիլ, ծաղկիլ և պտուղ ընկեր: Աղգային ավանդություն և գարբինների սալը ծեծելը, վոր Արտավազդը գուրս չդա ու աշխարհը չքանդե. և մենք մեծ ուրախություն զգացինք, յերբ տեսանք (յեր. 42), վոր տակավին պաշտվում ե այդ անտիկյան ավանդությունը. թեև այդ ել կրոնական զույն ե սուսցել դարձյալ վո-

բովիետե ավագ ուրբաթի գիշերն և միայն կատարվում:
Բայց, ինչպես և ե, այնուամենայնիվ ավանդությունը
կենդանի յեւ և այն պատմական ավանդությունն, վորի
լոկ հիշելը բերում եւ մարդու յերևակայության առջեւ
ամբողջ հայ աշխարհը, վորի վրայից արդեն զլորվել
են շատ դարեր:

Բայց խոստովանում ենք, վոր Ականատեսի ավան-
դությունը (յեթ. 108) չունի մի դորա նման արժեքը:
Անշուշտ, հեղինակը չեւ շարադրել նորան, նա առնում
եւ ազգի հասկացողությունից. բայց մենք մի փոքր ա-
ռաջ ասածներս վերատին կրկնում ենք, թե դպրության
և լուսավորության խորհուրդը այն չեւ, վոր ամեն ան-
ցած խավար լույս քարոզե, ամեն զարերի ծանրության
տակ ձնշվածին անխտիը ծունը դնեն, այլ վորպեսզի
փարատե այդ խավարը: Այդ տեսակ բաները, մեր կար-
ծիքով զգուշության պետք ունին. և հեղինակը հանդես
հանելով մի նմանորինակ բան, պարտական և այնպիսի
ընթացք տալ բանին, վոր տասն և ինն դարու մեջ ու-
թերորդ ամենախավար դարին արձագանք յեղած չլի-
նի: Միջին դարերում, ջուրը կարող եր ուր ասես յեր-
թալ մի գավազանի զարկելով, թերևս, ձորից դեպի
վեր, սարի գլուխը բարձրանալ, բայց այն որից, յերբ
Դամբիլելը իր գնդակները ձգեց Պիզայի թեք զանգա-
տնից դեպի վայր, այն որից, յերբ ծանրությունը վոր-
պես ընդհանուր հատկություն տրվեցավ մարմիններին,
այն որից, յերբ գտան հեղուկ և ողանման մարմինների
որենքը — թե նոցա ձնշողությունը ամեն կողմ հավա-
սար ե, յերբ ոդի ձնշողության աստիճանը չափվեցավ
և «բնությունը դարտակությունից վախում է»*» առածը

մերժվեցավ, այն որից, յերբ Նյուտոնը գտավ կենդրո-
նական առաձգության որենքը, այդ որերից բռնած ել
ջուրը չեւ հնագանդվում գավազանների կամ Ականա-
տեսների: Յեվ այս և պատճառը, վոր Յերեանի Դամբի
ջուրը, վորի ճանապարհը բավական տարածությամբ
յերբեմն փորած ու բանած եր դեպի Եջմիածին, այսոր
մի այդպիսի սքանչելի կերպով չեւ կարող Յուշ-Թեփե-
լերի բարձրավանդակից անցնիլ, վոր հետո վազեր գե-
պի Եջմիածին, ու խեղճ միաբանին ազատեր այն ան-
մաքուր ջրից Սառը-Քանքանի, վորի մեջ ոճ ասես, գորտ
ասես կամ ուրիշ մանր կենդանիք լիքն են:

Այսոր յեթե տակավին գիտությունը վոտք չեւ կո-
խել ազգի մեջ, զոնե լսվում եւ մի խուլ աղաղակ այս-
քան դարերով անզործ և կաթվածահար թոքերի կի-
սակենդան ներգործությունից, վորոնք զգում են առողջ
ողի կարոտություն, վորքան կարող ելին զգալ: Խոր-
հըրդավոր ժամանակում ենք ապրում մենք և մեծ պար-
տականություն կա մեր վրա, գրգռել այդ թոքերի զոր-
ծունեցությունը առողջ ող ներս շնչելով. հերիք ե, վոր-
քան թմրեցուցիչ թույն մտել ե նորա մեջ, մեզ մնում
ե այժմ գեղթափներ գործ դնել:

Մենք միջնագարյան ազգ չենք. միջին դարերում
մենք ընկանք. միջին դարերում մեր հարստությունը
կորուցինք: Զեւ կարող լինել մի այնպիսի բան, միջին
դարերի պատկանավոր, վոր ոգտակար և փրկարար
խորհուրդ ունենա մեր համար: Միջին դարերի ժամագը,
վոր նստել ե մեր վրա, մենք պարտական չենք պահել:
Կան ազգեր, վոր միջին դարերում ծնեցան, նոքա ա-
մուր կապված են այդ դարերի հետ և սոցա ժամագը,
յեթե յերեսում ե նոցա վրա, նոքա դեռ կարող են պատ-
մական իրավունքով արդարացնել, ժամագոտ որորոցի

* «Natura horor vacui»

միջ բացին նոքա իրենց աչքերը: Մեր հարաբերությունը միջին դարերի հետ այսպես չէ: Իրեւ ազգ անտիկան ենք, իրբեւ քրիստոնյա, յեթե վոչ նույնպես անտիկան, ըստ վորում առաջին յերեք դարերում քրիստոնելությունը քաղաքացու իրավունք չուներ Հայաստանում, գեթ անտիկան դարերի վերջի և միջին դարերի սկզբին պատկանավոր: Ի՞նչ կարող են մեզ հիշեցնել միջին դարերը, կործանում, գերություն, կոսուած, արյուն, կրակ, սով, խավար և մահ: Սոքա են մեզ համար միջին դարերի բերածը և նոցա բնորի տակ ճնշված և այսոր հայ մարդը: Թափել այդ բեռը մեր վրայից, —ահա մեր զորձը: Մեր ազգությունը, մեր կրոնը, վոչ թե վնաս կրելու չեմ միջնադարյան ուղղությունը մերժելուց, այլ զորա հակառակ այդ մերժությունը միակ պայման ե նոցա առաջադիմության*: Քաջ Լամբրոնացին մի ուրիշ գիտվածով աղաղակում և, «Զմանկունս ծնեալ մեզ ի քաղցեացւոց սերմանէն զվիմի հարցուք»: Մենք, մի փոքր փոփոխությամբ ձայնակից ենք լինում մեր յերանաշնորհ վարդապետի բացադառնչության. «զմանկունս ծնեալ մեզ ի միջին

* Առասարակ փորձնական կամ բնական գիտության թշնամիքը իրենց անուսումամբ ությունը և նեղ հայացքը հիմում են այն սուս վարդապետության վրա, թե այդ գիտությունը վասակար են կրոնին: Այս աններեկ սխալ ե, քանի վոր առաջալը քարոզում և շաստուծու աներկութքը նորա արարածներովն են իմացիում: Ենչի ուրեմն վախենում են այդ արարածքը քննելուց Բնական գիտությունը առաջ ե գնում մինչև բաների սկզբը: Եթե մենք ուզենք ավելի հեռու յերթար այն ժամանակ մի հատման կտեսնենք պատճառ պատճառի, արարիչ աստվածը: (Կառաջքաժ. Կերպար անափութունը կենդան ական առաջքի, սողությը),

դաբուց սերմանէն զլիմի հարցուք»: Թողունք արեամբայան նոր ազգերին, անսնելով իրենց հին ասպետական ամրոցների մնացորդքը, ատամնավոր պարիսպները և գոթական տաճարները քաղցրությամբ հիշել միջին դարերը, յեթե միայն կարող եյին, վորովհետեւ նոքա եւ, թեև հոռվմից աղատված, այնուամենայնիվ, վոչ միշտ վարդեր են քաղել իրենց այդիներից, իսկ մենք, վոր զոհ գնացինք միջին դարերի խավարին, չենք կավակալ թուղթը հիշատակ ունենալ նոցա մտախն նայելով մեր ամրոցների, քաղաքների և տաճարների ավերակներին:

Գիտենք զուր չեն անցնում գարերը, այսինքն նոր իրենց ազգեցությունը անում են ազգերի վրա. ընքառում ենք, բայց ինչ և մեր պաշտօնը: Ի՞նչ և քաղաքակրթությունը. status quo?* ամեն այդ ազգեցությունը, վորոնց հետևանքը և նշմարքը յերեսում ե մինչև այսոր ազգի մեջ, այդ Դանիելի ասած «աւերածի պղծութիւնը» անխտիր սրբացնել անխտիր նոցա առջև ծունկ չոքել ու խունկ ծխել, վորովհետեւ մինը հաղարացյա յե, իսկ մյուսը հինգհարցուրամյա, թե ջնջել այդ ազգեցությանց հետևանքն անդամ: Յեկ յեթե պիտի կատենք մեզ այդ խավար անցածի հետ, յեթե պիտի միակն մեր հիմանդությունը, այնուամենանիվ իսպատվանելով մեր հիմանդությունը, այնուամենանիվ պիտի ուղենք միջնադարյան թարախը պատվաստել մեր վրա փորպես նախապահպանողական հնար (ինչից), յեթե նույն իսկ մեր ցավի և հիվանդության պատճառը պիտի առնունք վորպես ճար ուղենք, եւ մեր ենք խոսում կրթության և լուսավորու-

* Status quo (ante)—սկզբնական, նախկին դրությունը, անփոփոխ վիճակը (լատ.): Խ մ.թ.:

թյան վրա, ուր ենք առաջադիմություն և քաղաքակըրթություն բառերը բերան առնում:

Գեղեցիկ ել խոսում հոյակապ լիբիդը իր նամակների մեջ. «Յերկակայությունը, հարյուր հազար դիպվածներում ստեղծում ե հարյուր հազար մոլորությունը. և չկա վոչինչ բան այնպես վնասակար գիտության առաջադիմությանը, վոչինչ բան, այնպես, հասկացողությունքը խալարեցնող, քան թե մի հին մոլորություն. վորովհետեւ շատ դժար ե հերքել սուտ վարդապետությունը, պատճառ, նա հիմնված ե այն հասկացողության վրա, թե սուտը նշմարիտ ե»: Միջնադարյան բոլոր համակարգությունքը հիմնված են այդ նույը գրերով տպած վարդապետության վրա:

Մենք փորձերով, և շատ տարբեր տեղերում, ստուգած ենք, վոր մեր հասարակ ժողովուրդը շատ անգամ ավելի ազատ ե միջնադարյան լուծից, քան թե մեր պատվելի գրագետքը: Միջին դարերից հետո մինչեւ այսօր մի քանի նոր դարեր ել անցան, յեթե դարերը դուր չեն անցնում, ապա ուղեմն այս նոր դարերը բնականաբար, քիչ շատ թուլացուցին միջին դարերի մեր ժողովուրդի վրա արած ազդեցությունը. այս, շատ բան ել խապառ մոռացուցին: Բայց մեր պարոնները անդադար այդ միջին դարերի կարելարասում լողարկ ազգության և լուսավորության անունով, աշխատում են նորոգել և հաստատել ազգի վրա այդ խափար ուղղության տիրապետությունը: Ի՞նչ ե դորա խորհուրդը, ի՞նչ հույս ունին դորանից:

Խորհուրդ չկա. հույսն ել թեթեության արդյունք է: Թող այդպիսի պարոնները լավ սորվին ընդհանուր պատմությունը և նորա հետ կապակից մեր ազգի պատմությունը, Մխիթարյանց տպած գրքերովը վճէ, այլ

բուն ազգյուրներից և վերլուծական վոճով: Թող քրքը բեն ընդհանուր դպրության, նոր և լուսավոր ազգերի քաղաքակըրթությունը, այդ քաղաքակըրթության որևէ ներքները և նոցա կերպարանագործության հարակից յեղած հանգամանքները, այն ժամանակ իրենք ել կտեսնեն միջնադարյան ուղղության ամլությունը և տարապայման չքավորությունը: Բայց այս ուսումնասիրությունը կարող ե միայն նոր կամ տպագա սերունդին աջողիլ, ինչ վոր վերաբերվում ե մեր իմաստուններին, նորա ինչպես ներկայի լուսին, այնպես և ապագայի հետ մասն ու բաժին չունին, և նոցա հետ չե մեր խոսքը: Մենք և վոչ իսկ ուղում ենք վրդովել նոցա քունը. «ննջեցէք և հանգերուք», ասում ենք նոցա:

Միջնադարյան անշահ ուղղությունը իր ամլությամբ մաշում և կենդամնի ազգի ուժը առանց ամեննեին արդյունք տալու: Նա նմանում ե այն քարե ձիկն, փորիբեն բունկալ մնում է հավի ձու ածած տեղում, բոլորովին պիտակաբար. և յեթե թուխս յեկած խեղճ հաւագը, իր անխոնեմ տիրոջ վորկրամոլությամբ, զրկված լինելով իր ածած բոլոր ձվերից, և բնական ազդեցությամբ նստի իր ձու ածած տեղում (այն քարե ձուն ել չինի կնստի) խելքդ ինչ և կտրում, այն քարից ձագ գուրս կդմ: Չե վոր զուր տեղը կվատնե վորորմելին իր ջերմությունը և շատ անգամ զործը կվերջանա հավի մահովը: Հարկ չկա, կարծում ենք, ասել, վոր այս բոլոր խոսք ու զբույցքը վոչ թե լոկ մեր հեղինակին չեն վերաբերվում, այլ մահավանդ ավելի փոքր բաժինը կարող ե հասնիլ նորան, քանի վոր նա ուրիշների պես իմաստական դոն-կիխոտությանց չե նվիրել իր

անձը (և ուրախ ենք, և փառք աստուծու) քանի վոր
կան մարդիկ, մեր արդարացի մեղադրության լիամասն
կերպով արժանավոր, վորոնց, այն, մենք մինչեւ այսոր
պարտական ենք մնացել:

Յերաշտության ընդգեմ նուրինի ավանդությունը,
թեև խաղառ չգիտենք թե ինչ բան է այդ և ինչ արա-
րողության մնացորդ, բայց և այնպես, կարծում ենք
թե հին բան լինի: Սաստիկ զրգուում և այդ բանը մեր
հարցասիրությունը. մանավանդ յերբ տեսնում ենք,
վոր շատ խոր արմատացած և նա աղջի հասկացողու-
թյան մեջ և մեծ վարկ ունի աղջը՝ նորա մասին: «Ես
մեր կոտորված յերեխեքն ել»—յերաշտությունից զան-
գատելով ասում են աշտարակցիք իրենց մեջ (յեր. 66):—
«Նուրին (Լազարե)»* ել չեն ման ածում, բարի աստու-
ծո սիրու քաղցրանա վրըներս, մի լիս ու ճար անի»:
Սորանից այսչափ միայն գուշակում ենք, թե այդ բանը
ընդունվում է վորպես մի հաշտեցուցիչ արարողություն
և թե յերեխայք միայն (վորպես անմեղության յերե-
ցուցիչը) պիտի կատարեն:

«Յերեխեքն ել»—պատմում է հեղինակը (յեր. 69):—
«Նուրին շինեցին ու ման ածեցին. յերկուսը կոնից
բռնեցին***, մինն ել տոպրակ ա վեր կալել մեկելն ել
մի պատի բըժութ ու ման են գալի տները, վոր զրան
առաջին կաննում են, ասում են.

* Թե ինչ ասել և լազարե, մենք նույնպես չպիտենք ինչ-
պես նուրինը:

** Սորանից յենթայլում ենք, թե տղոց շինած նուրինը մի
մարդանեն պաճուճապատանք և կամ այլպես մի բան, յերբ ասում
է հեղինակը վկանիցը բանեցին:

«Նուրին նուրին եկել ա,
Աջքա հուրին* եկել ա,
Շիւ շապիկ հազել ա,
Կարմիր գոտիկ կապել ա:

Յեղ բերեք պորտը քսենք,
Զուր բերեք զիսին ածենք,
Մեր նուրինի փայը տվեք,
Ուտենք խմենք քեփ անենք»:

«Կանիքը,— շարունակում ե հեղինակը,— մի աման
ջուր բերում են լցնում եղ նուրինի գլխին, ու յերե-
խեքանցը բրինձ, կամ յեղ, կամ ձու տալի, վոր տանեն
քեփ անեն»:

Վերել ասացինք, վոր այս բանը հին և յերեսում
մեզ, անցուշտ այս լոկ յենթադրություն ե, բայց մա-
սավանդ յենթադրում ենք այն պատճառով, վոր այդ
վոտանավորի հետքը կա նոր նախիջնանում. գնեն շատ
տարի առաջ, յես լսել եմ պառավերից: Վորքան միտքս
գալիս ե, այնտեղ մի փոքր այլ այլած և այդ վոտա-
նավորը և ասվում ե բոլորովին պիտակաբար, առանց
վորեն արարողության կամ խորհրդի: Չորս տող միայն
հիշում եմ. ահավասիկ.

«Նորին նորին նազարեթ***:
Նորինը բաղչան եկել ե,
Շաղե շապիկ հազել ե,
Կարմիր գոտի կապել ե...»

Այլ թե սորանից հետո ել ինչ և արել այդ միաքս չե,
միայն լավ գիտեմ, վոր մի քանի տող ել կար: Նախի-
շիւ լավ գիտեմ, վոր մի քանի տող ել կար:

* Աջքա հուրին խռոքը բնավ չենք հասկանում թե ինչ
ե ուղում ասել:

** Արդյոք հարակցություն կմ այս նազարեթ և մեր չհասկա-
ցած կաղաքեցի մեջ, թե լոկ նմանություն են

ջևանի մեջ բնավ ավանդություն չկա այս Նուրինի մասին. լավ գիտեմ, վոր տղայությանս ժամանակ, շատ եմ զգվեցուցել պառավերին, վոր պատմեն ինձ, թե ով է այս Նորինը կամ Նազարեթը. բայց վոշնչ չեմ լսել նոցանից, վորովհետեւ իրենք ել չգիտեյին: Դեռ դարմանալի յե, վոր այսքան ել մնացել ե, մանավանդ յեթե հիշենք, վոր նախիջևանցին անեցի յե և տասն և չորրորդ դարում Հայաստանից գուրս յեկած. հայտնի յե, թե շատ ավանդությունք կամ վոտանավորք և այլ այսպիսիք, վոր վերաբերություն չունեյին կրոնի հետ, պիտի կորչեյին: Թեև իսեղ բաներ, բայց և այնպես կարելի յե տակավին հավաքել բավական վիճակախաղեր և մի քանի վոտանավորք աստվածածնի և ուրիշ սրբերի վրա: Գեղացիք, վոր առաջ ավելի ավանդապահ եցին քան թե այժմ, ունին զանազան յերգեր, մանավանդ հարսանիքի վերաբերյալ, վոր հայտնի յեն անունում «պար»:

Արդյոք, Աշտարակը, վոր պահել և մինչև այժմ Նուրինի արարողությունը, պահել և նույնպես մի ավանդություն կամ հասկացողություն նույնիսկ Նուրինի անձնավորության կամ այդ սոտարության մասին և թե պահել ե, ի՞նչ ավանդություն ե այդ աշտարակցոց կարծիքով ով և կամ ինչ ե այդ Նուրինը. ցավում ենք, վոր հեղինակը վոշնչ չե ասում մեզ: Անշուշտ, յեթե ավանդությունը կորել ե, հեղինակը պատասխանառ չե, բայց այդպիսի դիպվածում ել բնավ տվելորդ չեր գննե մի բացասական ծանոթություն: Մենք հույս ունինք, վոր արդո Պոտշանցը ուրիշ անգամ ավելի շատ հանգես կանե այդպիսի տեղեկությունք և ավելի կատարելությամբ առաջ տանի սկսածը: Մենք քաջ գիտենք, վոր Սոս և Վարդիթերը չե հատցրել նո-

րա պաշարը. մանավանդ վոր դեռ շատ բան մնում է, վորին բնավ չե դիպել հեղինակի գրիչը:

Ապարան բառի ստուգաբանությունը, այսինքն պ. Պոտշանցի կարծելը (յեր. 7) թե գուցե անպարան բառի կրծատվածը լինի, կապելով նորան այն սքանչելի կանթեղի հետ, մենք իսպառ մերժում ենք. նախ, վոր անպարան խոսքը, այսինքն պարան միացած բացասական ան մասնկի հետ մենք հին հեղինակությանց մեջ վոչ մի տեղ չենք տեսնում գործածած և այդ բուրովին նոր բարգություն ե. հայտնի յե թե աւարանը անպարանից գուրս գալու համար հարկավոր եր վոր այս վերջինը յեղած լինելով գպրության մեջ, մինչեռ Ապարան խոսքը (հատուկ առքով) յերկում և գործածված: Յերկորպի, Ապարանը, վորպես այժմ նույնպես և առաջ ապահովության տեղ յեղած լինելով, շատ հավանական և թե ապարան հասարակ անունից լինի հատկացած: Այլ թե ինչի կարող եր մի իշխանի կամ թագավորի ապարանը այնտեղ յեղած լինի: Բայց մենք այստեղ բառերի ծագումը քննելու համար չգտագրեցանք, յեթե այդ մասին խոսելու լինինք, այսինքն լնդհանրապես այն անունների մասին, վոր այսոր խորհրդավոր նշանակություն են ստացել Հայաստանի նողում, կարելի յեղածի չափ հարմարվելով աստվածաշնչի պատմությանցը, ալպ մեր ասելիքը պիտի հիմնենք մեր հին հեղինակների գործերի և անողոքելի յերկրաբանության վրա: Բնելով այս ճանապարհը, շատերը այդ անուններից կլորցնեն իրենց ներկա խորհրդը բայց մենք բնավ վերաբերություն չունինք այդ բաների հետ, մեզ մանավանդ քաշում և այն սքանչելի կանթեղը Արագածի և նորա մասին ուղղում ենք մի յերկու խոսք ասել:

Ավանդությանց մեջ, ամենից ավելի անհաստատը փոփոխության և աղճատանքի յենթարկվողը և նոցաժամանակը: Չատ անգամ ավանդությունը գրեթե անարատ մնալով եյապես, փոխվում է նորա ժամանակը: այսինքն մի անցք, կամ մի իրողություն, վոր ստուգապես պատահած եր, դնենք, Թորոսի ժամանակ, այդ բանը համարվում է յեղած կամ Մինասի ժամանակ, վոր շատ առաջ եր ապրել Թորոսից կամ Նիկողոսի, վոր Թորոսից շատ գարեր հետո եր ծնել: Այդ ժամանակի առաջ ու հետ խաղալը կախվում է Թորոսի, Մինասի և Նիկողոսի ազգի մեջ ունեցած խորհրդից, արժանավորությունից ու հատկությունից: Հայտնի յե, թե մի պատերազմ, մի քաջագործություն, մի հաղթություն չի վերագրվի մի սուրբի, վորպես նաև մի հրաշագործություն մի յերեկի զորավարի: Յեթե ազգը Թորոսի որով տեսել է մի խորհրդավոր անցք, բայց Թորոսի վրա բնավ համարում չունի, ազգի հետագա զավակները այդ անցքը անպատճառ կիլեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, վոր կամ առաջ և ապրել Թորոսից կամ վերջը, վորի վրա ազգը մեծ համարում ունի քաղաքականապես՝ կամ կրոնապես, նայելով անցքի բնավորության: Ավանդությունքը, զրկվելով այսպես ժամանակադրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, վոր այդ մարդը շատ դարերից հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան սքանչելի անցքերի և գործերի: իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու ողտի համար, զրկվում են իրենց ստուգապես ունեցածից: «Զի ամենայնի որ ունիցի տացի և յաւելցի, և որ ոչն ունիցի, և զոր ունիցին բարձյի ի նմանէ»: Ճիշտ այսպիսի դիպվածներում է կատարվում:

Հայոց ազգը, Արագածի վրա կրակ կամ լույս յեթե չտեսներ, անհնար ե, թե նա չեղած տեղից կանթեղ հնարեր և Լուսավորչին ուղարկեր այնտեղ Նարեկ քաղելու: Մենք այդ լույսը կամ կրակը Արագածի վրա ընդունում ենք վորպես իրողություն: Բայց սակայն, դժար և այժմ դատել, թե այդ լույսը կամ կրակը Լուսավորչից առաջ եր տեսել ազգը, թե հետո Լուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չեկարելի պնդել, թե ստուգապես չորրորդ դարում է յերեկ այդ կրակը: Այս, կարող եր և այն ժամանակ յերեկը մեր խոսքը այդ չե այլ այն, թե լոկ անունը չեկարող ընդունվել վորպես ապացուցություն ժամանակի, ավանդությանց մեջ:

Այդ լույսը կամ կրակը ընդունելով վորպես իրողություն, բնականարար խնդիր է առաջ գալիս, թե ի՞նչ լույս կամ ի՞նչ կրակ յեղած պիտի լինի: Հարկ չկա առել վոր բնական յերեւյթը առասպելով մեկնաբանել մեր գործը չե: զորա փոխանակ առասպելյալ բնական յերեւյթը իր մոգական քողերից ազատել և բնության լուսով հասկանալ և հասկացնել «ի մեծ շինութիւն ազգին», մենք սիրում ենք վորպես ճշմարտություն:

Մարդը, վոչ միայն ֆիզիկապես, այլ և բարոյապես յենթակա յե բնության ազգեցության, բնության սրտի զորակը ցոլանում ե անմիջապես մարդու սրտում: Մարդու իր դաշտափարը առնում է բնությունից: Ինչ չափով հանաչել և ուսել ե նա բնությունը, համեմատ այդ չափին կինի նորա գաղափարների և հասկացողությանց ազնվությունը: Ահա մի որենք, վոր բնավացառություն չունի: Մարդի վոստայնից բարակ մետափիզիկական համակարգությանց բովանդակ գաղափարը կան բնության մեջ: իսկ ինչ վոր չկա, այն

ամենակին սուտ եւ Բնությունը մի գիրք եւ, վոր պիտո
յել կարդալ և ուղիղ հասկանալ. սխալ ըմբռնողությունքը
մեծ զնամներ են տալիս: Բնական յերկույթքը իրենց
վսիմափառ կերպարանքով շատ անգամ սարսափեցնում
են մարդուն. սա միանգամայն վոչնչանում եւ, յերբ աչ-
քի առջև տեսնում եւ մի այնպիսի ուժ, մի այնպիսի
զորություն, այնպիսի տեսարան, վորի առջև տիպար-
նում եւ վոչ լոկ մի մարդու, այլ և բովանդակ մարդկու-
թյան ուժը: Բնական յերկույթքը թեև վոչ այնպես
սասանեցուցիչ, ինչպես մի վուլիանի կատաղի արտա-
հոսություն, կամ ինչպես մի թաթառ կամ փոթորիկ
ովկիանի վրա, կամ Սահարի անսպատում. թեև վոչ
այնպես ապշեցուցիչ, ինչպես մի Ամազոն, Միսսիսիպի
կամ Որինոկո, կամ մի ամերիկյան կուսական անտառ.
թեև վոչ այնպես կործանարեր և մահառիթ, ինչպես մի
կայծակ, մի սամում, մի ճեղեղ կամ հարյուրամյա ծա-
ռերը արմատից և տան ծածքը պատերից խլող մրրիկ,
վհչ. այլ այնպիսի խաղաղ յերկույթք, վոր չեն պատ-
ճառում մի յերկյուղ, մի զնաս, մի մահ կամ մի կոր-
ծանում, այլ մանավանդ զարմանք և հոգեզմայլություն
և վորոնք մարդու կարծելովը չունեցին մի թշնամական
բնավորություն, ինչպես մյուս վերևում հիշվածները,—
յեթե հասկանալի չլինին ժողովրդին և չբացատրվին նո-
րան, կարող են, այն, չարաչար մոլորությանց պատ-
ճառ լինել. Յեկ այդ մոլորությունքը, յերանի թե, վոր-
ուես մի տեսական գաղափար, մնային մարդու գլխում.
վհչ. նոքա շատ անգամ մարմին են առնում Շիվայի,
Շուլքայի և Վիշնուի անհեթեթ կերպարանքներով և
այնուհետև խարազան են դառնում մարդկության:

Վորքան մոլորությունք վոր կան աշխարհի յերե-

սին, այդ բոլորը սկզբնաբար ծագել են կամ բնությու-
նը թյուր հասկանալուց, կամ իսպառ չհասկանալուց:
Յեկ այդ մոլորությունքը վոչինչ ուրիշ բանով չեն
փարատվիլ, մերժվիլ, յեթե վոչ բնությունը ուղիղ հաս-
կանալով: Ահա այս և պատճառը, վոր ամեն բանական
մարդ պիտի աշխատի վոչ միայն ինքը ուսանել բնու-
թյան որենքները, այլ և ուրիշին ոգնել յեթե ինքը
ավելի փորձառած եր, քան թե այդ ուրիշը, վոր կա-
մենում եր բանալ բնության գիրքը:

Ուզերով հասկանալ այն կրակը, կամ լույսը, վոր
յերբեմն յերեկո և Արագածի վրա և կամենալով փոքր
ի շատե տեղեկություն տալ աղջին նորա մասին, պետք
եր, վոր մենք աչքի տակ առնուինք բնության մեջ (բա-
ցի յերկնքի լուսավորներից) յեղած բոլոր կրակները
կամ լուսերը. քննելինք նորանց, համեմատելինք կան-
թեղի ավանդության և դորա պարագաների հետ և վո-
րը անհամաձայն կիներ առողջ դատողության, մերժե-
ցինք, իսկ վորի կողմում վոր լիներ ավելի հավանա-
կանություն, ընդունելինք վորպես բնական պատճառ
կանթեղի ավանդության: Մենք, թեև այդ վերլուծու-
թյունը մեր մոքում արդեն արել ենք, բայց այստեղ
ավելորդ համարեցինք մեր ընթերցողների առջև ել
նույնը անել, պատճառ, խորհուրդ չգտանք զուր տեղը
ինպիներ առաջարկելու մեջ, միմիայն մերժելու և չե
տակելու համար: Որինակ, կրակ և լույս ունի Դրու-
մոնդի ասած կրակը (Ճրածինը վառված թթվածնի ներ-
կայությամբ), բայց դա ինքն իրեն չե առաջանում
բնության մեջ. վրա յերկու, վոր այն ժամանակ բնավ
հայտնի չեր: Նույնպես և գալվանական լույսը, վոր
գրեթե մեր որերի գյուտ և և այլ այսպիսիք: Շատ
ուրիշ կրակներ և լուսեր, վորպես ճախնային գալք

կամ գերեզմանական շրջմոլիկ կրակը, գնդաձև կամ կծկաձև* կայծակը, վուլքանական կրակը** և այլն և այլն իրենց գաղափարներով հակասություն ունելին:

* Կծիկ բառից ենք առնում Այդ տեսակ, գործես նաև առասարակ կայծակի, վուլքամունքի, մեկ խոսքով բոլոր ոգային եւլեքտրականության մասին, մանրամասն տեղեկություն ցանկացողը կարող է գտնել Արագն ֆրանսիացու ուսումնական աշխատության մեջ—Կայծակի մասին Յերանի՛ թէ թարգմանելին հայերեն, կորպես և նորա Աստեղարաշխությունը, հասարակ ժողովքի համար գրված: Բայց այսպիսի գիտությանց վերաբերյալ գրքերը չե պիտու և չե կարող թարգմանել ամեն մարդ, վոր գիտե լոկ ֆրանսիարեն: Հարկավոր ե, վոր թարգմանիչը լավ ուսած լինի իր թարգմանած գրքի առարկան, ասկա թէ վոչ թարգմանությունը կդառնա մածնաբրդու և զրականապես անողութ, հանգիստարան լինելով՝ միալ բմբնողությանց, մթությանց, այն, շատ անզամ և հիմարության: Թէե ընազրում իմաստություն եր այն:

** Առ այժմ, թողնելով Արագածի վուլքանականության թընդիրը, մինչեւ մի ամենի հարմար և աջակ ժամանակ, զարձնում եմ հայ բնագետների ուշագրությունը և ուսումնականությունը հետեւյալ խնդրի վրա: Ամենին հայտնի յե, թէ Արագածում ծծումը կա, այս բանը վոչ միայն մենք հայերս զիտենք, այլ քիմիայի մասին գրված մի քանի սուս գրքերում ել խոսվում ե. ավելինելով, թէ տակալին քննված չե այդ հանքը և թէ պետք ե կարծ եւ քոր քիչ ծծումը լինի. բայց այս չե իմ ասելիքը Շատ արժանահավատ մարդիկ, այն, և բուն աշտարակցիք, վորոնց հետ տարիներով բնակալից եմ յեղած, շատ աշտարակցիք նույնիսկ Աշտարակում, ոշականցիք և վաղարշապատցիք և այլն և այլն միաբերան վկայած են ինձ, թէ Արագածի վրա, (չգիտեմ հատկապես վոր տեղում) ծծումը տան ծածքից վաղած և սառած շրի պես ծուլ ծուլ կա ին և ընկնում քարերից: Կարիճները գնում են և հրացանի գնդակով տալով վայր են ճգում, հավաքում և տանը պետք ածում: Այս բանը ինձ ինձ գիտեմ ծծումը տան ծածքից վաղած և սառած շրի գնում են և հրացանի գնդակով տալով վայր են ճգում, հավաքում գաղած: և վաղուց գրավել ե իմ հարցակության քար և գարձած: և վաղուց գրավել ե իմ հարցակության քար և յերե 1860 ին Եղմիածին եյի, զրագված լինելով ազգային գործերով, չկարողացա ժամանակ գոնել, վոր յերթայի իմ աչքով

կանթեղի գաղափարին: Նույնպես և լուսատու միջատաներից առաջացած կամ վերջապես մի մարդու ձեռքով վառված սովորական կրակի գաղափարքը նույնպես համաձայն չեյին կանթեղի ավանդության:

սուուգելու այս ծուլ ծուլ կախ ընկնող ծծումը եյությունը: Մինչեւ այստեղ խոսածից ինարկե ընթերցողը հասկացավ, վոր իմ գայթակությունը ծծումը լինելությունից չե, այլ նորա ծուլ ծուլ քարերից կախ ընկնելուց: Հայտնի յե բնագետներին, վոր ծծումը հալվում է միայն մոտ + 80° Ռեոմյուր կամ ավելի ճիշտ խոսելով + 101° Ցերլիու (սանտիգրատ), իսկ այն բանը վոր սառած ջրի պես պիտի ծուլ կախ ընկնի, պետք և վոր առաջ հալվի: Ցերե ասենք թէ ծծումը անմիջապես այդ քարերի մոտին ե, այն ժամանակ նորան հալեցնելու համար կարու միայն ինչ տեղից և Արագանենք վերզպյալ աստիճանի չերմության: Ինչ տեղից վերաբերյալ զիտում կարու մոտ չե, այլ նոցանից հեռու, այսինքն խորը, սարի մեջ, իսկ քարերի վրա նորա չեղագածքներից կախվում են միայն ծուլերը, այդ պիտի ծանրացնում ե բանը: պատճառ, այլպիսի գիպվածում ծծումը պիտի վորպես շողի բարձրանաւ սարի խորքից մինչեւ այդ քարերը: ծծումը շողիացնալու համար կարու և + 320° Ռեոմյուր (+ 400° սանտիգրատ): Ինչ տեղից կարու և այս ջերմությունը: Պետք չե մոռանած, վոր այդ աստիճանը չերմության հարկավոր ե վոչ միայն նորան շողիացնելու, այլև այդ վիճակի մեջ պահելու համար, վորովհետեւ չերմության աստիճանը իջածին պես, շողին կիուիկ իր վիճակը և վորպես կարծի մարմին կնսատի, այն համեմատաբար, սառը տեղում: Յեզ վորովհետեւ հեղուկ կամ կարծը մարմինը չե կարու ինքն իրեն ցածից դեպի վել բարձրանաւ այլ պիտի վոր այդ փոխանցումը լինի շողու կերպարանքով, ուրեմն պիտի յենթադրել թէ ծծումը հանքից մինչեւ Արագածի այն տեղը, ուր յերեսում են այդ ծուլերը, կա մի անցք, մի ճանապարհ, վոր ունի վերը գրած չերմությունը Ծծումը շողին յերը մնավում ե, փոխվում է գեպի կարծը մարմին, գեպի փոշի, վոր հայտնի յե քիմիայի մեջ անունովս ծծմբածաղիկ, մօր. սուրիան: վոր ծուլ ծուլ կախվելու ընդունակ և հալվելու և հեղուկ կերպարանք ստանալու համար, վոր հե-

Հետո ի՞նչ դուքս յեկավ. ել վոչինչ չմնաց. այս չեր այն չե:

Վհչ, մնաց և մեր կարծիքով ավելի հավանականը,

առ ծորելով ստոք, կարոտ ե վերը հիշված + 1010: Բայց սոցանից կան և ուրիշ մանրամասնությունք, վոր ավելորդ ենք համարում հիշել հուսալով վոր ընթերցողը կհասկանա մեր բրափունքը գայթակելու: Իրավ վոր մինչեւ այս բողես չեմ հասկանում այս բանը Այս բանի մեջ կամ սուստ կա, ի՞նչպես այս սքանչելի օճնիքեկի պես գետնից բուսնող վոսկին և արծաթը: կամ գննե մի չհասկացողություն, վոր արտպես մթնացնում և բանը: Յեթե ասեցին ոքին ժամանակներից կախ և ընկած և գնալով վճարում է, այդ դեռ կարելի յեր հասկանալ բայց ներկա ժամանակով են խոսում: Ուրիշ բան չեմ մուտք գոչ ճիշտ քննության տակ ձգել պատճառ, յեթե ստուգապես կատարվում և Արագածի մեջ ծծմբի այդ շողիացումը, կամ թե կախվածքը ցած են, քանի թե հանքը, (յես չգիտեմ) ապա, նորա հալվելը, ուրեմն Արագածի մեջ տակավին կա Հերմություն: Յերանիք թե մեկ որ մեր բնագետ յեղբարակիցներից մեկը ուրախացներ մեզ մի ուսումնական շրջանկատ քննությամբ Արագածի վարպիսության, թե վուրկանականության, թե յերկարանության, թե յերկարանության վերաբերությամբ: Իսկ թե չձանձրանա, բացի սոցանից, գործ դնել և չերմաշափ և ծանրաշափ և մազնիցան սլաք և մանրացուց, յեթե ուշազիր լինի Արագածի բույսերին, տունկերին և նորա վրա ասլող կենդանիներին, այն ժամանակ մեզ կմնա վոչ մեայն շնորհակալ լինել նորանից, այդի պարեւնալ նորանով Յելբուզայի առջե, թե «մենք ապերախտ չենք, անավասիկ տալիս ենք քեզ տոկոսիքը քանքարի, վոր գու մեզ տվիր, թերեւս կորած համարելով Ասիր անկյուններում»: Արագածի վրա յենելը Զեմբորասոյին վրա յենելը չե, ուր մնաց վոր, հոյակապ Հումբորիքի թեթե վոտքից հետո արդեն յերկու անգամ կոխեցին Զեմբորասոյի զագաթը (մի քանի վոտնաշափ ել ավելի բարձր, Հումբորը չեր հասել ճիշտ զագաթին) Ալբիոնի հարցաներ զագանեցը: Այս մարդիքը պարզ ուսումնական ճանապարհորդք եյին և գոչ թե կառավարությունից հանձնարարություն կամ քաջալերություն ստոքացած աստիճանավորք:

վոր կարող եր շատ անգամ յերկացած լինիլ և այսոր ել յերեխի վորպես Արագածի գլխին այնպես և ուրիշ տեղերում: Մեր բոլոր հետաքննությունքը համոզեցին մեզ, թե այդ սքանչելի կանթեղը ուրիշ բան չե, յեթե վոչ թե այդ սքանչելի կանթեղը ուրիշ բան չե, յեթե վոչ:

Այդ կրակի վրա ել սուրբի անունը վոր կպել և, մանավանդ ստիպում և մեղ մի փոքր տեղեկություն տալ նորա մասին, վորպեսզի ընթերցողը մի գերբնաւկան բան չհամարեն սորան և շասեն վոր յեթե սուրբի կամ բան չհամարեն սորան և շասեն վոր յեթե միջնորդությամբ դարձյալ պիտի մեկնովի այդ կրակը, ել ուր կուսավորիչը թողած գնանք մի սուրբ Հելմոսի ել ուր կուսավորիչը թողած գնանք մի սուրբ Հելմոսից: Քամակից, վորին բնավ մեր յեկեղեցին չե ճանաչում: Սուրբ Հելմոս խոսքը, ինչպես կարծում են Հելենեյի սուրբ Հելմոս կարծում են Հելենեյի առաջացել վորովհետև այդ կրակը քրիստոնեական ժամանակ, նույն այդ այնպես և քրիստոնեյության ժամանակը, ինչպես ասացինք, անվանվում և մի դիպվակրակը, ինչպես ասացինք, անվանվում և մի դիպվակրակը ամբողջ ելեքտրականության համակարգի ստիպինք ամբողջ վոր կամ ֆիզիկայի գործ և (այսինքն ֆիզիկայի մասին գրված գրքի) կամ մի ասանձին հատվածի ելեքտրականության մասին և վոչ բնավագական յելեքտրականության մասին:

Յենթե յելեքտրականության մասին:

3ենթերպում ենք, թե ընթերցողը փոքր ի շատեկաղականության վրա, ապա յեթե վաղակար ունի ելեքտրականության վրա, ապա յեթե այս չենթազպելով խոսելու լինինք, այն ժամանակ պիտի ստիպվինք ամբողջ ելեքտրականության համակարգի ստիպվինք ամբողջ վոր կամ ֆիզիկայի գործ և (այսինքն ֆիզիկայի մասին գրված գրքի) կամ մի ասանձին հատվածի ելեքտրականության մասին և վոչ բնավագական յելեքտրականության մասինք, ինչպես ասացինք, մի փոքր գիտություն, մի գաղափար ելեքտրականության մասին:

Յերկրագունդի և ամպի մեջ առաջանում են ելեք-
տրական լարողությունք, վոր առանձնանում են ամպի և
յերկրագունդի մեջ յեղած ողով, վորովհետև ողը վատ ա-
ռաջնորդ է ելեքտրականության: Յերկրագունդի և ամպի
մեջ առաջացած ելեքտրականությունքը զանազան են.
նոցանից մինը անվանվում է դրական, իսկ մյուսը բա-
ցասական: Յել վորովհետև այս ելեքտրականությունքը
այլասեռ են, ուստի բնական որենքով նոքա քաշվում
են, վոր միանան իրար հետ: Յեթե ամպի ելեքտրակա-
նությունը հանկարծապես միանա յերկրագունդի ելեք-
տրականության հետ, այն ժամանակ այդ միավորու-
թյունը զգալի յել լինում մեզ վորպես կայծակ: Յերկու
զանազան ամպերի մեջ ել գոյանում են՝ շատ անգամ
այն վերը հիշված յերկու այլասեռ ելեքտրականու-
թյունը և յերբ նոքա իրենց այդ ողեղեն բարձրու-
թյան մեջ միանում են իրար հետ, մենք տեսնում ենք
նոցա լույսը—փայլակ, և լուսմ ենք նոցա միավորու-
թյունից առաջացած ձայնը—վլորու: Բայց այժմ այս
վերջինը մեզ պետք չե. մեզ հարկավոր և միավորու-
թյունը ամպի և յերկրագունդի ելեքտրականությանց.
բայց վոչ մի կործանաբեր կայծակի կերպարանքով:

Յերբ, ինչպես ասացինք, յերկրագունդի և ամպի
մեջ առաջացել են այն այլասեռ ելեքտրականություն-
քը և յերբ չուրաքանչյուրը նոցանից ոդի միջնորդու-
թյամբ առանձնացած լինելով գտնվում ել լարված վի-
ճակում, այն ժամանակ (նույնպես ասել ենք) ձգտում
են չեղոքանալ—յեթե կարելի յել այսպես ասել—այ-
սինքն միավորվիլ: Յերկու այլասեռ ելեքտրականու-
թյունըն ել առանձին առանձին կարող են իրենց ներ-
կայությունը հայտնել քննողին և այն ժամանակ նոքա-
հայտնի յեն. իսկ յերբ միացան, ել չեն ընկնում զգա-

ցողության տակ և անհայտանում են: Սոցա հանկար-
ծական միավորության մասին խոսեցանք—հայտնի յե-
թե վորպես ծովլից մի կաթիլ ջուր առնելով—և ասա-
ցինք, վոր այդ միավորությունը զգալի յել լինում կամ
վորպես կայծակ, կամ վորպես փայլակ ու վորու: Սո-
վորպես հակառակ, այդ ելեքտրականությանց մեղմաքար,
այսինքն աստիճան աստիճան միավորությունը, շատ
անգամ իսպառ անզգալի յել լինում մեղ. իսկ յերեխն,
մենք տեսնում ենք այն լույսը, վոր սուրբ Հելմոսի
կրակի անունով հայտնի յել գիտության մեջ:

Հուլիս կեսարի, Տիտոս Լիվիոսի, Պլուտարքոսի,
Պրոկոպիոսի, Սենեքայի և Պլինիոսի գրքերում շատ
անգամ հիշվում ե մի լույս, վոր յերեկել ե, կամ առան-
ձին առանձին զինվորների, կամ նոցա ամբողջ լեգեոնի
սիզակների սլաքներից. նույնպես խոսվում ե ենավերի
կայմերի լուսավորության մասին: Այս բանի, այսինքն
ասված գրքերում շատ անգամ այս լուսերի հիշատակ-
վելու վրա հիմնված ե կարծիքը, թե հին ժամանակնե-
րում ավելի ստեղծ ե պատահել այդ յերեսույթը, քան-
թե նոր ժամանակներում: Բայց, նույնպես, յենթադր-
վում ե, վոր հին ժամանակներում հմայողները և հա-
վագետները (ասցար) ոգուտ քաղելով ամեն կարգից
գուրը յերեսութից, նոցա վրա իրենց գուշակությունքը
հիմներով և ժողովրդին խարելով, ավելի խնամք են
ունեցել այդպիսի բաները գրով մինչև մեզ հասցնելու:

Բայց, այժմ, կայծակից առաջ կամ շուտով կայծա-
կից հետո, յեթե մի նկատող մարդ ուշադրություն
դարձնե բարձր աշտարակի կամ շանթարգելի սուր ծայ-
րին, միշտ կարող ե տեսնել սուրբ Հելմոսի կրակը:
կայության և բարձր սարերի վրա կարող ե յերեկել այ-
սինքն կրակը, վորպես շատ ձառագայթների խուրձ, յերբեմ

բոլորն և յերբեմն լեզվածն իր սուր ծայրով դեպի վեր,
ինչպես ճշագի կամ կանքեղի լույսը, բայց մի վոտնա-
չափ կամ կես կազ յերկայնությամբ: Նավերի կայմերի
վրա, նույնպես հաճախ և պատահում այս, և յեթե մի-
այն մի լեզվածն լույս և յերեռմ, սնապաշտ նավաս-
տիքը շատ բարկանում են, վորովհետեւ նոքա հավատում
են թե մրրիկ կլինի այնուհետեւ, իսկ թե յերկու հատ,
այդ դիպվածում նորան ասում են կաստոր և Պոլլուկս,
նավաստիքը ուրախանում են, վորովհետեւ աջող նա-
վարկություն են բերում կաստորը և Պոլլուկսը, հու-
նական անորիկյան առասպեկի հերոսքը: Շատ անդամ
պատահում ե, վոր յեկեղեցիների գլխի խաչերը լուսա-
վորվում են այսպիսի ելեքտրական լուսով. շատ ան-
դամ աղուաֆիերը թռչելով այն ամպի մոտից, վորի ե-
լեքտրականությունը մեղմաբար միանում եր յերկրա-
գունդի ելեքտրականության հետ, յերեն են զարմա-
ցած և ապշած ամբոխին լուսեղեն կտուցով: Նույն այս
բնական յերեռյթը նկատված ե շատ անդամ և ցած
տեղերում. շատ անդամ ծառերի ճյուղերը լուսավորված
են, շատ անդամ մարդիկ կարծել են թե երվում են
կրակում, և սարսափել են իրենք իրենց տեսնելով «ի
հանդերձս լուսաւորս»:

«Կայծակի ժամանակ, հունվարի 8-ին, 1839 ին,—
ասում ե հոչակավոր Արագոն, իր ուսումնական քննու-
թյան մեջ Կայծակի մասին. (Notice Scientifique sur
le Tonnerre, ch. XXX)—յերբ կայծակը զարկեց չաս-
սելոյան յեկեղեցու աշտարակին, ծվոլեցի և չասսելոյի
միջոցում (Հոլլանդիո մեջ. առաջինն ամրոց ե, այժմ՝
գրեթե ափերակ, իսկ յերկրորդը քաղաք) զտնված գե-
ղացիք նկատեցին մի ոտարոտի յերեռյթ վերը հիշված
կայծակի զարկելուց մի քանի ակնթարթ առաջ, նոքա
62

տեսան, վոր բոլոր նոցա հալավերը (շորերը) կրակ-
ված են: Այդ կրակը անցնելու (մարելու, հանգջնելու)
համար զուր տեղը աշխատելու ժամանակ սարսափան-
քով նկատեցին, վոր ծառերը և նավի կայմերը նույն
բոցով եյին փայլում: Կայծակի զարկելն ու այդ ոքան-
չելի կրակների անհայտանալը մի ակնթարթում կա-
տարվեցավ»:

Վարքան ուրիշ այսպիսի դիպվածներ առաջ ե բե-
րում Արագոն, վերը հիշված հոյակապ աշխատության
մեջ. վարքան այսպիսիք հիշված են գերմանացի Յիմ-
մերմանի Փիզիկայի մեջ, մենք չենք ուզում ամենը
այստեղ դնել: Այլ այնչափ միայն հիշեցինք, վոր տես-
նեն և հավատան, թե այդ կրակները և լուսերը վոչ
բարձր են ամպերից և վոչ առանց յերկրի գործակու-
թյան առաջանում: Բնությունը, ինքը, վոչ թե մի լոկ
հրաշք ե, այլ բարձր քան թե հրաշք և այս պիտի ստիպվի
ընդունել ամեն մարդ, վոր ուսումնասիրում և նորան:
Բնությունը միայն կարող է հասկացնել մեզ արարչի
մեծությունը և փառքը. «Երկինք պատմեն զփառ աս-
տուծոյ և զարարածու ձեռաց նորա պատմէ հաստա-
տութիւն»: Արարիչը, մեկ անգամ ստեղծելով բնու-
թյունը տվել ենորան անխախտելի և սուրբ որենքներ,
վոր բնավ և մեկ մազի չափ խոտորմունք չունին.
«Սահման եղ և ոչ անցանեն»*: Այդ որենքներով կա-
ռավարվում ե ամեն ինչ, վոր մենք տեսնում ենք, կամ
ինչ վոր բնավ չենք տեսնում, տիեզերքի անշափելի

* «Եւ ամենայն արարածը անբանութեամբ կատարեն դիքա-
մանս պատուիրանի նորա, ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահ-
մանն իւրեանց». Եղիշէի փարզ. Վ. ա. ն. Վ. ա. ր. դ. ա. ն. ա. յ. և Հ. ա. յ. ո. պ. ա. տ. ե. բ. ա. զ. մ. ի. ն. Մոսկվա. 1861, յեր. 66. քաղուած այն
համակից, վոր Արտաշատի սուրբ ժողովը գրեց Հազկերտին:

տարածության մեջ: «Դնէ զձիւն որպէս զասր և զմէդ որպէս փոշի ցանեաց: Արկանէ զառն որպէս պատառոտ առաջի ցրոյ նորա ո կարէ կալ»: Ի՞նչ վսեմ նկարագրություն: Բայց այս բոլորը լինում են այն մեկ տնգամ դրված որենքով, ինչպես մարդը ապրում է և բազմանում է, թեև առաջին մարդը մըայն դուրս եր յեկած բուն աստուծու ձեռքից: Ամեն հրաշք, վոր ով և իցե կարող եր մտածել շատ ստոր, շատ տկար և շատ չնշին ե, քան թե այն հրաշքը, վոր արարիչը, բնության միջնորդությամբ ցույց ե տալիս մեղ ամեն որ, ամեն բուլե, և ամեն վայրկյան: Նա չե հերետիկոսը, վոր քննելով և ուսումնասիրելով բնությունը ամեն վայրկյան ստիպվում ե ասել բնության ճարտարապետին, իր սրտի աղոթարանից. «Որպէս զի մեծ են գործք քո տէր». այլ նա, վոր վոչ միայն ինքը չե ուզում և չկամի իմաստասիրել բնությունը, «զերկինս և զերկիր զգործում ամառնց նորա, զլուսին և զաստեղս զորս նա հաստատեաց», վճ՝ հերիք չե այս, այլև արգելում ե վոր ուրիշն ել նորա կամավոր կուրության հետևելով չտեսնե և չուսանի. «Ինքն ոչ մտանէ և որոց մոռնենն արգելու»: Նա, վոր այս բոլորի մեղքը ծածկելու համար, ինքը իր թշվառ գլխից տեսությունք և համակարգությունք և հնարում ընդգեմ բնության աստվածադիր սահմաններին, քաշքելով այն որենքները, վոր մարդու կամքին բնավ չեն յենթարկվում, այս, այդպիսին աստուծու արտօնությունն ե հափշտակում յերկրի յերեսից:

Դու, վոր նեամուսի մեջ ցույց ես տալիս ինձ մի շիշ, ուր կա մի քանի կաթիլ արյուն և պատմելով, թե այդ արյունը այս կամ այն ժամանակ յես ե գալիս, ուզում ես գորանով քարոզել ինձ այն աստվածը, վորի

դրած որենքները, մի ակնթարթում, ինչպես Յերեմիայի «Կաթսայ յեռանդեան» յեռացնում են ահագին ովկիսանը, յես խելագաղը եմ, վոր ովկիսանի մեծափառ հրաշքը թողած, քո յերկու կաթիլ չորցած արյունին նայիմ. և այն ժամանակ, յերբ բյուրավոր այդպիսի կաթիլներ, բայց կենդանի արյունի, ամեն վայրկյան յեռած են և ըրջան են կատարում իմ յերակներում:

Մեծ ճարտարապետը, վոր քեզ ստեղծել ե առանց քո ոգնության կամ խորհրդին կարուելու, միթե կարու և այսոր քո սուրբին:

«Զինչ հազորդութիւն լուսոյ լնդ խաւարի»... «Սուտն ի հօրէն սատանայէ է»... «Հանէ՛ք զգս ի խաւարն աբտաքին»:

Թէ ուր և հասած այժմ բնական գիտությունը և ինչ անհասկանալի քրմական գաղտնիքներ քակում ենա, ինչ համարձակ քայլափոխներ ե անում, այդ մասին հարյուրավոր են ապացույցքը: Նույնիսկ մեր հիշշած Ցիմմերմանի Ֆիզիկան, —ուր ելեքտրական մասին մեջ, առաջ բերելով բեն Դավիթի, Միխայելիսի և Լիհուտեներեզի ուսումնական քննությունքը (այս բաները հիշված են մասնավորապես և Արագոյի Կայծակի մասին աշխատության մեջ) զարմանալի պարզությամբ բացում ե տապանակի և վկայության խորանի զադանիքը, —թէթե ապացույց չե:

Հոգով չափ ցանկալի յեր, վոր մեր բնագետ յեղբայրակիցքը աշխատություն հանձն առնուին այդ Ֆիզիկան թարգմանելու: Այդ գործը գրված ե հասարակ ժողովի համար և կարող ենք հաստատապես վկայել վոր ամեն կարգի (անշուշտ, ուշագրությամբ կարգացող) ժողովրդին հասկանալի կլինի, յեթե արժանապես թարգմանվի: Բնական գիտությանց բոլոր ճյուղերը

կապված են ֆիզիկայի հետ այնպես, վոր դժար և ձեռք գարկել բնագիտության մյուս ճյուղերը մշակելու կառ թարգմանելու մեր ազգի համար, մինչև վոր չենթադրվի թե ֆիզիկան ծանոթ և նորան փոքր ի շատե:

Բայց, ինչպես մի անգամ արդեն ասացինք, այսպիսի գլոբուլ պիտի թարգմանվին լավ բնագետների ձեռքով. պատճառ, լոկ թարգմանությունը շատ անգամ թերի յե լինում, թեև թարգմանիչը քաջ գիտեր լեզուն: Դիտությունը յերեք չե կանգնում մի կետի վրա, այլ միշտ առաջ և դնում. ամեն որ լինում են նորանոր հայտնագործությունք և նորանոր պարզաբանությունք գիտության մութը և շատ անգամ անհասկանալի տեղերի: Թարգմանիչը, մի այդպիսի գիրք թարգմանելու ժամանակ, պարտական և նորա բոլոր գրությունքը համեմատել գիտության այն վիճակի հետ, ինչ վիճակում վոր գտնվում և սա նորա թարգմանության միջոցին: Մեր հիշած ֆիզիկայի բնագիրը կարու և փոփոխությանց, ավելվածքների և ծանոթաբանությանց: Նորա ոռւս թարգմանիչը բավական մշակել և այդ գիրքը, բայց ել մի քանի տեղ կան, վոր պետք ունեցին պիելի պարզաբանության և ծանոթաբանության: Լոկ, խոսքով հանդես յեկած չհամարվելու համար, մենք հրավիրում ենք մեր բնագետ յեղբայրակիցների ուշադրությունը մեսմերականության վրա, վոր գերմանացի նատուր-ֆիլոսոփների (բնափիլիսոփա) մեջ, մինչև այսոր ել տեղիք ունի և վոր գիտությունը բնավ չե կարող ընդունել: Վորապես թե արբեցությունից պատճառված «ինքնակիղության» խնդրի մեջ, Մունքեյի և Քոփիի սքանչելի կարծիքները ճշմարտանման կերպով առաջ են բերված, բավական քիմիական մանրամասնությամբ, մինչեւ նոցա ընդդեմ մերժողությունքը

առանց բացատրության, լոկ Լավուազիի, Դեվի և Լի-բիզ հեղինակների անուններով, առանց ասում ենք, զոնք մասնավորապես հիշելու թե ինչ ճանապարհով հասել եյին այս հեղինակները իրենց մերժողական դրության: Այստեղ հիշվում է Լիբիզի 1844 ի կատարած քննողությունը միայն անունով, մինչդեռ Լիբիզը իր նամակների չորրորդ տպագրության մեջ, վոչ միայն մանրամասն և հիմնավոր կերպով խոսում ե ընդգեմ սքանչելի ինքնակիղության, 1850 թ. հետո կատարած քննողությամբ, այլև ավելվածի մեջ հանդես է հանել մի քանի հարցասիրության արժանի թղթակցությունք: Ցիմմերմանը, այն, չե ընդունում մեսմերականությունը, կամ «ինքնակիղությունը» և չե բնավ պաշտպանում: Բայց նոցա ընդդեմ կային բաներ, վոր ուսումնական գերմանացին զանց և արել մեջ բերել և մի քանի բանի ել զուր հանդես տվել:

Ահա այս տեսակ բաներ ամեն գիտությանց վերաբերյալ առաջնորդական գրքերի մեջ կարող են պատահիլ վորպես և մեր հիշած գրքի մեջ ել կան, վորոնց հեղինակը, յեթե այսոր գրելու լինելին այդ բաները, անշուշտ, այնպես գրելու չելին, այս պատճառով, այդպիսի գրքերի թարգմանիչը պիտի լավ գիտնա իր առարկան և գիտության ներկա վիճակը, վորպեսզի հնացած և արդեն մերժված մի գրություն չզնե ուսանել կամեցողի առջևը վորպես գիտության ներկա խոսքը:

Մեղ թվում ե, թե մեծ ծառայություն ցույց տված կլիներ ազգին, յեթե պ. Խատիսյանցը Թիֆլիսի մագնիսյան դիտանոցի արգո կառավարիչը, աշխատություն հանձն առնուր մեր հիշած ֆիզիկան հայերեն մշակելու: Անշուշտ, յեթե միայն դպրոցներում, համակարգաբարար ուսուաթալու կամ ուսանելու համար լիներ այդ մշակու-

թյունը, այն ժամանակ, Յագեն և Ժամեն ֆրանսիացի բնագետների հոյակապ Փիզիկաները իրենց կքաշելին մեր ուշադրությունը: Բայց մեր խոսքը հասարակ ժողովրդի ոգտին վրա յե, թեե, այն, Ցիմմերմանի Ցիլիկան վնչ բնավ տնողութ և և ուսանողներին:

Հակամետ եմ կարծել, վոր մեր գրագետքը կարդալով իմ մինչեւ այսեղ առաջ տարած խոսքերը, կամեն թե «այդ բոլորը մեղ մի անձանոթ կամ նոր բաներ չեն, մենք այդ ամենը գիտենք»: Յես լավ գիտեմ, վոր այն դուռը, վորտեղից յես եմ մտնում, բաց և ամեն մարդու համար և վկայում եմ, վոր ինձանից լավ իմացողներ եւ կան. բայց այդ ավելի վատ և նոցա համար, վոր ինձ պիտի ասեն, թե իրենք վաղուց գիտեն իմ ասածները: «Եթէ կոյրք էք ոչ էք մեղ. բայց արդ տեսանէք և մեղքն ձեր ի ձեղ հաստատեալ են»:

Խույսը և խավարը միմյանց այն աստիճանի ներհակ բաներ են, վոր յերկուքը միասին չեն կարող լինել մի տեղում. և յեթե մեր գրագետքը, վորպես սիրելի յե մեղ կարծել, ուզում են փարատել և մեղ որ առաջ տեսնել ազդի աղատությունը խավարից, ապա ուրեմն պիտի լույս գործ պնեն: Խավարը, վնչ ինքն իրեն կփառատի և վոչ խավարով կամ առասպեներով:

Մեղադրելի չե ժողովուրդը*, յեթե վաղում և դեպի

գերբնականը, մինչդեռ Արագածի վրա յերեցած լույսը իրողություն ե, իսկ նորա բնական պատճառը նորան անհայտ: Սոսկալի վասներ և ավելածությունք բերում են այս կանխամուտ կարծիքները, վոր առաջացած ելին աղիս կանխամուտ կարծիքները:

Անի քաղաքի բնական յերկրաշարժից*** կործանումը միթե չե վերագրվել մի վարդապետի նզովքի և այդ ավանդությունը մինչեւ այսոր նստած չե ազդի միջ: Հայաստանից այնքան բազմության գուրս գնալն, նորա թափառական պանդիսությունը Արևմտյան Յել-

Շինած արագ կոնճիլը Կախեթու զինին անուշ-անուշ խմիլը, կառնթով (կառք), զրաշկով, փառակոր, ուռած-ուռած ման գալը, զառ, զումաշ հազնիլ, մաշելը, նոքար բեքարի՝ ձեռին ջուր ածիլը, յերեսին հոլ տալը, տաք յորբանի տակին, փափոկ գոշակի միջում շնթոփին ու թափալ տալը, զառ ու զլուխ զարդարիլը՝ մեղ թե զժոփքը շտանին, գրախար ըսկի չեն տանիլ հարկիզ: Արովյանց, վերք Հայաստանի, յեր. 86:

*** Մի քանի յեւես առաջ առացինք, թե միջին զարերից հետառ յեկած նոր զարերը չանցան առանց ազգեցության. կարծում ենք, թե կարող ե ոգնել մեղ այդ բանը վորոց կերպով ցույց տալու համար, յեթե ասենք վոր տասն և ութ զալու սկզբում հայ վարդապետը, խոսելով յերկրաշարժության վրա, հաստատողապես վերագրում է նորան բնական պատճառի: Զենոր Դավիթ գիրքը, վոր առաջին անգամ տպված է Կոստանդնուպոլիս 1719 թ. (Տումարի ոճկը) ունի իր միջ այդ զիբքը տպել տվոլ Հովհաննես վարդապետի պատճապբական հիշատակարանը, ուր այս վարդապետը, 1709 թ. (ոճը) Տարոնում պատճաճ մեծ յերկրաշարժը այսպես և մեկնում. և զողմոց ներհակաց պատճենեալ ի ներքոյ երկըի, յանկարծ իսկ թնդամբ շարժեցաւ երկը ի հիմանէ անտի, սկսանիւրով յեկեղեց գաւառէն և հասանելով առ մեզ: Ավելորդ և ասեն վոր մեղք այս կարծիքի տերը չենք բայց առաջ բերինք վորպես վկայություն մեր խոսքին, վոր թե համկացողությունը նզովքից զեսլի սառերկըյա հողմերն և անցել արդեն առաջդիմություն և շե, déjà quelque chose!

* «Խավենի մեղքը չի, վոր ճամփից գուրս են եկել իրաք մոռացել. մեղ նման կարդացողի վոտները պետք և ծառիցը կապած, ամսով սոված պանած: Ախր թե շատ առնողիցը շատ կպահանջեն, բայ դատաստանի որը ինչ ջուզաբ կտան. ինձ նման զրի սեն ու սիպտակը իմացողները, վոր եւ ուղից բան չենք Փիքը անում, և նոց ուզում ենք լավ ուտենք, լավ խմնք, բահանան ձիու վրանստինք, չալչալ մանեթները ջերներում չխկչսկացներով, ձեռներնիս դողոզալով, խաղանելով ման դանք, քեփ ու մարաքյա անհնք:

բոպայի մեջ, նորա քաշածները և այդ պատճառով Շիրակի գավառի ամայանալը, վորպես նաև Անի քաղաքի ավերակ մնալը, այդ նպավիքի պատճառով չե: «Անի քաղաքը անիծված է, ով զոր այնտեղ բնակվի, նույնազես կանիծվի», այս չե մինչեւ այսոր ազգի ամենամեծ մասի գաղափարը: Ահա միջնադարյան սքանչելի ուղղության մեկ արդյունքն ել, այսպիսիներ վորքան կան: Մենք գրագետներ գիտենք (իրենք ասում են թե զրագետ են), վոր ժողովրդի աշքը բանալը հերետիկոսություն են համարում, հանդինաբար հրատարակելով: Կցանկանայինք իմանալ թե ժողովրդի մոլորության պատճառ լինելը, յերկրից յերկիր տարագրելը և բաղդի անգութ հարգածներին մատնելը, յուր սարոք, ինչ ուղղափառություն ե: Թնդ դժոխիքի գամբո մատենի մեջ գըե մեր անունը պարոն Բենեղեկերուղը, միայն թե մենք բյուրավոր ժողովրդի մահին, տառապանքին պատճառ յեղած չլինինք: «Ուխտիւք խնդրէի ես իսկ ինքն նղավ լինիլ ի Քրիստոսէ, վասն եղարց և աղականաց իմոց ըստ մարմնոյ, որ են իսրայէլացիք»: (Թուղթ Պօլոսի առ Հոռվմայեցիս, զլ Թ, համար 3):

Թնդ չկարծվի, թե մենք տղիտաբար զարմանում ենք այս նեղսիրտ և հալածասեր ուղղությանց վրա. քավ լիցի: Բոլոր Յեղուապան անցավ այդ կամուրջից, հայտնի յե, թե կարգը մեկ որ մեզ ել պիտի հասներ, և ուրախ ենք, վոր հասել ե. պատճառ, դա ցույց է տալիս մեզ ազգի առաջարժությունը: Մանավանդ սրտաշարժ և անմահ Գալիլեյի գլխի անցքը, վոր, իր աստեղաբաշխական և բնագիտական հավիտենական գյուտերի պատճառով, այլև կոպերնիկի տիեզերական համակարգությունը պաշտպանելով, իր յոթանասուն տարեկան հասակում հալածվեցավ տմարդի ինկվիզիոնից և չար-

չաբուկեցավ նորա խավար բանտերում: Այնտեղ ստիպեցին նորան գլխարաց և ծնկաչոք կարդալ մի արհամարհելի և պդգալի յերգմագիր*, — բոլորովին արժանի:

* 1637ի հունիսի 20ի հրովարտակով դատապարտվեցավ Գալելը, Աւրբանոս ութերսրդի (Հոռվմի պապի) ժամանակ: Ահա նորա հրաժարական յերգմագիր պատճենը, և Յես Գալիլեո Գալիլեյ, 70 տարեկան, հանգուցյալ Վենչենատ Գալիլեո Փլորենտացու վորդի, անձամբ, անձին ներկա լինելով դատարանի տուաչը և ծունկ չոքած ձեր առջեր, ով համաշխարհական քրիստոնեական հաստրակապետության որբազնագույն կարդինալը հերետիկոսական չարության ընդդեմ ընդհանրական ինկվիզիտարք, և աչքիս առաջը ունենալով սուրբ ավետարանը, վորին հպավորվում եմ իմ մեկան ձեռքերով, յերդնում եմ, թե միշտ հավատացել եմ, աչքմ հավատում եմ և, ասաւուծու ուղությամբ, միշտ պիտի հավատում այն ամեն բանին, ինչ զոր պահում ե, քարոզում ե և վարդապետում և սուրբ, հռովմակալուիկական, առաքելական յեկեղեցին Բայց վորովինեան որբազն դատարանը իր գատակնորդ հրամայեց ինձ բոլորին թողուլ այն սուս ուսումնը, վոր հաստատում եր, թե Արեգակը անշարժ կացած և տիեզերքի կենդրուում, իսկ Յերկիրը չե գտնվում այդ կենդրուում և շարժում ե, և վորովինեան յես պետք չեր, վոր այդ վարդապետության հետեւյի, նորան պաշտպանելի, վորեկցին կերպով ուսուցանելի, խոսքով թե զրավ և նորանից հետո, յերբ հայտնել եցին ինձ, թե այդ վարդապետությունը ընդդեմ և սուրբ ողբին, յես գրեցի և տպեցի մի գիրք, ուր խօսվում է Տիշված զատապարտված վարդապետության մասին, ուր սորա պաշտպանության համար առաջ են բերված սաստկապես համոզիչ փասեր և առանց վճառկան վերջարանության. այս պատճառով սաստիկ կասկածանքի տակ ձգեցի իմ անձը վորպես հետեւող այն հերետիկոսական վարդապետության, — թե անշարժ կանգնած և տիեզերքի կենդրուում Արեգակը և զու Յերկիրը, վոր շարժում ե: Այս պատճառով, ուղելով անհետացնել ձեր սրբադնությանց և ամեն կաթոլիկի մտքերից իմ ընդդեմ այդպիսի սաստիկ բայց արդարացի կասկածանքը, մաքուր սրտով, և ջերմենանդ հավատով, յես հրաժարվում եմ, նղոփում եմ և առում եմ զերը հիշած աղանդները և մոլորությունքը, և առհասարակ ամեն ուրիշ մոլորու-

նորա շարադրողներին, — և հրաժարվիլ իր սրտի վկա-
յությունից և աչքի հայտնի ճշմարտությունից: Բայց
յերբ գեռ բանը չեր հասել այդտեղ նա ունի զրած մի

թյուն, վոր ընդդեմ և սուրբ հոռվմակաթոլիկական յեկեղեցուն.
յես յերդնում եմ, վոր այսուենեաւ չպիտի ասեմ չպիտի հաստատեմ
վոչ բերանացի և վոչ զբավոր վոչ մեր բան, վոր կարող եր վերըս-
տին իմ ընդդեմ հանել այսպիսի կանկածանք, և թի իմանամ վո-
րեցից հերետիկասի կամ հերետիկառության կանկած ավորի մա-
սին, այն ժամանակ պիտի իմաց տամ և մատնեմ նորան ինկվի-
զիցինի սրբազն դատարանին, կամ ինկվիզիտորին այն տեղի,
ուր յես գտնվիմ: Բացի սորանից, յես յերդնում եմ և խոստանում
եմ, վոր կատարելապես կցնեմ և կբաշեմ բոլոր ապաշխարանքը,
վոր գրված են այժմ իմ վրա, կամ վոր այսուենեաւ կրթվին սրբա-
զան ինկվիզիցինի ձեռքոր, և յեթի յես հակառակ վարդիմ իմ
այժմ ասած խսքերից վորին և իցեւ հավատացնելուս, խստանա-
լուս և յերդումիս, վորից ասոված ազատե, այն ժամանակ յեն-
թարկում եմ պատիճներին, մահապարտության և տանջանքին,
վոր այս տեսակ հանցանքների համար գրված են սրբազն կա-
նոններով և ուրիշ ափեղերական և տեղական ժողովների վճռագա-
տությամբ Թող ոգնի ինձ աստվածը և նորա սուրբ ավետարանը,
վորին հպակորվում եմ սեփական ձեռքերով...»:

«1737 ին, գրեթե մի դար հետո Գալիլեյի վրա հանած այս
պիտի զատավճռից, վոր ինչպես մի անջնջելի արատ մնում է
ինկվիզիցինական դատարանի և զատակնիքը ստորագրող դատա-
վորների վրա, Սանտա-Կրոչ յեկեցու մեջ, տուկանական հան-
ձարեղ մարդերից ամենամեծի հիշատակի համար կանգնեցու-
ցին մի հոյակապ մարմարնյան արձան: Իննեղիկասո տանուչըր-
որդը վոչնչացուց ինկվիզիցինի զատավճիրը Գալիլեյի շարադ-
րության ընդդեմ: Յերկրի շարժողությունը—աստեղաբաշխության
հիմնական որհենքը, ընդդունված և ամեն տեղ և ամեն մարդուց,
վորպես յերկրայության տակ չընկնող ճշմարտություն, և մինչեւ
անգամ գաս և արքում Հոռոմի զպրոցում: (Ֆրանսուա Արագո,
Աստեղաբար, հատ. III, գիրք քսաներորդ, գլ. 3): Արդյոք սորան
ինչ կասե պ. Զամուռյանը նորա ուղղափառությամբ Ուրբա-
ռոս VІІІ եւ և Բհնեղիկասո XІV եւ համահավասար սուրբ, և

պատվական նամակ առ Madama Christina Grandu-
chessa madre, վորից գնում ենք հետեւյալ քաղվածը:
«Մենք մեր հայտնագործություններով չենք ուզում
խառնափնդորել բնությունը և մտքերը. չենք ուզում
կործանել գլխությունքը, այլ ուզում ենք լուսավորել
նորանց և ստույգ հիմք տալ նոցա: Մեր հակառակորդ-
քը սուտ և անսավածական են համարում այն բանը,
վոր իրենք չեն կարող հերքել: Նոքա պաշտպանվում
են կրօնի կեղծավոր նախանձավորությամբ, բայց
նվաստացնում են սուրբ գիրքը, հնար շինելով նորան

համահավասար անմեղանչականք են, բայց իրավ ընդդեմ վճիռ
հանած, սոցանից վորի՝ անոնը արդյոք պիտի զի Միջնադանան
հերետիկոսարանի մատյանում: Յեթի Յերեա կը զանգալի, թող
նորա ճուաբ պատասխանե—սրանչելի ժամանակը Յերդմազգի
պատմենը Արագոն առել և Դիլամբերի Աստեղաբար շաբաթը լուսա-
թյան պատմառությունից, այս գիրքը մենք չենք տեսած,
ուստի և չզիտնենք թե այն հոչակավոր յերկրաչափը ինչ աղբյու-
րից և հանել: Այն պատմառու այս յերկու խորը ասացինք, վոր
այդ յերդմազգիը մի փոքր այլայլությամբ (թեև վոչ եյական
բանում) տեսնում ենք Լավլասի Տիեզեղերական համակարգության»
մեջ. բայց սորանից, յեթի չեն խարում մեզ մեր հիշողությունը,
մեջ. բայց սորանից, յեթի չեն խարում մեզ մեր հիշողությունը,

թերեւ վոմանք ավելորդ համարին, թե ինչի համար հանդես
հանեցինք այս յերդմազգիը, մինչդեռ կարող ելինք միայն անու-
նը հիշելով հերթիւնաւ, պատմախանում ենք, պատմության ար-
դարության գործիք լինելու համար. թող մի լեզվով ավելի քա-
րոզվի այս նախատինքը հալածաներ մարդերի և անընկանելի հաղ-
թանակը զիտաւթյան Արդարությունը պահանջում և այս, «Եւ-
քաջքն լսելով զալցցն զգործան, յառաջազոյն քաջացելցն, անու-
անի յիշատակ թողցին զինի իւրեանց, անձանց և ազգի: Խոլ ծոյլքն
և վատքն հայիլով յանձինս, և լսելով զալցոց զպարսաւանս, ի բա-
րի նախանձն կրթեալք, ջանացին լաւանալ: Ղաղար Փարակցի.
Պատմ. Հայ. Վենետ. 1793, յեր. 14:

իրենց անձնական շահասիրության Բայց, առանց լսելու պետք չե գատապարտել մի հեղինակ, վոր չե դիպչում յեկեղեցական կանոնագրությանց, այլ ընության որենքներին և վոր մեկնում ե այդ որենքները աստեղաբաշխության և յերկրաչափության կանոններով: Ով վոր միշտ պատկերաբար հասկանում ե ամեն բան, այսպիսին պիտի վոր և Աստվածաշնչի մեջ հակասությունք և մինչեւ անդամ աստվածընդդեմ հայնոյությունք գտնեն, յերբ խոսք և լինում աստուծու աչքի, ձեռքի, կամ բարկության մասին: Յեթե ազգի խամության պատճառով հնարավոր ե այս, ապա ուրեմն ել ավելի հարկավոր եր աչքի տակ ունենալ այս խամությունը այն զատուգությանց մեջ, այնպիսի առարկաների մասին, վոր բնավ չեն յենթարկվում ամբոխի նկատողությանց և չեն դիպչում հոգու բարորության, —ինչպես են բնական գիտությունքը: Այս պատճառով խոսելով այդ գիտությանց վրա, չե կարելի յեկանացությունք հանել բիբլիական ասացվածներից, այլ նկատողություններից և հարկավոր փաստերից, վորովհետև և՛ բնությունը և՛ Աստվածաշնչը միորինակ գոյացած են աստվածային խոսքով: (Հուստոս Իիրիդ, նամակ 4. Տես և նորա ավելլածը):

Դառը բողոք, բայց վորքան տող, այնքան ձշմարտություն: Թող, միշտ որենիկ գիտության նահատակների անմահ և նախանձելի հիշատակը:

Միայն Երագածը չե, վոր ավել ե իր հարկը միջին դարերին, մեր վեհափառ Ազատ Մասիսը նույնպես ձգել [ե] այդ խավար դարերի գանձանակը իր լուման: Ով չգիտե Եջմիածնի «Լուսավորչու» ասված քամին, վոր ամառները ամեն իրիկուն արել մտնելու ժամանակ բարձրանում ե Մասիսի կողմից և զովացնում ե երգած

փոթոթված Արարատյան դաշտը: Արդարեւ, նայելով ցեղեկված ջերմության աստիճանին, ստուգապես կարելի յե ընդունել այդ քամին վորպես յերկնային պարզեւ: Յե ինքս, Եջմիածնի մեջ սեպտեմբերի սկզբում, սատկած ձուկի պես բերանս բաց մնացած, անհամբեր սպասում ելի, թե յերբ արել պիտի թեքվի, վոր իմ ալեով Մասիսի կենարաբ շունչը ինձ հասնի ու մի քիչ զուգացնե: Անշուշտ, մի վտանգ, մի մողորություն չկա և չե կարող լինել, յեթե ժողովուրդը չգիտե այս բանի գորությունը, բայց և այնպես գիտնալը ավելի ոգտակար համարելով, զրում ենք մի քանի տող, ներողություն խնդրելով ընթեցողից, վոր մեր գրվածքը շատ ճշուգավորվում ե այս անգամ:

Երել սաստիկ տաքացնում ե վորպես Արարատյան դաշտը, վոր ամեն կողմից զբեթե շրջապատված ե ապառաժ և մերկ սարերով, նույնպես և Արագածի վիթխարի քարակտուր մարմինը: Թողում եմ բոլոր դաշտե մեջ ցիր ու ցան ընկած, թե ավերակներից մնացած և թե սարերից յեկած տնհամար քարերը: Թեև, այս, վոչ փոքր բան են սոքա, վորովհետև բովանդակ դաշտը լիքն ե այսպիսի քարերով: Այս սարերը, դաշտը և քարերը արեի ձառագայթներից սաստիկ տաքանալով, չերմության բնական որենքով, վոր լայնացնում ե ամենայն մարմին, լայնացնում և անոսրացնում են Արարատյան դաշտի ողը: Հյուկեքը այս ողի, վոր անմիջաւոր շոշափում ելին տաքացած մարմիններին, լայնանալով և մի վորշշալ տաքածության մեջ ավելի տեղ բռնելով, քան թե սեղմ ողը, սկսում են կամաց կամաց բարձրանալ դեպի վեր և այս և պատճառը, վոր ջերմության ժամանակ անոսրանում ե այլուղի ողը և մի

վաստակեցուցիչ և վհատեցուցիչ ազգեցություն և գործում կազմվածքի վրա: Այս և պատճառը, վոր Արարատի ձյունական գոտին, չնայելով նորա աշխարհագրական դրության, այսինքն հյուսիսային լայնության, ավելի բարձր ե, քան թե նույն լայնության տակ յեղած ուրիշ սարերի ձյունական գոտին: Հաշվելով ծովի մակերեսութից, Արարատի ձյունական գոտու բարձրությունը հասնում է մինչև 13300 վոտնաչափ: Նույն այս որենքներով և պատճառներով Հիմալայան սարի ձյունական գոտին բարձր ե, քան թե կամ թե պիտի լիներ, յեթե նորա շրջապատը ընդարձակ և արեակեզ գաշտ յեղած չլիներ: Չյունական գոտին Մերսիկայի Անագվակա սարերի, վոր 20° ավելի հարավային դրությունը ունին (Արարատը մոտավորապես գտնվում է հյուս. լայն. 40° տակ, իսկ Անագվական մոտավորապես 20°) միմիայն 800 վոտնաչափ ավելի ցած ե, քան թե Արարատինը, լինելով 14100 վոտնաչափ:

Մարմինները ինչպես ջերմությունից լայնանում են, դորա հակառակ, ցրտից սեղմվում են: Արարատի հավիտենական ձյունները և սոսցանոցները շոշափող մըթնուրաը միշտ սեղմված և ճնշված վիճակի մեջ ե: Ասել ե, թե յերբ արեի ջերմությունից Արարատյան դաշտի ողը լայնանալով անսուրանում է և բարձրանում է դեպի վեր, յերբ մյուս կողմից Մասիսի ողը ցրտից ճընշված սեղմ և ավելի խիստ, ուրեմն ողի բնական զուգական թանգարակած և այդտեղ, պատճառ, բնական որենքով, հեղուկ և ողանման մարմինները ամեն կողմ հավասարապես ճնշելով պիտի մի մակերեսութիւն է մի հավասարապես ճնշելով պիտի մի մակերեսութիւն է մի հավասարապես այն, վոր Մասիսի ճնշված ողը պիտի վազելոցնել Արարատյան դաշտի ողի պակասությունը: Բայց

վորովհետև ջերմության ժամերը այնքան յերկար չեն, վորովհետև ողը անսուրանալով ստանում է նույնպես ավելի ձգականություն, վոր ինչպես վեր և բարձրանում, այնպես և ամեն կողմ, ուստի և ցերեկը չե կատարվում ողերի զուգակությունը, այլ այն ժամանակ, յերբ արեի ճառագայթքը ել այնպես չելին տաքացնում գաշտը, յերբ նորա ողը կամաց կամաց կորցնելով իր ձգականությունը սկսում եր սեղմվիլ այն ժամանակ, Մասիսի ողը, ել գիմաղրություն չգտնելով լայնացած ողից, սկսում և վազել զեպի գաշտը, պատճառելով այն ախորժ քամին: Այդ քամու ուժը միշտ համեմատ և ջերմության աստիճանին: Վորքան սաստիկ լինի ջերմությունը ցերեկը, այնքան ուժով կլինի քամին իրիկնապահին: Շատ ծովահայաց քաղաքները ունին իրենց իրիկնաքամին, վոր ծովից ե փշում, այն գիպվածներում ծովը կատարում է Մասիսի պաշտոնը, վորովհետև ջուրը ավելի վատ առաջնորդ լինելով ջերմության, նորա ողը ավելի խիստ ե, քան թե նավահանգստի կամ քաղաքի ողը, վոր անմիջական հարակցություն ունի ջերմության լավ առաջնորդ մարմինների հետ: Յերկու անգամ կանգնելով հնդկական Մաղրասի նավահանգստում և, մի քանի որ մնալով Սեյլան կղզու Գալլ քաղաքում (point de Galle), յես նույնպես վայելած եմ այս բնության զվարթարար պարզեց, եշ նահատակ յեղած լինելով ցերեկվա դժոխային ջերմությունից: Պետք եր ավելցնել թե տրոպիկական աշխարհների մշտական պասսարքը առաջանում ելին հիմնված լինելով եյապես այն պայմանների վրա, վորոնց մասին խոսեցանք. բայց մինք չենք ուզում ավելի ձգացնել բանը: Մեր գիտակորությունը եր մի համա-

առոտ տեղեկությունն տալ միայն «Հուսավորչության քամուն»:
Մենք հասած ենք մեր նպատակին:

Առաջ ենք գնում:

Առասարակ ալ. Պոռշյանցի ծանոթաբանությունքը
աջողակ չեն: Խոսելով հարսանիքի վորսի և մենամար-
տության մասին (յեր. 198), արդու հեղինակը այսպիս
և ծանոթաբանում. «Ես վորսի սովորությունը և մենա-
բարտությունը՝ կարծեմ մնացած պետք է լինի մեր նախ-
նի թագավորների ժամանակիցը, վոր առասարակ յեր-
բեմն յերբեմն զվարճության համար անում ելին»:

Ի՞նչ խոսք ե այս: Նախ, վոր մենամարտությունը և
վորսորդությունը թագի սեփական մի բան չե, վոր ուր
ել տեսնվի, թագավորներից մնացած կարծիք: Յեր-
բորդ, գնենք թե մեր պատմության հիշատակաբանքը
տեղ տեղ պահել են մեր թագավորների վորսորդու-
թյանց հիշատակը. շատ անգամ դատապարտելով նոցա
դրուսասիրությունը և ազգային կառավարությունը յե-
րեսի վրա ձգելը. բայց թե յերբեմն յերբեմն մենամար-
տում ելին նոքա զվարելոյան համար, այդ, առաջին
անգամ լրում ենք պ. Պոռշյանցից: Գոնե խոստովանում
ենք մեր տգիտությունը, վոր մենք չգիտենք, թե հա-
յոց թագավորները ներոնի որը ընկնելով զվարճության
համար հրապարակ ելին իջնում մենամարտելու: Զենք
էլ տեսնում պատմության մեջ, վոր մեր թագավորական
պալատներում կամ քաղաքներում յեղած լիներ այն-
պիսի սովորություն, ինչպես տեսնում ենք Հռովմի
լրկեսում, — զլադիտորներին (ըմբիշ), վոր առաջ մի-
այն ստրուկների գործ լինելով, հետո հոռվմելուական բար-
քի ընդիւնուը ապականության ժամանակ դարձավ
ազնիվ յերիտասարդների, պատրիկիլուսների, ծերակույց
մարդերի, այն, և նույնիսկ ներոնի սիրական գործը:

Բայց, ասենք թե թագավորները վորսորդության
ելին գնում, ասենք թե մենամարտում ելին յերբեմն-
յերբեմն զվարճության համար, ինչպես հավատացնում
ե մեզ մեր հեղինակը. բայց ինչ հարաբերություն կա
հարսանիքի սիմբոլական արարողությանց և թագավո-
րական զրուտականության մեջ: Փեսայի թե թուր կա-
ռուելը, թե վորսի գնալը, թե մենամարտությունը, այս
բոլորը իրենց սիմբոլական բնավորությամբ հարկա-
դրում են մեր կարծեր, թե զոքա շատ հին ժամանակնե-
րից, և թագավորներից առաջ ժամանակներից, մնա-
ցած արարողությունք են կամ այդ արարողությանց
փլրանքը: Մի յերիտասարդ ամուսնալով մի աղջկա
հետ, բարոյական պատուականությունք և առնում իր
վրա մարդկային ընկերության առջև պաշտպանել իր
ընտանիքը, կերպել նորան և առասարակ զետ գնել
մի կոպիտ ուժի, յեթե սա վորսիցի կերպով կամե-
նար վրդովիլ նորա ընտանեկան խաղաղությունը: Յեկ
մեզ թվում ե, թե թուր կապելը, վորսի գնալը և մե-
նամարտությունը ունին իրենց մեջ այս պայմանների
սիմբոլական խորհուրդը, վոր փեսան հրապարակով
ցույց ե տալիս և ապացուցանելով ընկերության իր
այրությունը և արժանավորությունը իրավամբ ստա-
նում և իր կինը:

Թե ինչ բանի նշան և թուրը, այդ մասին խոսիլն
ել ավելող ենք համարում*, իսկ վորսի համար ասում

* Այնակ մեր միտքը ընկապ շաբականի այն տեղը, վոր ա-
սում ե «...պէնս արքայական սպանման գործի կենաց արքային
ի կենաց գործին նույնակալ...»: Յեմ մենք հիշեցնք այս տողերը,
կարդալով պ. Պոռշյանի ծանոթաբանությունը (յեր. 189) թուրի
գիլանալած զրության մասին համեմատիք այս բոլորը չնաշխա-
չիկ Սբովյանի հոյակապ խոռոչերի հետ (Վերը Հայաստանի, յեր.

ևնք այսքան, վոր ամեն ազգ իր մանկության ժամանակ ապրել և և այժմ ևս վայրենիքը ապրում են վորսորդությամբ։ Տարակույս չկա, վոր և մեր ազգը անցել և մի անգամ զարդացման այդ աստիճանը, և մեր համար յեղած և յերբեմն ժամանակ, յերբ ամեն հարստության հայտարարքը եյխն զանազան կենդանիների մորթեր և փոսկորներ (զենք շինելու համար)։ Արդեն քաղաքակրթության մեջ մեծ առաջադիմություն և, յերբ մի վայրենի, թափառական վորսորդությամբ պարապող, ազգ, սկսում և յերկրագործության ձեռք զարկել բայց այդ բանը կարճ ժամանակում չել լինում, զարեր են անցնում, և ժողովուրդը արդեն ստացած և լինում շատ կանխամուտ կարծիքներ, բնական յերկույթների թյուրը ըմբռնողությունք և այլ հազար ու մի բան, վոր գալոց ավելի լուսավոր ժամանակը պիտի աշխատեր քերել այդ բոլորը։ Թե մինչև վմբ ժամանակ պարապել են հայք վորսորդությամբ. կամ, ավելի լավ, յերբ և մտել նոցա մեջ յերկրագործությունը, վորսես ընդհանուր ժողովրդի պարապմունք, այդ մասին պատմության եջերը դարտակ են մեացել։ Այսքանը հայտնի յե, վոր հայտատանը յերենք զարավոր խաղաղության յերեն տեսած չինելով, անդադար պատերազմերի, հարձակությանց կամ պաշտպանողությանց հանդիսարան յեղած լինելով, չե կարելի յենթաղրել, մանավանդ հին ժամանակների վերաբերությամբ, թե յերկրագործությունը յեղած լինի ընդհանուր ժողովրդի ապրուստի լծակը։ Այս մարդը, վոր կարող եր մած բռնել, նա ստիպված եր հետեւ հայրենիքի դրոշակին։ Թողնելով այս

118—121), ուր ընդպարձակած և կերպարանազործած և այս ոքանչելի զարապետությունը և ուր երված հեղինակը չի դիմացել վոր մի քանի տող ծանոթություն չդնե։

բոլորը վորսես լոկ յենթադրություն, ավելցնում ենք, թե Արտաշես Բ ի որով լսում ենք Խորենացու բերնից յերկրագործության տարածումը Հայաստանում, մինչև վոր այդ թագավորի որով անդործ յերկիր չկա յեղած Հայաստան։ Բայց չե կարելի սորանից յերգակացնել, թե այդ որից իսպառ ընկավ վորսորդությունը։ Դրեթե յերկու դար հետո ապրած Արշակ Գի ժամանակի վերաբերությամբ լսում ենք մեր յերանելի Ղազար Փարպեցու բերանից այնպիսի պատմությունք, ուր վորսորդությունը վոչ վերջին տեղն ունի**։ Մենք հատուկ այն զիտավորությամբ, թե յերբ ե սկսվել հայոց յերկրագործությունը, խուզարկություն արած չինք. այլ այս մի յերկու բանը, վոր վաղուց հայտնի յեր մեզ, հիշեցինք թողնելով մանրամասն քննությունը ազգային պատմության, մեզանից առավել հմուտ և ավելի ժամանակ ունեցող մարդերի։

Այս արարողությանց մասին մեր արած յենթադրությունքը ավելի չեն, քան թե մեր անձնուկան կարծիք և հիմնված են միմիայն անալոգիայի վրա։ Պ. Պողյանցը

* «Բայց ասի, ՚ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անդործ յաշխարհիս հայոց, ոչ լեռնային և ոչ զաշտային»։ Խորեն, Պատմ. Հ ա. գիրք Բ. գլ. 45. NB Խորենացու պատմությունից վկայություն ըերելով ինչպես արդեն նկատած և ընթերցողը, թղթահամարը չինք հիշում. պատճառը այն է, վոր մեր ձեռքում յեղած որինակը, թեև իիստ աղավաղ, բայց և այնպես, հազվագյուտ լինելով, նորա թղթահամարը ցույց տալը խորհուրդ չուներ Շատ հարց ու խնդիր արինք, վոր մի որինափոք պալագրության որինակ գտնեն Պետերբուրգում. բայց և այնպիս զգացան Ուստի և գործ եմ դնում այս աղավաղ որինակը Սա տպած և Ամստերդամ 1695ին Վանանդեցի Թովմաս յենիսկոպոսի տպարտնում։

** Ղազար Փարպ. Պատմ. Հ ա. գ. Վենետ. 1793, յեր. 21.

պատմելով, թե վիճան չե կարող կերակուր ուտել մինչև
վորսի չգնա և վորս չքերե, կարծում ենք, թե ավելի
ուժ է տալիս մեր յենթաղբության, պատճառ, ինչպես
ասացինք, վիճան ապացուցանում է զորսով թե կա-
րաղ և հոգալ իր ընտանիքի ապրուստը: Մենք կարծում
ենք, թե իրավունք չլա, առանց դրական ապացույցներ
ունենալու, ամեն մի հին ավանդության մնացորդ, տես-
նելու ժամանակ վաղել թագավորների քամակից, աղջը
մինչև թագավորության հասնելը, ստանում է և ստեղ-
ծում և իր ավանդությունքը, ծեսերը և արարողությու-
նը, վորոնք, այս, թե թագավորների ժամանակ և թե
նոցանից հետո ընկնում են դարերի ազդեցության տակ:
Հարկ չկա ասել, վոր ամեն բան հնացնող և մաշող ժա-
մանակը հնացնում է և մաշում և, այս, շատ անգամ և
իսպառ չքացնում է այս կամ այն ավանդությունը, այս
կամ այն ծեսը և սովորությունը: Շատ անգամ թերևս
այդ բոլորը մնալով գործադրության մեջ, այսուամենայ-
նիվ տալիս են դարերի ազդեցության իրենց հարկը.
Նոքա զրկվում են իրենց ներքին խորհրդից և դառնում
են մի պիտակ բան, ինչպես այսոր դարձել են այն բո-
լոր արարողությունքը, վորոնց մասին յեղավ մեր խոս-
քը, պատճառ կյանքի և ընկերական պայմանքը փոխ-
ված են:

Մենք չենք ուզում մեղադրել կատաղած շան ավան-
դության մասին հեղինակի հաստատղական ծանոթա-
բանությունքը: Չենք մեղադրում այն պատճառով, վոր
նա հավատացած զրում և այդ բանը, ինչպես բովան-
դակ գտվառը հավատում ե: Բայց մեր արդարացի մե-
ղադրությունը թող հասնի մեր բժիշկ յեղացրակից-
ներին, վոր տասներով գտնվում են այսոր Արարատյան
աշխարհում և զորոնք ամեն որ լսելով այս սքանչելի

բժշկության մասին, մինչև այժմ չեն ձգել նորան ու-
սումնական քննության տակ, ստուգելու համար նախ,
թե Փարպի գնացող ուխտավորքը, իրավ, կատաղած
շան խածած եյին և ջրվախություն ունեյին (Hydro-
fobia), թե առողջ շան խածած, կամ Սոսի նման ջրվախ
եյին, վոր իր Փարպի գնացը Գարեգնի առջև արդա-
րացնելու համար սուտ ու մուտ բաներ եր հնարում,
յերկրորդ, յեթե, ստուգավես, կատաղած շան խածած
եյին և ջրվախություն ունենալով արդարե Փարպի
գնացով բժշկվում եյին, ապա ուրեմն նոցա բժշկության
բնական պատճառը, վոր անհնար և թե չլինի, յեթե
ջրվախը բժշկվում է: Ինչ վոր մեջ և վերաբերվում,
մինք խոստովանում ենք, վոր թեև շատ ենք լսած այդ
սքանչելի բժշկության պատմությունը, այնուամենայ-
նիվ սաստիկ յերկրայություն ունինք հիվանդ ուխտա-
վորների ջրվախության մասին և կարծում ենք, թե
դոքա Սոսի նման ջրվախներ են:

Խտալիո մեջ ավանդություն կար, վոր թե մորմը
(սարդածե կենդանի Tarantula lycosa—տարանտուլ, մի-
ցիր) մի մարդ կամ մանավանդ մի աղջիկ խայթե, դո-
րա միակ ճարը պար գալն և պար գալ բաղմությամբ,
խմբովին, վոչ այնպես համբաշարժ, ինչպես մեր «կուռ-

* Ինձ կարող են ասել թե վորովհեան գիտությունը չե կա-
ռող թույլ տալ արդամիսի սքանչելի բժշկություն, ուստի և նոքա
տուանց վերստին քննելով չեն ընդունում: Բոլորովին
համաձայն եմ, ուրեմն, թող փարատեն մառախուզը, թող հրապա-
րակով հասկացնեն ժողովրդին ճշմարտությունը: Բայց ապացու-
ցանելու համար ժողովրդին գիտության ճշմարտությունը հարկա-
վոր են իրողությունք և վոչ լոկ խոսք: Խոկ իրողությունքը պի-
տի նկատմամբ, ուրեմն և բուն տեղում և վոչ հեռվից: Լոկ քարո-
զով վոչինչ չես ցինիլ:

բռնուկը» կամ ոռւսաց ԽՈՐՈՎՈԾԸ (մոլդովանների մեջ ել կա մի այդպիսի կուռ բոնուկ), այլ շատ արագությամբ, այնպես վոր ել ուժ չմնա պարը շարունակելու: Յերկարագործական աշխատությանց ժամանակ, յերբ աղջկը չեր ուզում բանիլ կամ թե ուզում եր իր սիրականին տեսնել, հերիք եր վոր մի աղաղակ բարձրացներ, թե մորմը խայթեց: Խակույն, բոլոր բանվորները թե պատանիքը և թե աղջկիները թողում եյին իրենց աշխատությունը: Հարկավոր եր հոգի փրկել. ովկարող եր մեղաղերել: Ակնթարթի մեջ զլվում եր Տարանտելլան (tarantella պարի անուն է): Ծույլը զբունում եր, սիրահարքը հանդիպում եյին միմյանց, պար գալիս իրար հետ, տեսություն եյին նշանակում կամ մի նշանաբան դնում: Յեվ յերբ ամենքն ել իրենց ցանկության հասած եյին, մորմից խայթված աղջիկը առողջանում եր, արեն ել մտնելու վրա, ուստի ամենքն ել գոհանալով ուրախութրախ դնում են իրենց տունը: Ովկարող եր ասել թե Տարանտելլան (մորմապար?) պատվական հնարյ չե, կամ զորություն չունի մորմի խայթոցի ընդդեմ, յերբ աշխարհ, արարած իր աշքով տեսնում ե, վոր երեկ մորմից չարաչար խայթված (?) աղջկը, մյուս որ վորջ առողջ բանում ե իր բանը:

Հիվանդների լուս ու անխոս դնալու մասին (Փարպի) կամ նոցա գլխին ձիու սանձ փաթաթելու վերաբերությամբ (արդյոք եշի սանձը ի՞նչպես ե, բնավ զորություն չունի), չնայելով մեր հեղինակի արած ծանոթաբանությանը, մենք վոչինչ դրական բան չենք կարող ասել, վորովհետեւ այդ յերկու արարողությանց կամ պայմանների մեջ մի աղջվություն չենք տեսնում, վոր բնության մեջ տեղ ունենար և հակամետ ենք կարծել, թե դոքանացնացության ավելորդու-

թյունքը լինին: Ասիացին, վորի յերկակայությունը միշտ բորբոքված ե (Ասիան առնում ենք միայն բարեխառն և ջերմաշխարհների վերաբերությամբ) գաղտնախորհուրդ և սիմբոլական բաներով, շատ հասարակ արարողությունքն ել գիտե խճողել զանազան նշանական ձևերով և պայմաններով,—զարդ խարեբայության, —վորոնք թեև ըստ եյության վոչինչ խորհուրդ կամ գորություն չունին, բայց և այնպես ամբոխի աչքին յերեցող լինելով, ստիպում են բերանաբաց ժողովրդին խորհուրդ յենթագրել այդ բանների մեջ: Հայտնի յե թե հնարողը, կամ նորա քարոզը հոչակիվում ե խոր փիլիսոփա, պատճառ, նա միայն գիտե այդ բոլորի գաղտնիքը և նորա ձեռքին և խորհրդավոր և զերբնական գիտությանց բանալիքը: Միթե ավելի մեղավոր են Բուղդայի բոնզերը և Բրահմայի բրամինները:

Սոս և Վարդիթերի մեջ կարելի յեր ել մի քանի այսպիսի ցնդի ավանդությունք գտնել. բայց իրավուածենք, ձանձրացանք այս հիմար բաններից. վերջին անգամ ասում ենք, թե այսպիսի բանները ներգործում են խեղճ և պարզամիտ ժողովրդի վրա այնպես, ինչպես հաշիցը կազմվածքի վրա, ուստի պարտական ենք ամենայն խնամով արմատախիլ անել այդպիսիքը և մաքրել հայկական անդաստանը: Ահա մեր վերջին խոսքը:

Պ. Պոռշյանցը, վոխարեբաբար առնված վոճերի և ձեւերի բուն նշանակությունը չե բացատրում, թողնելով «հետախույզ բանագիտաց», ինչպես ասում ե հառաջաբանի վերջին տողերում: Այս շատ անզործադրելի գաղափար ե: Մարդը մեղավոր յեղավ, վոր հետախույզ բանասեր դարձավ, վոր նստի ծանր ու բարակ վոճերի բառարան շինե: Ասենք, թե գլուխիք քարը տվեց ու շի-

նեց, հետո այդ բառարանը պիտի տպե, հրատարակե, վզր Սոս և Վարդիթերի «հետախույզ բանասեր» չեղող կարգացողքը,—պարզ մահկանացութքը հասկանան այն փոխարերական ձևերը և վոճերը, վոր առաջ չեյին հասկացել և վորոնք, այն, շատ տեղ ալ ու համ եյին տալիս գործին: Միթե ավելի լավ և ավելի հարմար չեր, վոր հեղինակը ինքը բացատրեր, քան թե թողում և «հետախույզ բանասիրաց»:

Յեթե ստույգը տանը, մեր քննության այն մասը, վոր նվիրված եր թերություններին Սոս և Վարդիթեր գործի, վորովես վիպասանության, պրծավ:

Մենք չենք ուզում քննության տակ ձգել հեղինակի լեզուն և նորա շատ ձախ հառաջարանությունը. վերջինս յեթե չկներ, առավել գոհ պիտի լինելինք:

Հեղինակի լեզու տաելով չենք իմանում Աշտարակի բարբառը, վորով գրված և գործի բնագիրը, ուր կամ իմաստ քիչ խառնել և հեղինակը Աշտարակի բարբառի մեջ ուսար ձեւ, ուսար վոճ, կամ բնավոչ, այլ նորա հառաջարանի լեզուն: Յեվ հեղինակը, ուզելով իր գործը այդ բարբառով զբեւ վոր կարգացողը վոչ միայն Աշտարակի վարքի բարքի, այլ նորա լեզվի վրա ել տեղեկություն ստանա, վոչ միայն մեղադրելի չե, վոչ միայն ազատ և այդ լեզվի մասին սլատասխանաւությունից, այլև մեծ շնորհակալության արժանի: Մենք կարող ենք վորեմից գավառական բարբառ քննել սորվիլ տեսնել նորա արժանավորությունքը և թերությունքը, բայց, այսչափ միայն: Ինչպես մի հեղինակի կարող ենք ասել «թե ինչի այս ձեւը այսպիս ես գործ դնում կամ այնպիս», այդպես չենք կարող խոսել հադարների և բյուրերի հետ: Հեղինակը շատ անդամ ազատ և այս ու այն ձեւը գործ դնել կամ չդնել. բայց

մի գավառի բնակիչ (մեր խոսքը բում հասարակ ժողովրդի վրա յե) չունի այդ ազատությունը: Նա այնպիս միայն կարող է խոսել ինչպես խոսում և ամբողջ ընկերությունը, վորին անդամ և և ինքը խոսողը: Իսկ այդ ընկերության բարբառը կերպարանագործվել և աշխարհագրական և բնության ազգեցությանց տակ. պատմական գեղքերը չեն անցել նորա վրայից, առանց իրենց հետքը խոր զրոշմելու, և բարբառները նոցանցուցած կյանքի բնական արդյունքն են: Հայտնի յե, թե վոչ մեկ մարդ պատասխանատու չե, թե ինչի մի վորոյցալ տեղում այնպես և ազդել բնությունը և վոչ այսպիս, թե ինչի պատահել են այս կամ այն պատմական գեղքերը և ինչի համար այնպիսի ուզզություն և ստացել հասարակաց կյանքը, վորի արդյունքը, բնականաբար, յեղել և այս կամ այն գավառական բարբառը: Յեվ վորովհետեւ բնության և պատմության ազդեցությանց մասին պատասխանատու չե մարդը, ուրեմն և պատասխանատու չե և վոչ իսկ պախարակելի կամ ծաղրելի, յեթե մի սարսափելի ավերանքի տակ և ընկել այդ լեզուն: Սովորական վոճով խոսելով գործ գրինք ավերանք բառը, ապա թե վոչ փիլմովիայբար ուզիդ մտածությամբ վոչ դրական կատարելություն կա և վոչ դրական ավերանք մի լեզվի, վոր ժամանակների պիտույքին հարմար լցնում եր իր պաշտոնը: Նեղորտությունն և կատարելություն տեսնել, կատարելություն խոսովանիլ հին լեզուն տիրապես և աղճատանք համարել նորը զբականապես: Ի՞նչ պիտի պատասխանեն մեզ, յեթե հարցնենք, թե ինչ բանում և կատարելությունը «առուր ինձ զնաց» կամ ուր և աղճատանքը՝ յեթե առում ենք «հաց առուր ինձ».—Երթալ ի տուն, —տուն յերթալ և այլն և այլն: Սոքա բոլորը տղայա-

կան չնշին և խելացնոր բաներ են, ձգտողություն,
ընության և անցած գնացած ժամանակի վրա բռնա-
նալու: Եղիքի խորհուրդը ձեր մեջ չե, այլ իրի մեջ. յեթե
յես «հաց տուր ինձ» ասելով հասկանում եմ այն, ինչ
վոր 4000 տարի առաջ հասկացնում եյին «տուր ինձ
դիաց» ասելով, իեղուն կատարում եր պաշտոնը լիքը
չափով: Ել այստեղ իրավունք չկա, բաղդատական գե-
ղեցկությունք կամ կատարելությունք հանդես հանելու.
ինչ իրավունք վոր ուներ 4000 տարի առաջ ապրած
հայը այսպես խոսել, նույն իրավունքին համազոր իրա-
վունք ունի այժմյան հայը այսպես խոսել. ով հավան
չե, գնա գերեզմանները փնտու 4000 տարի առաջ մե-
ռուածներին և այդ մեռելների հետ խոսի: Իսկ մենք, կեն-
դանիքս, վոր գիտենք խոստովանի ժամանակի և պատ-
մության իրավունքը, չենք կարող կենդանիքը. թողած
մեռելների հետ խոսել: Այս դրությունից պարզ յերեսում
ե, թե վոր աստիճանի թեթեամություն և այս կամ
այն գալառական բարբառը ծաղրելը, և նորանով խո-
սողի վրա, վորպես մի ստոր և խեղճ եցակի վրա նայելը,
վորպես թե այն մարդը հանցանք և զործել: Ո՞հ, յեղ-
ջերավոր հիմարություն: Ներկա և կենդանի սերունդը
անցածի և մեռածի գերեին չե. իսկ ով վոր ուզում ե
կամայաբար իր կենդանությունը ուրանալով և իրա-
վունքից հրաժարվելով, իր վիզը դնել անցածի լուծի
տակ այնպիսուն ասելիք չունինք:

Յեթե ցանկալի և հոգով չափ ցանկալի յե նոր լեզվի
համազգային միուրյունը, ապա ուրեմն պիտի ուրա-
խությամբ վողջունել մի ամբողջ գործ, վոր կատարված
եր վորեիցե գալառական բարբառվ. պատճառ, նոր
լեզվի հիմնավոր գիտությունը, նորա մշակությունը և

առաջտարությունը վորպես նաև ապագա միության
գաղափարը առանց այդ գավառական բարբառների ոգ-
նության անեղեակայելի յե անգամ: Մեր այստեղ
քարոզած դրությունը պաշտպանելու համար հավաքած
ենք շատ փաստեր. բայց այստեղ, մեր հատվածի նեղ
շրջանակը չե ներում աղատ ընթացք տալ նոցա: Բայց
այսչափ անհրաժեշտ ենք համարում ասել վոր ստրկա-
նալով հին լեզվին, առանց ժողովրդին ականջ դնելու,
լեզվի նոր ծլած ձեերը, վոր դեռ թարմ են և կերպա-
րանազորձվելու վրա կապելով և ճշշելով անցածի և մե-
ռածի պատանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղա-
փարը ազգին համար դառնում ե նույնալես ամուլ և ան-
պտուղ, ինչպես հին և մեռած լեզվի գործադրության
գալառակարը: Անշուշտ, այս խոսքերը չեն նշանակում,
թե հին լեզվի լծից ազատելով նոր լեզվի մշակությունը
պիտի դնել այս կամ այն գալառական բարբառի լծի
տակ: Տեղական կամ գալառական բարբառը ազգի ընդ-
հանուրի համար գործնական արժեք չունի և նոր լեզվուն
այս կամ այն գալառական բարբառի տակ, դրականա-
պես մշակելու գաղափարը նույնալես ամուլ և անգոր-
ծադրելի յե, ինչպես հին լեզվի գաղափարը. ինչպես
սորա ստրկության տակ աճած նոր լեզվի գաղափարը:
Այս տեսակ մշակությունը արգեն իրենց սկզբունքով
հակասական են նոր լեզվի մշակության սկզբունքին,
վոր և վորքան կարելի յե առավել շատ և առավել մեծ
վոր և վորքան կարելի յե առավել շատ և առավել մեծ
վորմության հականակի կերպով խոսել: Այս պատճա-
ռագմության հականակի լեզվով նայելի և մշակվի ինքնուրույ-
նաբար, առանց ամենեկին հին լեզվից խպնելու, առանց
գալառական բարբառների կամ ուսար լեզուների աղ-
գալառությանց ստրկանալու: Բոլոր գալառական բար-
բառների եյական տարերքը, վոր իրենց ձեռվ և կազ-

մությամբ ավելի ընդունակ են, կենդանի—ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնին ճարտար հեղինակների քուրայի մեջ և այնտեղ քիմիաբար միանալով պիտի դուրս գան «ոչ որպէս թլպատութիւն կամ անթլպատութիւն, այլ որպէս նոր արարած»։ Ծանր խնդիր և այս և իր բնությամբ շատ ժամանակի կարու, բայց գոնե, այս և մեր ճանապարհը, այս և մեր պարտականությունը, վոր ինչքան մեր ուժը կտանի ձգտինք այս խնդիրը լուծելու։ Հարկ չկա ասել, վոր այս բանի համար հարկավոր ե շրջանկատ ուսումնասիրություն մշակող հեղինակների կողմից։ Այն նորելուկ պատանին, վոր տակալին նոր իջած մի վորպիսի և իցե խեղճ դպրոցի նստարանից զրիչ և առնում ձեռքը և ազգի դժբախտությունից լցնում և մի քանի վայրիվերո թերթեր եռդիմածի և որագրի անուններով, այդպիսիքը, առում ենք, այնքան կարող են ոգնել լեզվի մշակության, վորքան մի վորելիցե մարդ առնված վորելիցե անկիրթ հասարակությունից։ Այս խոսքերը թող չվհատեցնեն նորանց, մենք վոչ թե չենք ուզում, վոր շատանան մեր հեղինակը, այլ, դորա հակառակ Մովսիսի հետ ենք ասում. «Ո՛ տայր ինձ զամենայն իսրայէլ ի մարդարէս», բայց մարդարե լինին մարդարեյի նման։

Ուզերով մշակել, կոկել և միություն տալ մեր նոր լեզվին, չպիտի փոքրոգությամբ սրանեղինք թե ինչի մեկ կամ հինգ տարում չե շինվում ինչ վոր մենք ուզում ենք։ Այն վոր հազար տարիներով տարբեր աշխարհների և տարբեր գեղքերի տակ գոյացել ե, և ամեն տեղ ել այդ տարբեր ազգեցությանց կնիքը կը բում և իր վրա. բայց սորանից, այդ հազար տարիների միջոցում ամեն մեր լեզվի մոտից անցնող թուրք թաթար, պարսիկ, արաբացի, սուս, Սարգիս Բուլա-

բացու զյոով պես մի քար և ձգել բնականաբար անհնար ե, վոր մի ակնթարթում շինվի, կոկի և պայծառանա։ Այստեղ հարկավոր և համբերություն և հարատեկ արիաջան աշխատություն։

Մի փոքր առաջ պ. Պոռշյանցի հառաջարանի անունը տալով, ձախ ածականով մկրտեցինք նորանքայց այդ 8 յերես հառաջարանի մեջ կա մի առողջ կտոր, և այս և նորա միտքը, թե ցանկալի յե, վոր ամեն գրագետ, իր յերկրում յեղած, մեր ազգի վարքը, բարքը, սովորութքը, ծեսերը, հասկացողությունքը, նոցա բարոյական և այն և այն վիճակը լույս հանե ու ազգի առջև դնե։ Այս խոսքերը և այս գաղափարը ամենայն ընդունելության արժանի բաներ են և սոցա ընդդեմ վոչ մեր և վոչ ուրիշի կողմից ասելիք կա։

Հեղինակը վերջացնելով իր հառաջարանը, այսպես և ասում. «Մեծ հույս ունիմք, թե ազգը կընդունի Սոս և Վարդիթերը, վորպես մի տկար պատանու նըշվաստ յերկասիրություն»։

Վհճ, յերանի՛ թե մեր ամեն պատանիքը այդպես լինելին, այն ժամանակ, Կոմս Եմմանուելի և Մեշուիս չայլի արտասուրքը վաղուց և վաղուց սրբված կլինելին։

Սխալում ե պ. Պոռշյանցը. ազգը ընդունեց այդ գործը (և իրավունք չուներ չընդունելու) վորպես ապագայում ավելի մեծ հույսեր տվող յերխասարդ բանաստեղծի մի աշխատություն, «Յեվ հայրաբար ներուամիտ կլինի նա»—շարունակում և հեղինակը — սորա միջի բազմապատիկ թերություններին»։

Պ. Պոռշյանցը շնորհակալության և հարգության և արժանի և վոչ ներողության, նա հանցանք չե գործել վոր ներողության կարուտի. նորա աշխատության եյտական արժանավորությունքը շատ և շոշափելի յեն, մինչ-

մությամբ պիտի ընդունակ են, կենդանի—ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնին ճարտար հեղինակների քուրայի մեջ և այնտեղ քիմիաբար միանալով պիտի դուրս գան «ոչ որպէս թլպատութիւն» կամ «անթլպատութիւն», այլ որպէս «որպարած»։ Ծանր խնդիր ե այս և իր բնությամբ շատ ժամանակի կարոտ, բայց գոնե, այս և մեր ճանապարհը, այս և մեր պարտականությունը, վոր ինչքան մեր ուժը կտանի ձգտինք այս խնդիրը լուծելու։ Հարկ չկա ասել վոր այս բանի համար հարկավոր ե շրջանկատ ուսումնասիրություն մշակող հեղինակների կողմից։ Այն նորելուկ պատանին, վոր տակավին նոր իջած մի վորպիսի և իցե խեղճ գովրոցի նստարանից գրիչ և առնում ձեռքը և ազգի գժրախտությունից լցնում և մի քանի վայրիվերո թերթեր հոդվածի և որագրի անուններով, այդպիսիքը, առում ենք, այնքան կարող են ոզնել լեզվի մշակության, վորքան մի վորմիցե մարդ առնված վորմիցե անկիրթ հասարակությունից։ Այս խոսքերը թող չվհատեցնեն նորանց. մենք վոչ թե չենք ուզում, վոր շատանան մեր հեղինակքը, այլ դուրս հակառակ Մովսիսի հետ ենք ասում. «Ո՛ տայր ինձ զամենայն իսրայէլ ի մարդարէս», բայց մարդարէ լինին մարդարէյի նման։

Ուգելով մշակել կոկել և միություն տալ մեր նոր լեզվին, չպիտի փոքրոգությամբ սրտնեղինք թե ինչի մեկ կամ հինգ տարում չե շինվում ինչ վոր մենք ուղղում ենք։ Այն վոր հաղար տարիներով տարբեր աշխարհների և տարբեր դեպքերի տակ գոյացել ե, և ամեն տեղ ել այդ տարբեր ազդեցությանց կնիքը կը բում և իր վրա. բացի սորանից, այդ հաղար տարիների միջոցում ամեն մեր լեզվի մոտից անցնող թուրք թաթար, պարսիկ, արաբացի, սուս, Սարգիս Բուլսա-

բացու զյոսի պես մի քար և ձգել ընականաբար անհնատը և, վոր մի ակնթարթում զինվի, կոկվի և պայծառանա։ Այստեղ հարկավոր ե համբերություն և հարատե արիաջան աշխատություն։

Մի փոքր առաջ պ, Պոռշյանցի հառաջաբանի անունը տալով, ձախ ածականով մկրտեցինք նորանը բայց այդ 8 յերես հառաջաբանի մեջ կա մի առողջ կտոր, և այս և նորա միտքը, թե ցանկալի յե, վոր ամեն զբագես, իր յերկրում յեղած, մեր ազգի վարքը, բարքը, սովորույթքը, ծեսերը, հասկացողությունքը, նոցա բարոյական և այլն և այլն վիճակը լույս հանե ու ազգի առջև գնե։ Այս խոսքերը և այս գաղափարը ամենայն ընդունելության արժանի բաներ են և սոցա ընդգեմ վոչ մեր և վոչ ուրիշի կողմից ասելիք կա։

Հեղինակը վերջացնելով իր հառաջաբանը, այսպես և ասում. «Մեծ հույս ունիմք, թե ազգը կընդունի Սոս և Վարդիթերը, վորպես մի տկար պատանու նըշաստ յերկասիրություն։»

Վճար, յերանի թե մեր ամեն պատանիքը այդպես լինելին, այն ժամանակ, Կոմս Եմմանուելի և Մեշուխելինքի արտասուրքը վաղուց և վաղուց սրբված կինելին։ Հայի արտասուրքը վաղուց և վաղուց սրբված կինելին։

Սիսալվում ե պ. Պոռշյանցը. ազգը ընդունեց այդ գործը (և իրավունք չուներ չընդունելու) վորպես ապագայում ավելի մեծ հույսեր տվող յերիտասարդ բանաստեղծի մի աշխատություն, «Յեվ հայրաբար ներուղամիտ կլինի նա»—շարունակում ե հեղինակը — «սորա միջի բազմապատիկ թերություններին»։

Պ. Պոռշյանցը շնորհակալության և հարգության և արժանի և վոչ ներողության. նա հանցանք չե գործել վոր ներողության կարոտի. նորա աշխատության եյտական արժանավորությունքը շատ և շոշափելի յեն, մինչ-

գեռ թերությունքը չնշին և աննշան։ Այս, կան մարդիկ, և մենք իսկ մի քանիսը նորանցից տեսել ենք, վոր ուրիշ արժանավորությունը խոստովանելուց այնպես են փախչում, ինչպես «սատանան խունկից»։ այդ մարդիկը իրենք չունենալով մի արժանավորություն, համարում են ձեռք բերել նորան ուրիշների արժանավորությունքը ուրանալով, այս, շատ անդամ արատավորելով վոչ միայն հեղինակի գործը, այլ և նորա անձը։

Պ. Պոռշյանցը չե կարող բացառություն լինելով չհանգիպած լինել այնպիսի դատողությանց, վոր ավազակարար կամենում եյին կողոպտել հեղինակից այն, ինչ վոր անկողոպտելի յե։ Մենք ասում ենք այս խոսքը, վորովինետե մի քանի այդպիսի ինքնահավան և անգործ մարդերից լինել ենք զանազան խոսքեր Սոս և Վարդիթերի վրա։ Տակավին ներելով նորանց, չենք ուզում վերագրել նոցա անհավանությունը մի կամավոր կուրության, վատ խորհրդով, այլ անդիտության և թյուր հասկացողության բանաստեղծության մասին։

Մեր հետեւյալ խոսքերի մեջ վերստին կլսեն այդպիսի անձինքը այն, ինչ վոր բերանացի արդեն ասել եյինք, գուցե այս կրկնությամբ բժշկի նոցա միտքը։

Յեթե այն պատճառով պիտի մեղադրվէ հեղինակը, վոր նորա գործի մեջ անկատարությունք կան, հարցնում ենք. «վորի՞ գործն և կատարյալ»։ Այսոր Միւտոնը և Շեկսպիրը, Հոմերոսը և Դանթեն ազատ չեն անկատարություններից, մեր պատվելի փիլիսոփայքը միթե այս ել գեռ չգիտեն։ Պետք չե մոռնալ, վոր այս մարդիկը, վորոնց անունը տվինք, են ամենամեծ բանաստեղծքը, վոր յերբեմցե ծնել են լուսնի տակ։ Բը նությունը յերբեք չե իրագործում կատարելության գաղափարը մեկ անհատի մեջ, հետեւ

ծի մեջ։ բնության զուգակշռող հիմնական որենքին զեմ և այդ։ Կատարելության գաղափարը այնպիսի մեծքան և, վոր մեկ առանձին առնված հոգի, թող լիներ նա ամենամեծը մահկանացուներից, այնուամենայնիվ բացական չե տանել նորա մեծությունը. կատարելության բնակարանը և բովանդակ մարդկության հոգին։

Յեթե պ. Պոռշյանցը չե ստեղծել կամ չե նկարագրում մեզ բնավորությունքը այնպես, վոր աստիճանատարիան աճելին ու հասակ առնուին կարդացողի առջե, դորա փոխանակ հասարակաց կյանքի նկարագիրը շատ վառուն և կենդանի գույներ ունին և այդ հասարակության մեջ ապրող բնավորությանց այս կամ այն մոմենտները հիանալու արժանի հարազատություն։ Բայց սորանցից, պ. Պոռշյանցը արդյօք չըպիտի՞ գուրս յեկած վիսեր բնականությունից, յեթե հայկական կյանքի մեջ (ընդհանուր առքով) յերևեցներ մեզ այնպիսի բնավորությունք, վոր սկզբից մինչեւ վերջը աճում եյին լոգիկաբար։ Յեվ հայոց կյանքը մյուն վիճակում և ներկայումս, ուր այդպիսի բնավորությունքը (ընդհանուր առքով) մտացածին չհամարվելին։ Ամեն բանից առաջ քննելիքը և ազգի կյանքը. վորովինետե այդ կյանքն և բանաստեղծի հիմքը, վորի վրա կառուցանում և նա իր շինվածքը։ Հայտնի յեթե ազգն ել մեղավոր չե, յեթե նորա կյանքը չե յերեւեցնում այսոր այնպիսի բնավորությունք և յերեւելոյնք, վոր չկան Սոս և Վարդիթերի մեջ։ Նոցա աճելության համար հարկավոր և հող, հարկավոր են պայմաններ և հնարներ, վորոնցից գուրկ ենք այսոր և վորոնց թերությունը գուցե թե լցնե լուսավորությու-

Նը մի մասով, յեթե գիտությունը վոտք կոխէ Հայաստան:

Բայց ինչ վոր ներկայումս կա Աշտարակում, ինչ վիճակում վոր և այդ գեղի կյանքը, այդ լուրը մեզ հասկացնելու համար իր բոլոր ջանքը գործ և դրել հեղինակը. վաչ միայն մաքուր խղճմտանքով, այլ և շատ լավ հասկացած լինելով և ըմբռնելով իր խնդիրը. Այնպիսի բարակ, հոգերանական և շատերի աչքից անզգավի կերպով թաշող անցնող յերեսոյթներ և բըռնել և ամրացրել թղթի վրա, և այն, պարզ, բնական և անզարդ խոսքերի միջնորդությամբ, այնպիսի հարազատություն ունին այդ տեղերը, վոր մենք, չնայելով վոր մեր հատվածը վաղուց անցել և սովորական չափից, չենք կարող մի քանիսը ցույց չտալ. Այս, պարտական ենք ցույց տալ, վորովհետեւ մինչև այժմ թերությունքն ենք միայն ցույց տվել վորովհետեւ արժանավորության մասին ընդհանրապես ենք միայն խոսել: Բայց կատարել այս պարտականությունը, և այն քիչ, թերթերի մեջ հեշտ չե. վորովհետեւ բովանդակ գործը, բացի մեր հիշած թեթև անկատարություններից վորովրված և մի բնական արժանավորությամբ, այնպես, վոր մարդ չե իմանում, թե վորի քամակից դնա և վիրը ցույց տա: Մենք կաշխատենք մի քանի բան հանգիս հանել խորհուրդ տալով ամեն հայի, վոր առնու այդ գիրքը և ինքը կարգա, վորովհետեւ անհնար և նորա բովանդակ արժանավորությունը մի քանի յերեսի մեջ տեղակել:

Արժանավորության կարգ ենք դնուած, գործի սկզբանց մինչև վերջը բնության նկարագրությունը: Այդ պարզ, մինույն ժամանակ հոյակապ նկարագրությանց

մեջ չկա և վոչ մի կեղծ գիծ: Սարերը, գաշտերը, այշգիքը, տարու յեղանակները, նոցա աղքեցությունքը լեզու յեն առել հեղինակի գրչի տակ:

Արժանավորության կարգ ենք դնուած Անուշի նկարագրությունը (յեր. 15), ուր զարմանալի հարազատությամբ յերեսում և Անուշի մեջ մի հայ աղջիկ: Սոսը խնդրում և նորանից ծաղկաղարդ կիրակի որը իր քաշած մանուշակները Վարդիթերին տալ յեկեղեցում: Անուշը սրտով ուղղում և կատարել իր ազգականի խընդիրը, բայց իր սեռի սեփական ամոթխածությունը ստիպում և նորան հողդհողդվել: «Լավ, տուր տեսնեմ,— ասում և նա Սոսին,—վայ թուք ու բեղնամ ըլնիմ յես, տեսնեմ յերեսս կըռնի, վոր ասեմ Սոսն ա զրկել. համա թե վոր խոռվի չի առնի, հետո արի եշը ցիրիցը գու հանա, փալանը գու զգի, նոխտեն գու գլուխը տուր, ել ինձանում մեղք չկա»:

Յեկեղեցու մեջ, յերկար բարակ Վարդիթերի հետ մտերմարար խոսելուց հետո, յերբ Անուշը հայտնում և նորան մանուշակների մասին և ասում և, թե ինքը չեք հոժարում վիզ առնուլ այդ հանձնարարությունը, վախելով, թե մի գուցե Վարդիթերի սիրոը ցավեցնե, բայց հարկադրվելով իր յեղոր Գարեգնի խոռքերից, կատարում և, Վարդիթերը, թեև սաստիկ ուրախացել և և չե իմանում թե ինչպես ձեռք ձգե մանուշակները, այնուամենայնիվ կանացի խորամանկությամբ նույն վայրկենին չե բացում իր սիրոը Անուշի առջև. «Բա, ինձ տուր, յես քու աղպոր զարավաշն եմ (աղտախին), — ասում և նա, — նրա աղիզ խաթեր համար թեկուզ քարափիցն ել վեր կընկնիմ, ջուրն ել կընկնիմ, հուրն ել. նրա հրամանը կատարելու համար վեր կառնեմ ամեն թուք ու մուրն ել»:

Տեղն ե, վոր մեկը ասե նորան. «Քո հորն վոզորմի՛,
թե դու Գարեգնի հրամանը կատարելու համար միայն
ընդունում ես այդ մանուշակները»:

Բայց մի քանի վայրկենից հետո, իր սիրտը կատարելապես բանալով Անուշի առջև և ամսպելով Սոսին հասցնել իր գաթան, տուրմ ե, վոր ինքը հաստատ եր սիրու մեջ և խնդրում ե, վոր Սոսն ել խոսքին հաստատ մնա. «համա, իմ աղլուխը քու գլուխը, յես տղա, դու աղջիկ, թե վոր ինձանից հետ կաննես»,— տուրմ ե նա Սոսին, Անուշի բերնով:

Շատ քաղցր ե գալիս մեր անկանջին, յերբ լսում ենք հայկական անբռնադատ խոսքը, յերբ այդ ձայնը դուրս ե գալիս ուղղակի աղգի սրտից, աղգի հասկացողությունից, յերբ նա թունավորված չե արյենտական բարոյականությունից, վոր յերեւմ և չինական պատշաճների մեջ և վորի տակ տնօրում և այսոր նույնի խել լուսավորյալ Յելլուպան:

Ծաղկաղարդ կիրակին առնասարակ մեծ աջողություն և ջերել հեղինակի գրչին: Յեկեղեցու մեջ ժողովրդի նվարագրությունը, Փառք ի բարձունաը, աղոց ձեռ* ու ճոճանակները**; պառավելքի բարձրախոս ա—

* Այսպիսի մի խաղալիք նոր նախիչնան ել կա, այսուեղ ձը ու ձը ու հ նորա անունը: Ապրիլի 23-ին սուրբ Գեորգի յեկեղեցու կարգից դուրս ուլսան և լինում և այդ տոնը տեսում ե յերեք որ: Այդ որերում բոլոր նախիչնանի կնանիք, աղջիկ և յերիստասարդք կամ յեկեղեցու պարսպի մեջ են, կամ պարսպից դուրսը, ուր փոքրիկ վաճառատոն և լինում: Լոկ այդ որերում ածում են յերեխայք լրենց ճշուදըները, բայց վոչ յեկեղեցու մեջ: Յերբ այդ տոնը անցավ, ել ճըռճը չե յերեւմ, մինչև առաջիկա տարին:

** Ծաղկաղարդի ճոճանակի, այսոր, գոնի հազար տարեկանից ավելի լինելը յերկայության տակ չե ընկնում: Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսը (Հովհաննես պատմաբան կաթողիկոսը չե,

դաղակը, յերիտասարդ տղոց աղջիկ տեսնելու համար ժամի զուանը հավաքվիլը, այս բոլորը շատ պատվական են: Իսկ ինչ վոր վերաբերվում է քահանայի բարկության, տղոց ձեռերի և ճոճանակների հանած աղաղակի համար, քահանայի բնավորության հարազատությանը, մենք ուղում ենք լուկ, վոր հեղինակը խոսի: «Յերեխեքը... ճոճանակներն ու ձեռերը ածեցին (յեր, 19). լսատոնց ձենը տերտերի ձենին կոխեց, վոչով բան չեր կարում իմանալ Փառք ի բարձումից, տերտերը շատ ել բարկացավ, վար մինին ասես... մինը չի տասը չի... չարեն կարեց խեղճ յերիցի, քոն փոշիման յեկավ տեղը կաննեց, ու թու, թու, ասեց, կոտորվիք դուք, ջըհըդի ժամ շինեցին ելի: Ես ինչ սովորություն ա տո՞»:

Մեզ շատ շարժել և Աշտարակի կանանց ջերմ կրոնասիրությունը, ուր տեսնում ենք ճանկական պարզամտություն, ներողամտություն, և ուր բարեկաշտ ու առաքինի հայ կինը իսկույն ճանաչվում ե: Փարագուճանապարհի բանն եմ ասում: Յերբ Համասիյուորը բարկացած Սոսենց խաղ ասելու վրա, անիծախանն խոսքեր և հանում բերնից և նախատում և Վարդիթերին, այն խեղճ կնանիքը մեղագրում են նորա բարկությունը և անպատշաճ են համարում: «Քա, ընչի՞ յես ևս բարի լոի առաջին, սուրբ ըխտի ճամփին բերանդ փիս բաց

նորանից առաջ և ապրել իմաստասերը) իր ատենաբանությամբ վկայում ե այս բանին: Անավասիկ նորա խոսքերը. ոռպէս և ի պալստեանն աւուր սոսան ամբանալ և ճոճանակս շարժելու: Մեզ հայտնի չե, յեղած և արդյոք այս բանը հունական յեկեղեցու մեջ, կամ կամ արդյոք այժմ Յեթե այդ բանը հուներից չե մտել մեր մեջ, գուցե ներփի յենթագրել, վոր մենքնից լինի յեկած: Հայկազ, բառար Վեհսետ, 1836—37 ճոճանակ բառին քշոցի նման մի բանի նշանակություն և արված. կարելի յե հուսաւ վոր Աշտարակի ճոճանակը հասկացնե թե ծաղկագարդի ճոճանակը քշոցից տարրեր ե,

անում...»: Այս տողերը արտապրած ժամանակս, ասես թէ կենդանի ձայնով լսում եյի այս խոսքերը հայ կնոջ բերնից, այնչափ բնական և այնչափ հարազատ են նոռքա նորա հասկացողության, մտքերին և տրաժարանության:

97, 98, 99 և 100 ըդ յերեսներում, Վարդիթերի հոր և մոր խոսակցությունքը և սոցանից յերեցած կյանքի պատկերը այն աստիճանի գեղեցկություն ունին, վոր մենք չենք կարող մեր խոսքերով բացարեր իսկ մեջ բերել հեղինակի գրվածը նույնական չենք կարող, վորովհետև ամբողջ այդ յերեսները պիտի արտագրեյինք, դուրս ձգելու վոչ թէ բան, այլի բառ չկա: Մենք հերիքանում ենք այդ յերեսների թվանշանքը ցույց տալով:

Սոս և Վարդիթերի ընթերցողներին հայտնի յէ Վարդավառի անցքը, ուր Վարդիթերի մայրը նշանում է իր դուստրը Սոսի հետ և համբուրել տալիս: Մենք ուղղում ենք մեջ բերել պառավի այն խոսքերը միայն, վոր նաև Հանսավանքից տուն գառնալուց և Հեթումի առջև բոլոր անցքը ուրանալուց հետո, չե հերիքանում է իր անձը միայն արդարացնելով, այլ և դատապարտում և դրսեգուրս խոսողներին: «Ը՞հ, հոգս գրանց ասառւսա գլխին, — ասում ե նա, — թող ենքան հաշան, հոգիները գուրս դա, քա, թեշան, ես ինչ կրակ ա, ամոթ չունին ըստոնք, ինչ բերաններից դուրս ա դալի քցում են, փառք աստըծու, վոչ ով չի մեռել, յերես յերեսի կլնինք, են վախտն ի՞նչ կասենած:

Բանն այն ե, վոր դրսի խոսքերը բոլորը ճշմարիտ են, և յեթե բանը յերես յերեսի գալու ընկնի, տարակույց չկա, վոր իր ստությունը պիտի բռնվի: բայց և այն պես խորամանկ պառավիլը ոգուս և քաղում այն ազդե-

ցությունից, վոր այս, դրականապես խոսելու ձեզ անում ե իր երկա վրան: Հեղինակը քաջ հասկացել ե այդ տեսակ պառավների և ընդհանրապես կանացի բնության ձգականությունը:

Հայտնի յե թէ այս մի քանի բանը մեջ բերելով, մենք վոչ միայն ինչ վոր այս տեսակ ընտիր տեղեր կար չհատցրինք, այլ մեջ բերածն ել տկար կերպով ստորագրեցինք: Այս տեսակ հոգեբանական յերեսությունը պետք ե, վոր ամեն մարդ իր մտքով ու սրտով հասկանա, ուրիշի խոսքով արված նկարագրությունը թույլ է լինում, մանավանդ յերբ ամբողջ բանի ընթացքից մի կտոր և դուրս բերվում: Գհնե մենք ավելի աջողակությունն չունինք այս բանում:

Նկարագրելով Աշտարակի, վորով գրեթե և բյուրավոր ուրիշ հայերի բարոյական անմեղությունքը, հեղինակը չե մոռանում տեղատեղ նոցա բարոյական խոցերն ել բանալ, չե մոռանում խարազանել անբարոյականությունը:

Հեթումը, այնքան հասած վորդոց տեր, այնքան այդիների տեր, ծերացած և մի վոտքը գերեզմանի մեջ, այնուամենայնիվ (յեր. 86) կապում ե ուրիշի այցու ջուրը և առու բացում դեպի իր այգին, «իմ վորորմածիկ հորիցը ես եմ տեսել ասելով», մինչդեռ ջրի հերթը իրենը չե, այլ իր խեղճ հարևանին: Հարևանը տեսնում է բանը և բողոքում ե: Հեթումը պատասխանում ե, «վորդի, քու արել, յես խարար չեմ, կըլնի վոր ջուրն ինքն ա ծակելը և այլն: Խեղճ հարևանը գիտե, վոր Հեթումը սուտ ե խոսում: աղաչում ե նորան, «Հեթում աիեր, — ասում ե վորորմիլին, — քեզ արքայություն ըլունի, կտրես վոչ, ինչ ունինք չունինք չորացել աս: Բայց չնայելով այս բոլորի վրա, այն խեղճի հեռանալուց հետո,

Հեթումը նորից քանդում և ջրի ճանապարհը և հարեւ-
վանի ջուրը կտրում: Պետք եր վոր Հեթումի պես մար-
դիկը խրատ առնվին այս բանից, մանավանդ հեղինա-
կը, Հեթումի այս անիրավ գործի միջոցին, Փափակին
ուղարկում ե, վոր իմաց տա Հեթումին Վաղարշակինց
Արշակի մեռնիլը: Պարզ ե, թե արդո հեղինակը կրոնա-
բար ուղում և ազգել այդախիների քարացած լուղա-
մանքի վրա, կամ գննե բարոյապես, յերբ հիշեցնում
և նորան աշխարհի յերեսին մահ լինիլը: Վնի, յեթե
կրոնը ազգեր բարոյականության վրա, յերկիրը դրախտ
յեղած կլիներ. բայց ուր ե:

Նույնպես Բագրատ աղան (յեր. 139—140), Սոսի
անունով յերեք վոչխար և առնում թուրքից և Սոսին
վոչ միայն մեկ հատ ցույց տալիս, այլ պահանջում ե,
վոր նա այն մեկն ել մենակ չուտես, այլ իրեն և տա-
նուտերին (քեռխվա) ել հրավիրե: Ազնիվ յերիտասար-
դը հասկանում և բանի զորությունը և շատ քնքուշ-
կերպով խայտառակում և Բագրատ աղայի խարերա-
յությունը և նենդությունը: Նա, այն մեկիցն ել հրա-
ժարվելով առում ե, «Չորհակալ եմ, աղա... են մի վոչ-
խարն ել քեզ բաշխեցի. թող ասեն վնչ, Սոսը իր որումը
կաշառք ա կերել»:

Պ. Աբովյանցը (Վերք Հայաստանի. յեր. 37) մեկ
քանաքեցու այսպես և ասել տալիս իր ինամի Հա-
րությունին, «աստծո սարին, քարին դիպչի, քամին
տանի... քո գլուխը վոր կա, սար ա, անձրե, ձին, կար-
կուտ, կայծակ թող դիպչի ել զա ել թնչ վեճդ ա»:

Բագրատ առայի գլուխը խնամի Հարությունի գըլ-
խիցը շատ պինդ ե, Սոսի խոսքերը նորա պեսին թնչ
կազմե: Յեկ իրանի, վոր տեսեք, թե թնչ անամոթ լրու-
թյամբ պատասխան և տալիս: «Ասզրիս, վորդի, խելոք

ևս խոսում, ոձի փուշը լակակը (արագիլ) կմարսի...:
Քեզ որ տեսնում եմ, դու, վոչ միայն ոձի փուշ,
մասթողոնի* վոլոքն ել կմարսես...

Մենք մեր կողմից շնորհակալություն ենք հայտ-
նում արգո հեղինակին, վոր բացում և ազգի այս տե-
սակ բարոյական խոցերը, վոր ծածկված մալով վոչ
միայն կարող են փտիլ այլ իրենց վարակիչ վորա-
կությամբ շատ կորատաբեր լինել: Սոքա ընդհանուրը
մարդկության խոցեր են և վոչ լոկ մեր ազգին սեփա-
կան. թերեւ շատ, ընդհանուրի, խոցերից ազատ և մեր
ազգը: Զկարծեն, թե այս խոսքերը ասելով խունկ ենք
ծխում ազգին, վոչ. միայն ճշմարտությունն ենք խոս-
տովանում: Կուգեյին, վոր ավելի ասենք, ահավասիկ, ու-
րիշ, նաև լուսավոր ասված, ազգերի բարոյականությու-
նը (ազգ ասելով հասկանում ենք հասարակ ժողովուրդը)
շատ ցած և հայոց ազգի բարոյականությունից: Մենք
կարգում ենք լուսավոր աշխարհներում կործված հան-
ցանքների և վոճիրների վիճակագրությունը և տա-
րեգիրքը. այս տողերը զրելու միջոցին, մի քանի այդ-
պիսի գրքեր ընկած են պատուհանիս վրա, մեզ սար-
սափեցնելու համար: Թեպետ մեր ազգի մասին չու-
նինք այսպիսի գրքեր, բայց կենդանի ազգը, վորի
հետ փոքր ի շատե ծանօթ ենք, առնում ենք վորպես
մի անխարդախ գիրք, և համեմատելով ուրիշների վի-

* Զըհեղեղից առաջ ապրած մի ահազին խոտանարակ ե, պատ-
կանում և հաստամորթ կամ բազմակճղակ կենդանիներին: Այժ-
մյան փեղը, վոր իր մեծությամբ մեզ զարմացնում ե, կարող և մի-
այն մասթողոնի ձագը լինել: Սյո կենդանու մինչեւ այժմ հայտ-
նված նշխարհներից, ամենալավ կմափքը պահպանվում է Ղոնդանի
Բրիտանական մուզեունի մեջ: Խոշոր կենդանին երես ական-
ջը խոսի:

ճակագրությանց հետ, ասում ենք այն խոսքը, թե
մեր ազգը շատ խոցերից ազատ ե:

Բայց, չնայելով սորա վրա, յերեցած խոցերն ել
պիտի բանալ և բժշկել: Թեև մի փոքր հիվանդ լինելը
մերձիմահ հիվանդությունից անհամեմնտ լավ ե, սա-
կայն, կատարյալ առողջությունը կամ առողջանալու
համար աշխատելը ավելի լավ:

Աշտարակ գեղի հասարակաց տեսչության և հա-
սարակաց տնտեսության մասին մենք լսում ենք մի
շատ պարզ և սրտաշարժ խոսակցություն, յերբ Սո-
սենք, կիշերով, արագ են քաշում իրենց այգում:

Դառը բողոք լսվում է Վայկունի բերնից. «մեր գե-
ղի ամեն բանն ել լավ ա, ափսոս վոր քեղխուգեքն ու
տանուտերը մի քիչ շահասեր են. ես ի՞նչ ա, հիմի
խարջ են կիտում, յես մի խեղճ մարդ եմ, նրանք ի՞նչ
վոր ի՞նձ կհամեր խարջը տալու, երկու ենքան են ա-
ռել. սաքի ասում են, վոր գեղի մեջին տարեկան մաս-
րաֆ ա ելել փշացել ա, պաի լրացնենք, համա վմբ տեղ,
քոմմա իրանք են ուսում, քյասիբ քյուսիբի տունը
քանդում, իրանցը շինում. յես գրողամիա մի հիքի ու-
նիմ, ի՞նձ տարել են զոռով կապել իրեք հիքատիրոնջ
հետ, թե արի խարջ տներ, ել չեն ասում թե աչառը
կոմշի հետ կարմ լուծ անիլ» (յեր. 169):

Տիրություն ե գալիս մեր վրա, յերբ հիշում ենք,
թե հարստահարված յերկրագործ կամ շինականը բըռ-
նագատված ե լուռ մնալ իր հարստահարողների ընդդեմ
և միայն գիշերով, ծածուլ, խորհրդական առանձնու-
թյան մեջ բողոքել յերբ վոչ վոք չեր լսում նորա բո-
ղոքը...

Սոսի կարծիքը այս տեսակ բամբառված ազդային
կառավարիչների մասին, թեև մենք պատրաստ ենք

ընդունել վորպես մի չար յերգիծաբանություն, բայց
խոստովանում ենք ցավելով, վոր շատ մարդ ստուգա-
պես այդ կարծիքի տեր ե: «Այ տղա, ի՞նչ ես խալիսի
վոտը քաշում, Վայկուն, — ասում ե Սոսը, — եղ վհր գե-
ղումը չի մասրաֆ ըլնիլ մի մովլով (կառավարության
աստիճանավոր) կամ յեսավուլ, վոր գալիս ա բա նը-
րան հաց չի՞ պետքը, պատիվ չի՞ պետքը, հավի միս
չի՞ պետքը, զառը, զինի, արադ չի՞ պետքը. դու քու
յերեխին, վոր մի կապա յես կարում, թե եքսի որը
խոսքիցդ դուս ա զալի, ասում ես, թե այ վորդի, քեզ
շոր կարեցի, վոր ի՞նձ անկաջ անես, դու ջիս (իսպան)
քառանկաջ (խուլ) զառար, հիմի նս մեր վրա ի՞նչքան
ա միտք անում, մեր աղեն ա, վոր տեսություն գնանք,
բա մի կարսո զինի, մի հինդ լիտը արադ չպատի տա-
նինք, հավողի ժամանակ ա զալի, թազա հավող, լավ
գեղձը, չի հարկավոր տանինք, ես հո մենակ մեղ հա-
մար չի՞ սազ աշխարքի որենքն ըտենց ա, դու քու
բարությունիցն ես տանում, աբարանցին ել տանում
ա նրա ձիանոնց տարեկան զարին, քուրզը՝ նրա զա-
ռըն ու վոչսարը, թուրքի՝ նրա յեղն ու պանիրը, զաշ-
ուրցին՝ յոնջեն, ցորենը. ամեն մարդ ել իրան գեղի
զոնվածից տանում ա նրան»:

— Սոս ջան, — պատասխանում է Վայկունը, — եղ
զրուստ ես ասում, համա ի՞նչքան ել վոր ըլնի, եղքան
շատ մասրաֆ խարջ չի ըլնիլ սրա միշին մեր իշխան-
ներն ել են շահվում»:

— Յես արմանում եմ քեզ վրա, — խոսքի մեջ և մըտ-
նում Սոսի մեծ յեղբայր Պարետը, — այ տղա, բաս իշ-
խանները քու հոր մշակն են, վոր ամեն մովլով,
վարդապետ, մենձ մարդ զալուս, տանում են իրանց
տանը վեր բերում, իրանց յերեխի ըերնինը կարում,

նրանց ուստացնում, հալբաթ վոր մի շահմունք չունենա, ընչի կանի, նա ել քեզ պես մի մարդ»:

Բայց Վայկունը ել առաջ և տանում իր բողոքը, — ի՞նչ են խարջում, յեղն ել հացն ել, միսն ել, ամեն բանն ել գեղիցը գգիրը մինի տեղակ հնգապատիկ հավաքում առ ու բերում. ով գիտի թե ընչանք կրում ա, վոր մովրովը գնալուց հետո տասն որ ուսում են չի հատնում. մի տունն անրանն ըլնում. յես ել վոր ընենց տուն ունենայի, են աղեքանց վոտը կպաչեյի, իմ տանըս վեր կրերեյի, խոսքս կշտին կտրուկ կըլներ, ում տունն ուղեյի կքանդեյի, ումն ուղեյի կշինեյի. ձիս վոր դհովն ուղեյի, գենը կքշեյի. հիմի մովրովը գալուս, թեզով իշխանն ա զնում գլուխ տալի, բարովում, աղավար խոսում, հետը նստում վեր կենում. համա յես, վոր տեսնում եմ եկալ, գլուխս առնում եմ կորչում, թե հիմի գգիրը կքցի ճիպոտի տակը. (!) թե արի ձին բռնի, տար գոմումդ պահի, խոտ, գարի տնը, մովրովի համար ճուտ տար. իշխանների տանն ա վեր գալի, աղքատների տունն ա քանդվում. հո սուտ չի: Հիմի ասենք թե դու ինձանից համբա յես, քո տանն ել վոչով չի վեր դալի, համա յես իմ աղքատ տեղովս քեզանից շատ եմ խարջ տալի, կոռ քաշում, ձի տալի. թե յես ու դուն ել մի կոփի անենք, թե երկու մարդ իմ բարեկամներից իմ դիմը քաշի, տասը մարդ գեղիցը քու դիմը կպահեն, ընդուր վոր գիտեն, թե դու ինձանից լավ ես, քեզնից խեր կհանեն, համա ինձնից, ութ արարի չարչարվին, չոր վոսկոսից սավահի վոչինչ չեն կարող գտնիլ. շատ ել ասենք են կալումը յես արդար ըլնիմ, վայն. եկել ա ինձ տարել. թե կերթամ մովրովին կգանդատեմ, յերբ վոր քեզ կուղի նա, հետդ գեղիցը մի թուղթ կբերես, թե գանգատողն ինքն ա

մեղա վոր (!!), են վախտը մովրովը քեզ բաց կթողա ինձ կծեծի (!!) հետո, հալբաթ, դու ել մի կարաս գիւնի կխոստանաս, կբարձես ձիուդ ու կտանիս:

— Վայկուն ափոր խոսքերն ավետարանի կողքին գրիած են, — ասում ե Արշամը, Սոսի փոքր յեղբայրը, Սոսին ու Պարետին, — սաքի ընչի յեզ յերկու յերեսանություն անում, կողմանալահ ըլնում. հիմի, ես հո մեր պապական հիքին ա, ուղենան կխեն կտան ուրիշի (!!). քանի, քանի որինակներ կան, վոր ընչանք քեզաից մի ողուտ չեն ունեցել բանըդ չեն շինելու»:

Արշամի բերնով խոսում ե նոր ժամանակների վորդին: Պարետը և Սոսը գուցե իրենց սրտում ընդունում են Վայկունի խոսքերի ճշմարտությունը, բայց վախենում են հայտնի գալանել ճշմարտությունը: Արշամը իր սերունդի յերենցուցիչն ե. նա վոչ միայն ընդունում ե այդ դառը խոսքերի ճշմարտությունը, այլ գատապարտում ե իր յեղբարց յերկու յերեսանությունը: Ինչպես առաջ ել ասացինք, ափսանն, վոր շատ քիչ հանդես ունի [Սոս և] Վարդիթերի մեջ այն ուղղությունը, վոր յերկում ե Արշամում, թեև այս չափիցն ել տեսնում ենք կենարար սկեպտիցիզմի արած աղեցությունը: Մենք աջողություն և ընթացք ենք մաղթում այդ յերկնային գեսպանին:

Պ. Պոռշյանցը Աշտարակի տնտեսական վիճակը և հասկացողությունքը յերեան հանելով, այնպիսի փափուկ և անզգալի կերպով մեղաղբում ե այդ հասկացողությանց սխալականությունը, վոր ամեն կարդացողի համար, խոկի մեղաղբանքի կարգում ել չեն: Սոս և Վարդիթերից գննե, յեթե վոչ ուրիշ աղբյուրից, շատերին հայտնի յե, թե բոլոր աշտարակցիք այգեգործությամբ են պարապում. այդ և նոցա աղբյուրի մի-

ակ ճանապարհը։ Տեսնք այժմ, թէ ինչ աջողականությամբ մեղադրում ե հեղինակը։

Սու և Վարդիթերը կարդացողի մտքին կլինին յերեցանցի ուխտավոր յերիտասարդքը, վոր Հանա-վանք յերթալու ժամանակ, ճանապարհի վրա, ընկան իրենց բարեկամ Գարեգնի ձեռքը, վոր մի փոքր հանգստացնելու համար տարավ իր տունը (յեր. 107—109)։ Նա, խաղող զնելով նոցա տոշեց, ներողություն և խնդրում, վոր մի ուրիշ բանով չե կտրնում մեծարել, վորովհետեւ սունը մարդ չկա, ամենքն ել հիքունն են, աշտարակցունն ել եղ մի հիքին ա, — ասում ե նա։ — Գալունք ծագում ա աչքերը տնկում են նրա վրեն. ընչանք մասսիլ վեր են ունում՝ իրանցն իրանց ա համունում, աղպակը, դուք, քաղքեցիք եք, վորըդ ասուսուրի յեք, վորպակը վեշակի*, մեջներիդ պարապ մարդ չկա, ունչալարն ըստ վեշակի»։

* Հայոց արհեստագիտությունը շատ վողալի վիճակում ե այսոր, դորա վրա հարկավոր եր մի փոքր մտածել ու աշխատել որիոր արհեստագիտությունը ծաղկեցներ Մեր կարծիքով, կանուխ թէ ուշ, այս բանը ուրիշ կերպ չե վիճի յեթե վոչ աշակերտներ ուղղակելով Մռուկա և Պետերբուրդ, վոչ թէ դպրոցներում, այլ գործականապես, վարպետների կամ կործարանների մեջ այս կամ այն արհեստը սորվելու համար. Յեթե հայը, չնայելով արհեստագիտություն թշվառ վիճակին մեր յերկուում, այնուամենայնիվ առաջական կամ այս այս կամ այն արհեստը սորվելու համար այդ արհեստների ավելի կամ տարյալը ձեռք բերելու համար իր վարդին չուզարկել այս կամ այն մայրաքաղաքը. Ամեն տեղ աշակերտը ձրի ծառայում ե իր վարպետին 4—5 տարի, այս ե և մայրաքաղաքների սովորությունը, ուրեմն այս կողմից ել խափանարար պատճառ չկար, վոր հայը նորանից ստիպվելով նախընտիր համարեր իր յերկը արհեստը, վորով պարապողներ միշտ աղքատ են։

Ստույդ ե, այդ քաղաքներում պետք ե բարեկալա հայեր ճանաչել վոր հայրաբար խնամք ունենային այն աշակերտաց

ել (յերկրագործ) իրացանքս ու վարքին ա, աշխատում տարեկան հացը տուն լցնում. տավար, վոչխար, գոմեշ, ձի, գութան, չութ պահում. հացը, յեղը, պանիրը, բուրպը,

վըա, հորդորելով, խրատելով, բարի որինակ տալով, ժրաջանության, առաքինության, աշխատանիրության և չափավորության, վորպեսզի աշակերտը արհեստից առաջ, ընդհանրապես աբեկատագործ մոլորությանց մեջ չմեղքվեր Ստույդ ե, հեռու տեղերից Մռուկա կամ Պետերբուրգ աշակերտ ուղարկելը, այսինքն ճանապարհի ծախքը, մի աղքատ հոր համար շատ ծանր ինողիր ե, բայց մենք կարծում ենք, թէ հայերը անպատար յերթենեկություն ունենալով մայրաքաղաքները, անհնար և թի վենեցին նոցա մեջ բարեկալա և առաքինի անձինք, վոր աղզի առաջազիմության անունով իրենք վիզ առանցին տեղ հասցնել պատահյալը և հայրական ինամարկությամբ տալ նորան մի ընտիր վարպետի, այս կամ այն արհեստի, նայելով առայի ընդունակության և հարմարության։ Մենք կարծում ենք, թէ այս շատ մեծախորհուրդ խնդիր և մեր աղզի վերաբերությամբ Յեթե հոգով չափ ցանկալի յե, վոր կարելի յեղածին չափ շատ աշակերտք ուղարկվին գաղանական վարպոցներ այս կամ այն տեսակն զիտությունը ուրիշելու կամ ընդհանուր լուսավորությունից բաժին ստանալու, մյուս կողմից վոչ նվազ ցանկալի յե, վոր նույն չափով աշակերտք ուղարկվելիքին արհեստ սորվելու։ Տեսական գիտությունը առանց արհեստի սկզբության չեն կարող գործադրություն ունենալ աղզի մեջ։ Յեզ յեթե ամենայնիվ աղզի աղզի աղերակը չե շինվել Փելիխուփայի ձեռքից չե գալիս այս կամ այն գործիքը շիներ վորին մեծապես կարու և աղզի յերկրագործությունը և վաստակարարությունը, փելիխուփան չե կարող հօգալ և շինել և վոչ մինը այն լաներից, վորոնց չեն աղզի աղամատ և այսոր աղզի կյանքի տարապայման խեղճության։ Յերանի թէ մեր ձայնը արձագանք գտներ բարեկալա սրտերում և մի քանի աշակերտք բերելով մայրաքաղաքները, ուրիշներին ել խրամույթ և բարի որինակ զանկային Տասը տարի, լոկ շարունակ հոգաբառությունը այս մասին կարող և բոլորին կերպարանափոխ անել աղզի տնտեսական կյանքը և յերջանկացնել սորան Յերանի թէ մեր ձայնը չանցներ վորպիս «Ճայն բարբառ ուր յանապատի»։

ամեն բանն ել իրան իրան գալիս ա. մենք յերկուսիցն ել զուրկ ենք, ևս մի հիջու յերեսին ենք մտիկ տալի. աստված մի արացե կամ կարկուտը տա, կամ թրթուռը փչացնի, կամ տարին չքեր ընի, սոված կոտորվիլ պահնք, մեր մասին եր վոր կա, ամեն բան նրան յադի ա, յեփած կերակուր ա, մարդ, շուն, կատու, դուրդ ու զուշ, ինչքան աշխարքում ժժմունք կան քոմմա ել ուսում են, կեսը անփող հենց ճամփորդներին ենք տալի կամ աղքատներին. և լավ ա հա խեր ա ըլնում, քաղքումն ամեն բանն ել փողով ա, գեղցուն ել ունի վճ, մերն ա վոր մեջտեղը փչանում ա, Մարդս մի յերկու կով ենք պահում, թե յերեխանց մածուն ել ա ընի, են ել չենք կարում յուա տանել, ամեն բան փողով ենք առնում:

Ինչի պիտի այսպես լինի Աշտարակի վիճակը: Յեկ միայն Աշտարակը չե. Աշտարակը յերջանիկ գեղերից մինն և տակալին. նորանից անհամեմատ աղքատները և խեղձերը կան: Ահա, թե ինչ և պատմում մեղ արդո հեղինակը. «Վոր ըխտավորը Մողնու գեղումն ա վեր յեկած, իրանց բարեկամի կամ ճանաչի տներումը, նըրանց մատաղների երին եւ մորթին ել, զմակի կես փայը, մատաղի կես փայը, վոտ ու գլուխն ել տան տիրոջն ա: Բոլոր գեղը տասնութ տուն ա, ամեն մի տան տասը տասնուհինդ տընվոր կըլնին վեր յեկած. ընենց տուն չի ըլնիլ սրանցում, վոր ևս իրեք որը իրան տարեկան զալուրմին անի լոչ, բրդին հո, ել հեսար չկա. ըտով ել չեն կշտանում մողնեցիք, իրանց յերեխերն ել քշերն ընչանք լիս, ցերեկն ընչանք իրիուն մի մին քերեղաններ ձեռներին մատաղ են կիտում, իրանց աղքատ ու խեղճ ասելով. սրտաբաց ըխտավորն ել սուրբ Գեորգի դուռն յեկած աղքատին

հո չի կարող հետ դարձնիլ... Մողնեցիք անբան են... թե վոր նըանք վոնց վոր ևս մատաղ հավաքելու համար են աշխատում իրենց բան ու գործին կենային, հիմի ամեն մինը մի խան կըլնել. աստված տվել ա, ամեն բաները լավ, հանդները շատ, իրանք անբան» (յեր. 157):

Ճշմարիտն ասելով, մեղ անհասկանալի յե այս յերեւոյթը, վորովհետեւ հեղինակը վկայում է թե մողնեցոց ամեն բաները լավ են և հանդները շատ: Թեև արցոց հեղինակը ցույց է տալիս մեղ նոցա ծուլության վրա, բայց մինչև այդ աստիճանի ծուլությունը մեղ նույնպես անհասկանալի յե: Արդյոք մի ներքին վերք չկմ այլաեղ, վոր խանգարում է տնտեսական կյանքի ընթացքը: Թե այսպես և թե այնպես վողբարնական ընթացքը: Թե բայց այսպես վողբարնական ընթացքը:

Յերեկի թե մողնեցոց վիճակից լավ չե և կարբեցոց և հանավանքցոց վիճակը, յերբ նոքա այգեքաղի ժամանակ 5—6 հարյուր հոգի գալիս են Աշտարակ տյայի քաղելու, յերբ Վարդիթերի հայը տասն այդպիսի մշակ տուան արած տանում է իր այգին ամեն մինին իր քաղակովը մին հավադ խոստանալով:

